www.բնագիր.am

ժամանակակից հայ գրականության հավաքածու @նթերցողի համար

6

Խմբագիրներ՝
Վիոլետ Գրիգորյան
Վահրամ Մարտիրոսյան

ԲՆԱԳԻՐ 6-ի հրապարակումը հովանավորել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը:

Երեւան | 2003

www.բնագիր.am

Վարդան Ջալոյան
Կարելի է պատկերացնել, օրինակ, «Անմեղության կորուստը հայ գրականության մեջ» խորագիրը կրող մի հետազոտություն սիրային ժանրի մասին:

Արփի Ոսկանյան
Մինչև հասա մետրո, արդեն ինն ամսական հղի էի:

Վիոլետ Գրիգորյան
Չեմ կշտանում՝ էլի ասեմ.

Գևորգ Թումանյան
Զոռով
Գրել պետք չէ:

Վահան Իշխանյան
մեկ էլ՝ ես որ նստում եմ գրելու սեղանի դիմաց
ինքս ինձ ասում եմ
հակոբիկ անկեղծ եղիր,
հակոբիկ անկեղծ եղիր,
հակոբիկ քեզ չխաբես:

Լևոն Ջավախյան
Նախագահական ընտրությունների թեժ օրերն էին:

Կարեն Մխիթարյան
Որտե՞ղ մնաց ձեր խոստացած ժողովրդավարությունը. բոզեր, հասկանու՞մ եք քանի շիշ կառնեի էդ փողով...

Սոնիա-Սանան
ես լուցկիներ կը վառեմ
ու մէջս կիներ կը
փնտռեմ

Կարինե Գասպարյան
Ամեն անգամ երազիդ «Փարոսի» օգնություն ես ստանում

Անահիտ Ադամյան
Քեզ կին կդառնամ մի ուրիշ կյանքում
իբրև մի թիթեռ,
տարեկանի հաց:

Արման Գրիգորյան
Հեղինակը չգիտի, որ գրամեքենան սպանել է գրիչը, իսկ ինտերնետը՝ թուղթը:

Սամվել Յավրյան
Ուրախ եմ ես երեկոյան
Ատամներս բերանումս,
Աչքերս ճակատիս,
Մազերս դեմքիս...

Անահիտ Հայրապետյան
Դու չես մտածում, չէ՞,
Որ փորձում եմ ինչ-որ բան փոխել
Այս անչափ նեղ մոլորակում

Միհեր Բեյլերյան
Երրորդ հարկում, ճիշտ է, դիակ կա, բայց դա դեռ ոչինչ չի նշանակում

Մարինե Պետրոսյան
Գարուն ա անձրև ա գալիս

Արմեն Ֆօն Գեւորգյան
Մի անգամ մեր քաղաքի երկնակամարում մի մեծ գդալ հայտնվեց:

Ֆորում
Կարդալուց հետո Վիոլետի վերջին գրածը, իմ մօտ հաստատվեց նաեւ մի այլ եզրակացություն, շիկահերներն ու կապուտաչեաները մեզ մօտ առաջացնում են քսենոֆոբիայի եւ քսենոֆիլյայի քոմպլեքս,..

Հարութ Սիմոնեան

նման պահերին էր, որ նայում էի վեր՝ Մատենադարանի բարձունքին, փորձելով տեսնել, թե Մաշտոցի դեմքին ինչ արտահայտություն կա: Բայց ամեն անգամ ամբոխը տեսադաշտս փակում էր:

Մարինե Պետրոսյան

www.բնագիր.am

Արփի Ոսկանյան

Այստեղ ապրել են

Գլուխս կախել էին պատին: Բոլոր ծակոտիներից արցունքների կաթիլներ էին կախվել: Մարդիկ նայում էին ու ասում.

– Այսպիսի շոգ վերջին անգամ եղել է անցած դարում:

– 67 թվին:

– 68, – ճշտեց միջին տարիքի տիկինը, որ ձեռքին խառը կանաչու փունջ ուներ:

– Դիմագծերի ինչպիսի համաչափություն, – ասաց անդեմ մեկը, – կատարելության տիպար:

– Նայե՛ք, այստեղ գործ ունենք կերպարի իդեալականացման հետ, – ասում էր արվեստի պատմության դասախոսը ուսանողներին, – նման դեմքեր կյանքում չեն հանդիպում:

Ծխող տղամարդուն դեմքը ծանոթ թվաց, բայց չէր կարողանում տեղը բերել:

Ուսանողուհիներից մեկը հեծկլտաց:

– Հիվա՞նդ ես, – անհանգստացավ դասախոսը:

– Ինչո՞ւ է լացում, – փորձելով զսպել արցունքները՝ հարցնում էր ուսանողուհին, – ո՞վ է նեղացրել:

– Չի լացում, քրտնել է, – ասաց դասախոսը:

– Շատ շոգ է, – ասաց խառը կանաչիով կինը, – այսպիսի շոգ...

– Ի՞նչ է սա 45-ի շոգի համեմատ, – ընդհատեց մեդալազարդ, կարկատած բաճկոնով ծերուկը, – դուք չեք կարող հիշել, այն ժամանակ երևի ծնված էլ չէիք...

– Ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ, – դողդոջուն ձեռքերը դեպի նա պարզած՝ ասաց պառավը, – դա մոռանալն անհնար է...

– Ինչպե՞ս չեք տեսնում, – ուսանողուհին չէր կարողանում զսպել արցունքները, – նրան նեղացրել են, նա դժբախտ է:

– Արևային հարված է, – ասաց խառը կանաչիով կինը:

– Երբ վերադարձանք Բեռլինից, – շարունակում էր ծերուկը, – ծարավ էինք:

– Գիշերները քնել չէր լինում, – ավելացրեց պառավը:

– Ի՞նչպես չեք տեսնում, – գոռում էր ուսանողուհին, – ինչպե՞ս չեք տեսնում:

– Գնա տուն, – ասաց դասախոսը:

– Գիշերները սպիները նվվում էին:

– Սիրած աղջիկներից շատերը չէին սպասել:

Ուսանողներից մեկի աչքերը քրտնեցին:

– Սա ի՞նչ համաճարակ է, – բացականչեց դասախոսը, – քե՞զ ինչ եղավ:

– Ոչինչ, – ասաց տղան, – պարզապես գեղեցիկ է:

– Հինգ տարում դեռ շատ գեղեցիկ բաներ եք տեսնելու, ամեն մեկի վրա որ լացեք, պետականներից կտրվելու համար արցունք չի մնա:

– Շոգ է, – ասաց խառը կանաչիով կինը:

Պառավը ինքնամոռաց տարուբերում էր գլուխը.

– Ամուսինս քնի մեջ գոռում էր...

Չէ՛, տեղը չի բերում: Չէ՛:

– Ես եմ մեղավոր, – ասաց տղան, – նա կարող էր ապրել:

Ծխող տղամարդը միզելու ցանկություն ունեցավ:

– Սովորական դեմք է, – ասաց՝ նետելով ծխախոտն ու շրջվելով:

– Վերածննդի վարպետներից թխած:

– Ոչ մի արտառոց բան:

– Այսպիսի դեմքեր Երևանում թափած են ամեն քայլափոխի:

– Չես կարողանում ազատվել զգացողությունից, թե ճանաչում ես:

Պառավը տարուբերում էր գլուխը:

www.բնագիր.am

– Որովհետև այն տիպականացված է, – ասաց դասախոսը, – տիպականացված ու իդեալականացված:

– Իդեալականը Բաղրամյանի վրա կանգնողներն են, – ասաց ծիծաղեցնելու ցանկությամբ տառապող մի անցորդ՝ շարունակելով ճանապարհը նեղացած, որովհետև ոչ ոք չծիծաղեց:

Տղամարդը հեռանում էր գլուխը կախ՝ վախենալով նայել շենքերին, որ քայլում էին հակառակ ուղղությամբ:

– Այո, – ասաց ծերուկը, – դա մոռանալն անհնար է:

Պառավը տարուբերում էր գլուխը:

– Շոգ է, – ասաց խառը կանաչիով տիկինը:

Ես հոգնեցի ու փակեցի աչքերս:

Տանս դուռը փակ էր: Բանալին կորցրել էի ու երջանիկ էի: Նայում էի պատուհաններիս՝ փորձելով կռահել ներսում ապրողի մասնագիտությունը, նախասիրությունները, կարգավիճակն ու հոգեվիճակը: Հետո հոգնեցի ու ցանկացա տուն գնալ: Բայց տանս դուռը փակ էր, ու բանալի չկար: Պետք էր մի ճար գտնել: Գնացի ճար որոնելու ու որովհետև չգտա, ստացվեց, որ հենց այնպես թափառեցի: Բոլոր խանութները մտնելով, կոշիկներ ու զգեստներ փորձելով, հարցնելով ամենատարբեր ապրանքների գները՝ հասա փակ շուկա: Այստեղ էլ հանդիպեցի նրանց՝ տելեպուզիկներին: Վեց-յոթ հոգի էին՝ տարբեր չափերի ու գույների: Համբուրում էին իրար վրա դարսած մրգերը, թքոտում, անհեթեթ շարժումներ ու ձայնարկություններ անում վաճառողներին զվարճացնելու համար: Բայց ավելի շատ նյարդայնացնում էին: Հենց ինձ տեսան, հարձակվեցին վրաս ու սկսեցին քաշքշել շորերս: Վաճառողներից մեկը, կարծելով, թե հնարավոր գնորդ եմ, դուրս շպրտեց նրանց շուկայից: Աստիճանների մոտ կանգնել, լացելու ձևեր էին անում:

– Մեղք են, – ասացի վաճառողին, – պետք չէր այդպես վարվել:

– Հեչ էլ մեղք չեն, ամբողջ օրը ոտքի տակ են ընկնում, միմոսություններ անում, գնորդներին խրտնեցնում, – ու, շարունակելով կարծել, թե հնարավոր գնորդ եմ, փորձեց սիրտս շահել, – դուք դրանց մասին մի՛ մտածեք, աներեսներ են, չեք տեսնո՞ւմ՝ ձևեր են թափում:

Տելեպուզիկների տեսքը անպաշտպան էր:

– Ինչո՞վ կարող եմ օգնել, – վերջապես հարցրեց վաճառողը:

– Պետք չէր այդպես վարվել երեխաների հետ:

– Ի՞նչ երեխաներ, – վաճառողը կասկածեց, թե գնորդ եմ, – մուլտիկներ են, էլի, – հայացքում հեգնանք հայտնվեց, – կուզե՞ք՝ հետ կանչեմ:

– Չէ, – ասացի:

– Ոչինչ չե՞ք կամենում, – վերջին ստուգողական հարցը տվեց, թեպետ արդեն կարող էր գրազ գալ, որ գնորդ չեմ:

– Չէ, – ասացի, – պետք չէր այդպես վարվել:

Ու շրջվեցի դեպի ելքը: Թիկունքումս վաճառողների կուտակում զգացի, ականջիս «գիժ էր», «տելեպուզիկներին խղճաց», «առնող չէր» ու այլ փսփսոցներ հասան, քայլերս արագացրի, բայց չհասցրեցի դուրս գալ՝ թիկունքիս փտած պոմիդորների, ձվերի և հատուկ չգնորդներին ռմբակոծելու համար նախատեսված այլ նեխած բաների տարափ տեղաց: Տելեպուզիկները պատասխան նետումների ու հոգով ինձ հետ լինելու շարժումներ էին անում: Երբ հասա իրենց, կախվեցին ոտքերիցս՝ խանգարելով քայլել: Մեզ մի կերպ հաջողվեց փախչել կատաղած վաճառողներից:

Հիմա ինձ տելեպուզիկներն էին տանում: Ես ուժ չունեի հակառակվելու, մանավանդ, որ բանալիս կորցրել էի և գնալու տեղ չունեի: Քաղաքից դուրս եկանք ու քայլում էինք դաշտերով: Տելեպուզիկները թռչկոտում էին, ծաղիկներ քաղում ինձ համար, գետնամորի հավաքում, վազվզում թիթեռնիկների հետևից, մողես բռնում, դոդոշ, բզեզ: Երբ մութն ընկավ, կարգին մոլորվել էինք: Տելեպուզիկները սկսեցին նվնվալ. հոգնել էին, քաղցած էին, մրսում էին և վախենում: Գիրկս էին բարձրանում, թռչում շալակս, մտնում փեշիս տակ, կառչում ոտքերիցս: Շատ մեղք էին: Ես էլ հազիվ էի կանգնում ոտքի վրա, ու մի կերպ հասանք միջնադարյան ամրոցի ավերակներին: Կանգուն պարսպի տեսքը վստահություն ներշնչեց: Մտածելով, որ ներսում ավելի ապահով կգիշերենք՝ մուտք էի փնտրում: Բայց մուտքին դարպաս կար: Ներսից էլ անցուդարձի ձայներ էին գալիս: Մնացյալ ու միացյալ ուժերով սկսեցինք թակել դարպասը՝ ես ու տելեպուզիկները:

– Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, – ձայնեցին աշտարակից:

– Օթևան, – հազիվ լսելի արտաբերեցի ես, – օթևան ենք ուզում:

– Կին է, – ասաց մի ուրիշ ձայն կողքի աշտարակից, – լավիկն է երևում:

www.բնագիր.am

– Հետդ ո՞վքեր են, – հարցրեց առաջին ձայնը:
– Երեխեքս, – հազիվ լսելի արտաբերեցի ես, – երեխեքս:
– Ոնց որ սատանեք լինեն, – պատասխանեց երկրորդը:
– Ուշացել եք, – ասաց առաջինը, – դարպասը փակել ենք:
– Ուշացածներ էլի կան, պարսպի մոտերքում պիտի լինեն, հետները գիշերեք, մինչև լույսը բացվի:

Ոտքերս քարշ էի տալիս՝ պարսպից բռնված, որ չկորցնեմ հավասարակշռությունս ու չշեղվեմ ճանապարհից: Պինդ մութ էր ու էլ ավելի պինդ լուռ, միայն տելեպուզիկներն էին նվնվում: Աշտարակից խոսակցության պատառիկներ հասան ականջիս.

– ...իզուր չթողեցինք, լավիկն էր...
– ...դիվահար էր երևում...
– ...պատմելու բան կունենայինք...

Մի լրիվ պտույտ գործեցի պարսպի շուրջը, բայց ուրիշ ուշացածներ չկային: Հավասարակշռությունը պահել չհաջողվեց. փռվեցի խոտերի վրա ու վեր կենալու ուժ էլ չունեի: Ցուրտ էր: Տելեպուզիկները սեղմվեցին ինձ, ծածկվեցին զգեստիս մնացորդներով, քնեցինք: Գիշերը մեկը շատ էր նվնվում, ձեռքս տարա, որ հանգստացնեմ՝ լիզեց:

Զարթնեցի ու սարսափեցի. տելեպուզիկները գայլերի էին վերածվել՝ ամենահսկական: Ամայի դաշտ, միջնադար, շուրջս՝ քնած գայլեր: Մեկը՝ որի վրա ձեռքս դրել էի, զարթնել ու ինձ էր նայում անթարթ, փայլուն աչքերով, որոնցից անհնար էր կռահել, թե ինչ է մտածում:

Արթնացա: Լվացվեցի ու, թևերս պատեպատ խփելով, թռա խոհանոց: Ժանգոտ թակարդը մուկ էր ընկել: Գեղեցիկ մուկ էր՝ թակարդի տակ փռված, ինչպես կինը՝ տղամարդու: Կռացա, որ մոտիկից նայեմ, երկար բեղերը դողացին: Դողացին չռված, թակարդի տակից դուրս պրծած ոտքերն ու ձեռքերը: Աչքերը բացեց, նայեց ինձ հիվանդ աղջկա հայացքով: Խոշոր, տխուր, հայկական աչքեր էին: Թուքը կուլ տվեց, փակեց աչքերը՝ կոպերը պինդ սեղմելով, ու կրկին դողացին բեղերը, ոտքերը, ձեռքերը: Իմ ձեռքերն էլ սկսեցին դողալ: Դա ինձ անսպասելի ջղայնացրեց. մուկ է, էլի: Մո՛ւկ: Բացեցի սառնարանը, հաց, պանիր, կանաչի հանեցի, նստեցի սեղանի մոտ ու սկսեցի ուտել ցուցադրական ախորժակով: Մուկը աչքերը բացել, նայում էր՝ ոնց եմ ուտում: Բարի նախանձով: Ընկերական-անչար: Հեզ-խոնարհ: Թուքը կուլ տալով: Ամոթխած: Կերածս բկիս էր կանգնում, ինձ ռասիստ էի զգում, բանվոր դասակարգին շահագործող բուրժուա: Ձեռքերս դողում էին: Հացուպանիրս առա, գնացի հյուրասենյակ, բայց էլի էին դողում: Լսում էի՝ ոնց է շարունակում թպրտալ: Չդիմացա:

Ձեռքերս այնպես էին դողում, որ թակարդը հազիվ բռնեցի: Մուկը նայում էր ինձ մեռնող տատի հայացքով: Աշխարհը ինձ հանձնելով: Հանձնվելով: Էլ չէր վախենում: Կորցնելու բան էլ չուներ: Աչքերս փակեցի ու թակարդը խփեցի գետնին: Ուժեղ: Մի հատ էլ: Նորից: Աչքերս պինդ փակած, պատեպատ խփվելով՝ դուրս եկա խոհանոցից, ձեռքերիս ու ոտքերիս դողն ուժեղանում էր, աչքերս վախենում էի բացել ու փորձում էի փակել ականջներս, որ չլսեմ՝ ոնց է շարունակում թպրտալ:

Տանը մնալն այլևս անտանելի էր: Բայց դուռը փակ էր, ու բանալին չէի գտնում: Դռան վրա չէր: Ու չգիտեի՝ ուր եմ դրել: Ու չկար: Ու լսում էի՝ ոնց է թպրտում: Ու տանը մնալն այլևս անտանելի էր:

Զարթնեցի: Վերջապես: Ինձ նետեցի խոհանոց: Ժանգոտ թակարդի մեջ մուկ կար: Դիմագծերը սկսել էին լղոզվել: Բանալին, ստուգեցի, դռան վրա էր: Հագնվեցի ու դուրս եկա: Փորս գազերից ուռել էր: Քայլում էի փողոցով, ու ամեն քայլի հետ մի քիչ էլ էր փքվում: Մինչև հասա մետրո, արդեն ինն ամսական հղի էի: Անսպասելիությունից վատացա, ուշաթափվեցի: Բարի մարդիկ շտապօգնություն կանչեցին: Ծննդատանը բժիշկներն ասացին, որ ուր որ է կծնեմ: Ծննդաբերությունը հեշտացնելու ու ցավերը մեղմելու նպատակով խորհուրդ տվեցին հեծանիվով մի քանի պտույտ անել: Հեծանիվ քշող ուրիշ հղիներ էլ կային: Մեկի հետ բախվեցի-ընկա: Բժիշկները ծննդաբերությունս հայտարարեցին սկսված: Հրամայեցին կանգնել չորեքթաթ: Ցավ չկար, բայց խնդրում էի, որ կեսարյան անեն: Բժիշկները ծիծաղում էին՝ ասելով, թե ամեն ինչ լավ կլինի, ու ինչ-որ երկաթյա գործիքներ էին մտցնում մեջս: Արգելեցի մկրատ գործածել: Բժիշկներն ասացին, որ ոչինչ կտրելու կարիք չկա, միջինս շատ փոքր է և ուր որ է դուրս կգա: Ինչ-որ մեկը հեռվից գոռաց, թե գլուխն արդեն երևում է: Ոտքերիս արանքով նայեցի. տատս էր: Գլխիվայր:

Վերջապես ծնեցի: Երկար ժամանակ չէին կարողանում որոշել սեռը: Հետո դրեցին գիրկս. փոքրիկ, ռետինից տիկնիկ էր՝ խոշոր, նշաձև աչքերով. ոնց որ այլմոլորակայինի չիր լիներ:

– Կարևորը՝ այնտեղ ոչինչ չկտրեցին, – ասացի տատիս:

Տատս սկսեց ծիծաղել.

www.բնագիր.am

– Տեսա՞ր՝ նույնիսկ չզգացիր: Թե ինչո՞ւ էիր այդքան վախենում...

– Ո՞նց: Կտրեցի՞ն: Դու տեսա՞ր:

– Իհարկե. կտրեցին, հետո կարեցին:

– Ի՞նչ իրավունքով, – գոռում եմ, – ես խնդրեցի կեսարյան անել, բայց չկտրել այնտեղ, ուրեմն ինձ համար կարևոր էր, ի՞նչ իրավունքով...

– Կարևորը, – ասաց տատս, – զավակ ունես, որ սոված է:

– Գոնե կաթ չունենամ, – ասացի, – ո՞նց եմ այս զզվանքին կերակրելու:

– Որ կուրծքդ բռնի, – ասաց, – էլ զզվանք չի լինի:

– Զուգարան եմ ուզում, – ասացի, տիկնիկը հանձնեցի տատիս, ու դուրս եկա: Միջանցքում դասընկերներիցս մեկին տեսա, խոսքի բռնվեցինք, դիսկոտեկ հրավիրեց: Գնացինք: Կես ճանապարհին կարերս սկսեցին մզմզալ, ու հիշեցի, որ ծնել եմ, որ երեխա ունեմ, որ հանձնել եմ տատիս, որ մոռացել եմ, որ հիմա արդեն երևի սովամահ եղավ, որ սկզբից էլ ողջ չէր, որ...

– Չես գալի՞ս, – զարմացավ դասընկերս:

Կանգնել էի ու չգիտեի՝ դիսկոտե՞կ գնամ, թե՞ հետ՝ ծննդատուն: Կրծքերս սկսեցին փքվել մի քանի օրվա դիակի նման, ուռեցին- ճղեցին զգեստս, դուրս պրծան և շարունակում էին աճել՝ սարսափազդու ծավալներ ու ձևեր ընդունելով: Պտուկներս չդիմացան, պատռվեցին, ու սպիտակ շիթը շատրվանեց ապշահար դասընկերոջս վրա, մարդկանց, որ անցնում էին կողքով, ծաղիկների ու ծառերի: Բոլորը ճչում էին ու փախչում: Ես օգնություն էի կանչում, հետո սկսեցի զվարճանալ ու ջրել անցնող-դարձողին: Բայց կրծքերիս աճը չէր դադարում, ու շուտով այնքան մեծացան, որ ես ստիպված էի կրծքի վրա կանգնել, ավելի ճիշտ՝ պառկել: Արդեն ամբողջ մայթն էին զբաղեցրել, ու շարժվելն անհնար էր: Մարդիկ մատով ցույց էին տալիս, մոտենում, խմբվում շուրջս, իսկ կրծքերս շարունակում էին աճել, ու ոչինչ անել հնարավոր չէր:

Զարթնեցի: Պարզվեց՝ դռան զանգից: Քնաթաթախ, պատեպատ խփվելով՝ բացեցի դուռը: Ոչ ոք չկար, բացի դեղին կատվից: Չէի հասցրել բանալին մինչև վերջ պտտացնել, նորից զանգեցին: Ու նորից մարդ չկար: Տհաճ նախազգացումով փակեցի դուռը ու ապահովության համար գցեցի շղթան: Լվացվելիս հյուրասենյակից թաղման քայլերգ լսեցի. ընկերուհիս ու նախկին սիրեկանս, բազմոցին նստած, տաք-տաք վիճում էին: Ուզում էի սուրճ սարքել երեքիս համար, երբ բակում բեռնատար մեքենա կանգնեց՝ մեջը լիքը ժողովուրդ: Առաջինը մայրս դուրս եկավ, հետևից՝ մյուսները՝ մեղուների պես բզզալով: Իրենց հետ սեղաններ ու նստարաններ էին բերել: Շարեցին հյուրասենյակում, ծածկեցին սպիտակ սփռոցներով, զարդարեցին ուտելիքներով: Ընկերուհիս ու նախկին սիրեկանս, իրարից ու ինձնից խռռված, պատրաստվում էին դուրս գալ տնից՝ դուռը շրխկացնելով: Մայրս ինձ ուղարկում էր ափսե-դանակ-պատառաքաղի, աղի ու հացի հետևից, գոռգոռում վրաս, շտապեցնում: Հոգնեցի, դուրս եկա, որ գնամ, ու չէի կարողանում. տանս դուռը բաց էր, ներսում՝ աղմուկ, անծանոթներ: Չգիտեի՝ ինչ անել: Արթնացա:

Զարդասեղանի հայելու վրա սավան է քաշած: Պատուհանը բաց է: Պատի ժամացույցի մեծ սլաքը նայում է նիշերից ինչ-որ մեկին:

ՏՂԱՄԱՐԴ -*(պատուհանի մոտ կանգնած՝ ծխելով)* Ծառերը կանգնած են մեռնում:

ԵՍ - *(բազմոցին պառկած)* Ջուրը քար է տաշում:

ՏՂԱՄԱՐԴ - *(հեգնանքով)* Տաշած քարը գետնին չի մնա:

ԵՍ - Առուն իր ճանապարհը կգտնի:

ՏՂԱՄԱՐԴ - Նույն գետն երկու անգամ չես մտնի:

ԵՍ - Նոր գինին հին տիկի մեջ չեն լցնում:

ՏՂԱՄԱՐԴ - Լավագույն նորը մոռացված հինն է:

ԵՍ - Ոչինչ նոր չէ այս լուսնի տակ:

ՏՂԱՄԱՐԴ - Մինչև չգա վերջինը, չի հիշվի առաջինը:

ԵՍ - Առաջին հացը կուտ է գնում:

ՏՂԱՄԱՐԴ - *(դուրս նետելով ծխախոտը)* Գնա մեռի, արի սիրեմ:

ԵՍ - Շատ մի սիրի, ատել կա:

ՏՂԱՄԱՐԴ - *(մոտենալով բազմոցին)* Շատ մի ատի, սիրել կա:

ԵՍ - Սերը աթարին է կպչում:

ՏՂԱՄԱՐԴ- *(նստելով կողքս)* Սերը հուշ է, սերը փուշ է, ով սեր չունի, նա ապուշ է:

www.բնագիր.am

ԵՍ - Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:
ՏՂԱՄԱՐԴ - *(փոխելով դեմքիս դրված թրջոցը)* Մի գնա քեզ ծիծաղեցնողի մոտ, գնա քեզ լացացնողի մոտ:
ԵՍ - Արյունը արյունով կլվացվի:
ՏՂԱՄԱՐԴ - *(կատակով)* Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման:
ԵՍ - Կա քարեր հավաքելու ու քարեր նետելու ժամանակը:
ՏՂԱՄԱՐԴ - Մինչև շուշանը զարդարվի, պատարագը կվերջանա:
ԵՍ - Ուշ լինի- նուշ լինի:
ՏՂԱՄԱՐԴ - Երկաթը տաք-տաք են ծեծում:
ԵՍ - Լավ է ուշ, քան երբեք:
ՏՂԱՄԱՐԴ - Երբեք մի ասա երբեք: *(վեր կենալով)*
Լռություն: *Ժամացույցի չընկչխկոց*: *Հարևանի դռան զանգ*: *Սառնարանի անջատվելու ձայն*: *Երեխաների խոսակցություն փողոցից*:
ՏՂԱՄԱՐԴ - *(հոգոցաշատ)* Թուլություն, անունդ կին է:
ԵՍ - Ուժեղի մոտ թույլն է մեղավոր:
ՏՂԱՄԱՐԴ - *(ուսերը վեր քաշելով)* Ով աշխատի, նա ուտի:
ԵՍ - Որտեղ հաց, էնտեղ կաց:
ՏՂԱՄԱՐԴ - *(սենյակի մեջտեղում կանգնած)* Աշխարհը դմակ, մարդը դանակ:
ԵՍ - Աչքդ թեքեցիր, բանիդ տերը չես:
ՏՂԱՄԱՐԴ - *(սանրելով մազերը)* Եղունգ ունես, գլուխդ քորի:
ԵՍ - Չունես փող, դարձիր հող:
ՏՂԱՄԱՐԴ- *(մեքենայաբար նայելով սավանածածկ հայելուն)* Փողը փող է սիրում:
ԵՍ - Փողը ձեռքի կեղտ է:
ՏՂԱՄԱՐԴ - *(հեգնական)* Ով կարդա, նա մարդ ա:
ԵՍ - Գրքի գողը գող չէ:
ՏՂԱՄԱՐԴ- Ձվի գողը ձի էլ կգողանա:
ԵՍ - Ձի, ձի, փայտե ձի, մեր դռանը կապեցի:
ՏՂԱՄԱՐԴ- Ձկնիկ, իջիր հատակը, մինչև անցնի վտանգը:
ԵՍ - Աշտարակի պոպոքը, Հմայակի սապոգը:
ՏՂԱՄԱՐԴ - Մեկ, երկու, երեք, ձմերուկը բերեք:
ԵՍ - Մատիտ - տռեմ ճակատիդ:
ՏՂԱՄԱՐԴ - Հոպ, ոռդ՝ չոփ:
Լռություն: *Հարևանի մահճակալի ճռճռոց*: *Զուգարանի ջուրը քաշելու ձայն*: *Գնդակի խփոցներ դրսից*:
ՏՂԱՄԱՐԴ - *(պատուհանից նայելով)* Կատուն կարծեց՝ կեղտը դեղ է, խորը թաղեց:
ԵՍ - *(փոխելով դեմքիս դրված թրջոցը)* Շան հետ ընկերություն արա, փայտը ձեռքիցդ մի դիր:
ՏՂԱՄԱՐԴ - *(մեղավոր)* Շունը մարդու բարեկամն է:
ԵՍ - Իսկական բարեկամը նեղության ժամանակ է իմացվում:
ՏՂԱՄԱՐԴ - *(հետուառաջ քայլելով)* Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է:
ԵՍ - Մարդուն ճանաչելու համար հետը ճանապարհ գնա:
ՏՂԱՄԱՐԴ - Մարդ կա ելել է շալակն աշխարհի, մարդ կա աշխարհն է...
ԵՍ - *(ընդհատելով)* Մարդ էլ կա, մարդ էլ:
ՏՂԱՄԱՐԴ - *(երևալով ավելի փոքր մակերեսով)* Կարևորը մարդու սիրտը մաքուր լինի:
ԵՍ - Սրտում տեղ լինի, կճուճում յուղ կլինի:
ՏՂԱՄԱՐԴ - *(նստելով կողքս, բռնելով ձեռքս)* Քեֆ անողին քեֆ չի պակսի:
ԵՍ - Իմ սև սիրտ, քո կարմիր...
ՏՂԱՄԱՐԴ- *(մեղավոր, ուղղելով դեմքիս դրված թրջոցը)* Կարմիր կովը կաշին չի փոխում:
ԵՍ - *(փորձելով ազատել ձեռքս)* Էշը էշ էլ կմնա, թեկուզ Բեռլին նա գնա:
ՏՂԱՄԱՐԴ - *(բաց չթողնելով ձեռքս, գլուխը փորիս դնելով)* Խոզի գլուխը դրեցին խալու վրա, գլորվեց, ընկավ ցեխի մեջ:
ԵՍ - *(գլուխը հրելով)* Մարգարիտները խոզերի առջև մի՛ թափիր:

www.բնագիր.am

ՏՂԱՄԱՐԴ- *(ձեռքովս խփելով իր գլխին, ինքնախարազանաբար)* Ասողին լսող է պետք:
ԵՍ - Ճաղատը դեղ ունենա, իր գլխին կանի:
ՏՂԱՄԱՐԴ - *(գնալով ավելի ու ավելի փոքր մակերեսով երևալով)* Լամպն իր տակ լույս չի տալիս:
ԵՍ - Ցավը քաշողը գիտի:
ՏՂԱՄԱՐԴ - *(ձեռքս մոտեցնելով շուրթերին)* Աստված սարը տեսնում է, ձյունը դնում:
ԵՍ - Կարկուտը ծեծած տեղն է ծեծում:
ՏՂԱՄԱՐԴ - Արտը խախուտ, մահանան կարկուտ:
ԵՍ - *(ջղային)* Սելը ճռռալու տեղ սելվորն է ճռռում:
ՏՂԱՄԱՐԴ- *(կատաղած)* Ով տռի, ով գնա սանատորիա:
ԵՍ - Աստծունը Աստծուն, կեսարինը՝ կեսարին:
Լռություն: Սառնարանի միանալու ձայն: Հարևանի հեռախոսի զանգ: «Ալլո, լսում եմ, շնորհակալություն՝ լավ, ո՞վ, հա, իհարկե հիշում եմ, ինչպե՞ս եք»: Գնդակ տշելու ձայն դրսից:
ՏՂԱՄԱՐԴ - *(պառկելով վրաս)* Վատ լուրը շուտ է տեղ հասնում:
ԵՍ - *(փորձելով դուրս գալ տակից)* Ուրիշի դժբախտության վրա երջանկություն չի կառուցվում:
ՏՂԱՄԱՐԴ - *(թևերս ոլորելով)* Փոս փորողն ինքն է ընկնում փոսի մեջ:
ԵՍ - Պապն ամեն անգամ գաթա չի ուտում:
ՏՂԱՄԱՐԴ - *(համբուրելով ականջս)* Փորձված աղվեսը զույգ ոտքով է ընկնում թակարդը:
ԵՍ - Մի կրակոցով երկու նապաստակ չես խփի:
ՏՂԱՄԱՐԴ - *(համբուրելով ուսերս)* Մարդու աչքը մի բուռ հողով կկշտանա:
ԵՍ - Կուզիկին գերեզմանը կուղղի:
ՏՂԱՄԱՐԴ - *(քանդելով շապիկիս կոճակները)* Ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում:
ԵՍ - *(դեմքս ցավից ծամածռելով)* Ծիծաղի վերջը լաց է:
ՏՂԱՄԱՐԴ - *(անուժ ընկնելով վրաս)* Լինել, թե չլինել՝ սա է խնդիրը:
ԵՍ - *(տակից)* Ընկերովի մահը հարսանիք է:
ՏՂԱՄԱՐԴ - *(վրայից)* Ահը վեր է, քան թե մահը:
ԵՍ - Մահը մերն է, մենք՝ մահինը:
ՏՂԱՄԱՐԴ - *(արդեն բոլորովին չերևալով)* Մեռելներին թող թաղեն մեռելները:
ԵՍ - Երանի հոգով աղքատներին: *(հոգնելով ու փակելով աչքերս, որ արդեն վաղուց փակ էին)*

Պատին ուրիշ գլուխներ էլ կային՝ տղամարդկանց. մեկը մորուքավոր, մյուսը թրաշված: Մեկը աջ կողքիս, մյուսը՝ ձախ: Վրայովս իրաքյան պատերազմն էին քննարկում: Հենց աչքերս բացեցի, բարի գիշեր մաղթեցին իրար: Մորուքավորն իսկույն սկսեց բազմաձայն խռմփացնել: Թրաշվածը նայեց ինձ չտեսնելու պես ու նույնպես փակեց աչքերը: Երկու դեմքն էլ ծանոթ էին, բայց տեղը չբերեցի: Մութ էր: Փողոցում մարդ չկար: Միայն վերևում լուսինն էր՝ անորոշ օրեկան: Հեռու-հեռվում հազիվ նշմարվող մեկը հեռանում էր: Բայց երբ սկսեց ավելի լավ նշմարվել, հասկացա, որ մոտենում է: Անշտապ, հաստատուն քայլերով եկավ, կանգնեց դիմացս, ու նոր միայն տեսա, որ գլուխ չունի: Հագուստից էլ դժվար էր կռահել՝ տղամարդ է, թե կին:

– Ո՞վ ես, – բացականչեցի զարհուրած:
– Անգլուխ անցորդ եմ, – ասաց:
– Ի՞նչ ես ուզում, – հարցրեցի տանտիրոջ պես:
– Դու լավ գիտես, – պատասխանեց, ու նկատեցի, որ իմ շուրթերն են շարժվում:
– Անհնար է, – բացականչեցի, – անհնար է... Օգնությո՜ւն...

Ափով փակեց բերանս.

– Տեսնո՞ւմ ես՝ ձեռուտ ունենալն իր առավելությունն ունի, – ափը հեռացավ բերանիցս ու սահեց մազերիս վրայով, ճակատիս, աչքերիս: Ձեռքը կանացի էր, բայց տղամարդու պես էր շոյում, – ո՜նց էի կարոտել քեզ...
– Ո՞վ ես, – ասում եմ՝ աչքերս հաճույքից կիսափակ:
– Ես եմ ախր, չես ճանաչո՞ւմ, ես եմ՝ դու:

Ձեռքերը տարավ-բերեց, հանեց բլուզը. փոքրիկ, ցցուն կրծքեր ուներ՝ մեծ, մուգ պտուկներով, որ նման էին աչքերի:

– Տեսնո՞ւմ ես՝ դեռ ջահել եմ ու ցանկահարույց, – ասաց:
– Ինձ ի՞նչ:

www.բնագիր.am

– Դեռ խելքի չե՞ս եկել: Գնամ, մի քիչ էլ թափառե՞մ: Իբր հանճարեղ ես, բայց տարրական բանը չես հասկանում. գլուխն առանց մարմնի ոչ ոքի պետք չէ:

– Գլուխ մի՛ արդուկիր: Որ այդքան մեծ կարծիքի ես իմ մասին, ինչի՞դ եմ պետք:

– Հիմար գլուխը չեղածից լավ է:

Թրաշվածը ծծեր տեսնելու ձրի հնարավորությունից աշխուժացել, մորուքավորին արթնացնելու փորձեր էր անում:

– Հագնվի՛ր, – ասացի, – փողոցում ես:

– Ինչի՞ց ես վախենում, մեկ է՝ անվնաս են: Թո՛ղ նայեն: Ես արժանի եմ նրան, որ ինձ նայեն, որ ցանկանան ինձ, որ սիրեն:

– Եվս մի քանի տարի, ու կփտես:

– Ո՞նց չես ուզում հասկանալ, որ ես դու եմ, -գոռաց՝ կրծքերը թափահարելով, – այդ մենք ենք փտելու, ոչ թե ես, մե՛նք, ու հենց միայն դրա համար պետք է ապրել:

– Հերիք էր, – ասում եմ, – հոգնեցի:

– Մեզ դեռ կարող են սիրել, մենք դեռ կարող ենք...

– Չէ, – ասացի, – միայն ոչ դա:

– Հնարավոր չէ փախչել կյանքից, հնարավոր չէ փախչել սի...

– Չէ, – գոռացի, – ոչ դա, ոչ դա, ոչ դա, ոչ դա...

– Լավ, լավ, – ամուր գրկեց հեծկլտացող գլուխս ու սեղմեց կրծքին: Մեծ, տաք պտուկը մտավ բերանս: Չէի կարողանում հանգստանալ: Պտուկը գնում-գալիս էր բերանումս՝ խուտուտ տալով: Կծեցի ու ճչացի: Տաք շիթը ցայտեց քիմքիս: Արցունքներս հոսում, լցվում էին բերանս: Փակեցի ու սկսեցի ծծել. գոլ, թթվաշ կաթը լցվեց ուղեղիս մեջ: Աչքերս փակ՝ հաճույքից ու ցավից մռռում էի:

– Սերս, – շշնջում էր նա իմ շուրթերով, – ո՞նց էի կարոտել քեզ, ո՞նց էի կարոտել, արի էլ չկռվենք, – ասում էր, – մեզ ոչ ոք պետք չէ, ոչ ոք...

Մորուքավորն ու թրաշվածը ապշահար նայում էին:

– Գնանք տուն, – ասաց՝ գլուխս պատից պոկելով, – այստեղ ցուրտ է:

– Բանալին գտե՞լ ես, – հարցրեցի:

– Բանալի՞ն, չէր էլ կորել:

Մուտքում մութ էր, ու բանալին դուռը չէր բացում: Նա սեղմեց զանգի կոճակը:

– Ինչի՞ ես զանգում, – գոռացի, – ո՞վ պիտի բացի, ո՞վ:

Ձեռքերը սկսեցին դողալ: Մեկը խոթեց գրպանը, մյուսում ես էի՝ ցնցվող:

– Ամեն ինչ լավ կլինի, – ասաց, – կարևորն՝ իրար հետ ենք, ամեն ինչ լավ կլինի, ամեն ինչ...

Դուռը ոչ ոք չբացեց: Իրար գրկած՝ նստել էինք սառը հատակին:

– Չծխե՞նք, – ասաց՝ բերանս սիգարեթ դնելով ու վառելով:

Կրակից դուռը շողարձակեց: Լուցկին փչեց ու արագ փակեց աչքերս:

– Ի՞նչ էր, – ասում եմ, – թող տեսնեմ: Ես պիտի տեսնեմ, – ասում եմ, – թո՛ղ:

Չէր թողնում: Մյուս ձեռքով փորձում էի պոկել մատներն աչքերիցս, չէր ստացվում, ասես ներաճած լինեին գանգիս մեջ: Ամուր սեղմել էր ինձ կրծքին: Սիրտը խփում էր արագություն հավաքող շարժիչի նման:

– Թող տեսնեմ, թող, – ասում էի, բայց մատների արանքով արդեն տեսել էի. դռան վրա ցուցանակ էր փակցված՝

ԱՅՍՏԵՂ ԱՊՐԵԼ ԵՆ

2003թ.

www.բնագիր.am

Կարինե Գասպարյան

Փող… փող… փող…

Կ. Կյանք, համերաշխություն, հարգանք.
Ա. Փո՜ղ… փո՜ղ… փո՜ղ…!
Կ. Հարգանք, հարգանք, հարգանք.
Ա. Փո՛ղ… փո՛ղ… փո՛ղ…!
Կ. Հարգանք, հարգանք, հարգանք.
Ա. Փողով հարգանք… փողով հարգանք… փողով հարգանք…!
Կ. Առա՛նց, առա՛նց, առա՛նց, միայն հարգանք, հարգանք, հարգանք.
Ա. Խե՛նթ… խե՛նթ… խե՛նթ…!
Կ. Կյանք, համերաշխություն, հարգանք, առողջություն, սեր
Ա. Խե՛նթ… խե՛նթ… խե՛նթ…!
Կ. Հույս, հավատ, սեր
Ա. Փո՛ղ… փո՛ղ… փո՛ղ…!
Կ. Ով ես դու? ինչ ես դու?
Ա. Արծագանք… գանք… գանք… գանք…!
Կ. Սխալ ես դու
Ա. Ճիշտ… ճիշտ…ճիշտ…!
Կ. Հարազատ, մոտիկ, բարեկամ
Ա. Փո՛ղ… փո՛ղ… փո՛ղ…!
Կ. Դու ծաղրում ես ինձ?
Ա. Ո՛չ… ո՛չ… ո՛չ…!
Կ. Իմ ձայնի արձագանքն ես դու?
Ա. Այո՛… այո՛… այո՛…!
Կ. Հապա ինչու չես կրկնում իմ բառերը?
Ա. Փո՛ղ… փո՛ղ… փո՛ղ…!

Դու (ա)

Դու մի ցնդած պոետ ես,
Եվ քո շուրթերից
Նախադասության հոտ է գալիս,
Իսկ երբ չես խոսում,
Ես իմ ականջներով որսում եմ
Լռությունը, որ կաթում է օդից:
Քո բոլոր բանաստեղծությունները
Հանրահաշվին են նվիրված,
Եվ փոխանակ գրես իրական բաների մասին,
Դու գրում ես «Երգ բազմապատկման եւ բաժանման մասին»:
Պարզվում է՝ քո բոլոր կոտորակները
Պոչեր ունեն, իսկ արմատները՝ եղջյուրներ,
Իսկ քո ուղիղ անկյունները 91° են հավասար:
Ցավալի է, բայց փաստ, որ դու
Մի ցնդած պոետ-մաթեմատիկոս ես,
Իսկ ամենացավալին այն է,
Որ դու քեզ արվեստագետ ես համարում:
Ի՜նչ հիանալի կապ կա պոետիզմի
Եվ հանրահաշվի միջեւ:
Ըստ իս՝ մեկ անգամ մեկ հավասար է մեկի,
Չունենք այլ պատասխան,
Սակայն կարող ենք փիղը
Տանձով բազմապատկել:
Ութից հանենք հինգ, կմնա երեք,
Բայց եթե սիրուց մենք զայրույթ հանենք,
Արդյունքում, արդյոք, կստացվի՞ մի բան:
Վերցնենք մի եղնիկ եւ մարգագետին,
Կստանանք պարտեզ:
Մենք հաշվել գիտենք, բայց եւ հաշվելիս
Պիտի իմանանք՝ ինչն ինչով հաշվենք:
Դու մի ցնդած պոետ ես,
Եվ քո շուրթերից
Թվաբանության հոտ է գալիս,
Որն ես ատում եմ:

Ես

Ես քեզ համար մի ապակյա տիկնիկ էի,
Որ դու սիրում էիր դնել հեռուստացույցի վրա,
Ժամերով կնստեիր ու միայն նրան կնայեիր
Ու կասեիր՝ «Գեղեցիկ ապակի է ու որակյալ»:
Դու շատ հավաքածուներ ունեիր՝
Եվ հախճապակե, եւ կոբալտ,
Որոնց մեջ ես ինձ զգում էի
Մի կեղտոտ ու չսանրված մոխրոտ:
Եվ մի օր իմ մեջ մի ապակյա միտք ծագեց՝
Ազատվել քեզանից՝ թեկուզ փշրվելով,
Միայն թե փախչեի քո որակավորող ճիրաններից,
Քանի դեռ չէի խամրել ու խեղդվել քո ծխախոտի
Գործարանային ծխի ամպերից,
Որոնք միշտ բռնում էին իմ կողերից, կսմթում
Եվ փորձում այդ կերպ ինձ զվարճացնել:
Եվ սակայն միայն այդ ծուխն էր ինձ հասկանում,
Բայց իր հարաբերական փոքր խտության պատճառով
Անկարող էր իր ձեռքերի մեջ ինձ փախցնել քեզանից:
Եվ ճարահատյալ՝ ես մի օր այնպես լացեցի,
Որ ապակյա արցունքներս թափվեցին
Հատակին՝ քո առաջ:
Դու, իհարկե, բարկացար, բայց ո՞վ էր քեզ խնդրել
Հեռուստացույցը միացնել իր ամբողջ
Ձայնի ուժգնությամբ, որի դղրդոցից էլ
Իմ լացը եկավ:
Ի տարբերություն քեզ, ես ուրախ էի

www.բնագիր.am

Եվ ծաղրում էի քեզ իմ վերջին շնչում:
Ահա եւ իմ վերջը, փա՜ռք Աստծու...

Դու (բ.)

Դու մի քարե կերտվածք ես,
Բայց շենք չես,
Քանզի ի տարբերություն վերջինիս
Զուրկ ես պարունակությունից:
Նույնիսկ քո մտքերն են ահից քեզ լքում,
Սարսափում են, որ մի օր կիրք են դառնալու,
Եվ գերադասում են քո շուրջը սավառնել,
Միայն ոչ քո մեջ բնակվել:
Եվ այդ պատճառով է, որ դու շատ վաղուց
Ոչ մի միտք չունես եւ ամեն ինչ
Մեխանիկորեն ես անում:
Ահա քո սերը, ուրախությունը, հաճույքը
Որպես զարդ դրված են սեւ դաշնամուրի վրա,
Իսկ վախդ, ատելությունդ եւ ոխդ
Մերթ թավալվում են գետնին,
Մերթ օդում շուրջպար բռնում
Փոշու կաթիլների հետ:
Կարոտդ դուրս է թռչում լուսամուտից
Եվ միախառնվում օդում ճախրող
Աշնան երփներանգ տերեւների փնջին:
Շուտով, շատ շուտով շողքդ էլ քեզ կլքի,
Ինչպես ամեն բան, որ հատուկ չէ տեսիլքին:
Դու այժմ էլ տեսիլք ես,
Միայն թե շնչող ու արտաշնչող:
Քեզ համար օրվա ամենասիրելի եղանակը
Գիշերն է, այն պահը, երբ կրկին
Շրջմոլիկ գիշերաթիթեռի պես նետվում ես
Սիրահետելու բյուրավոր գիշերային ծաղիկների:
Երբեւէ մտքովդ անցե՞լ է,
Թե ինչու ես դու այդպիսին:
Օ՜, ներողամիտ եղիր, քարե կերտվածք,
Որ քեզ հարցրի,
Չէ՞ որ վաղուց քո մեջ ոչ մի միտք չի բնակվում:

Բոլորից թաքուն մի տարածություն

Այրելը էությունն է կրակի,
Հոսելը էությունն է ջրի,
Ապրելը էությունն է բոլոր կենդանի առարկաների:
Հավիտյան կլինի կրակը,
Հավիտյան կլինի ջուրը,
Հավիտյան կլինի կյանքը,
Իսկ մենք կլինե՞նք:
Չկա մի վայր, ուր կրակ չլինի,
Չկա մի վայր, ուր ջուր չլինի,
Չկա մի վայր, ուր մարդ չլինի,
Ո՛չ, կա՝ իմ մտքի տիեզերքում:
Ես մտքի տիեզերքն եմ,
Ես տարածություն եմ չբնակեցված,
Աղաչո՜ւմ եմ, ինձ մի բնակեցրեք,
Ոչինչ մի տեղավորեք իմ մեջ:
Ոչ անուն, ոչ տարիք, ոչ սեռ,
Ոչ կահույք եւ ոչ էլ ժամանակ,
Ոչ մարդ եւ ոչ էլ երթեւեկության կանոններ:
Ոչինչ իմ մեջ մի տեղավորեք,
Մի՛ բնակեցրեք ինձ:
Ինձ մի կահավորեք:
Իմ մեջ մի լցրեք ո՛չ ջուր, ո՛չ կրակ,
Եվ մի դարձրեք ինձ բաբախող երակ:
Եվ թողեք մնամ ես տարածություն
Մաքուր վիճակում, չարատավորված,
Չբնակեցված:

Ովքեր են մեռելները

Նորից այդ երգն ես երգում՝
Ռադիոյով լսած,
Մրմնջում ես ու նկարում,
Վրձինդ հոգնել է պարապությունից,
Կտավներդ՝ սարդոստայն բռնել:

Հիշողությունդ քեզ դավաճանում է,
Չես կարողանում հիշել տեսածդ բնանկարը,
Ուզում ես կրկնօրինակել,
Լավ է, որ չի ստացվում:
Երբեմն անիծում ես քեզ, որ նկարիչ դարձար,
Պատռում ես կտավներդ դանակով,
Ձղայնանում ես, որ սոված ես, ծարավ.
– Ինչ է նկարիչը հաց չի՞ ուտում:

Վերնիսաժում նկար չես վաճառի,
Տուրիստները չքացել են,
Միայն նրանք էին գնում,
Նրանք էլ չվել են տաք երկրներ:

Ձմեռը վրա հասավ, սովը՝ մյուս կողմից,
Ուշագնաց ես լինում մի կտոր հացի
Բացակայության պատճառով:
Գոնե լավ է երազները փողով չեն,
Եթե փողով էլ են, ապա միայն մեքենայի տեսքով:
Ամեն անգամ երազիդ
«Փարոսի» օգնություն ես ստանում,
Ծանր-ծանր բերում ես տուն,
Բայց արթնանում ես վրադ դրված

www.բնագիր.am

Անավարտ կտավի ծանրությունից:
Քո գործն էլ գործ չի, կյանքդ՝ կյանք:
Գիտեմ, մի անգամ փորձել ես ինքնասպան լինել,
Բայց ճիշտ ժամանակին եմ օգնության հասել:
Գոռում էիր վրաս, որ չթողեցի մեռնես,
Հետո փաթաթվեցիր ինձ ու հեկեկացիր:
Ասում էիր, որ սիրում ես ինձ
Ու չես ուզում միայնակ ապրել:
Ես չէի հասկանում կամ չէի հավատում,
Որ կսիրվեի, կգնահատվեի,
Ինձ միայն նվաստացնում էին,
Ինքս էլ չգիտեմ՝ ինչու:
Բայց հիմա կարեւոր չէ ոչինչ,
Հիմա ես էլ չկամ, դու էլ:
Այստեղ լավ է, միայն թե մի քիչ
Նեղվածք է երկուսիս համար,
Բայց կարեւորը՝ էլ դու մենակ չես մնա,
Չես սովածանա ու ինքնասպան չես լինի:

Հիշու՞մ ես մեր թաղումը,
Մարդիկ հարցնում էին, թե ովքեր են մեռելները...
Հիմա մենք ապահով ենք,
Մեկ-մեկ ծաղիկներ են բերում մեզ համար,
Խունկ ծխում, մաքրում են մեր քարը:
Այստեղ ամայի է, եթե չհաշվենք մեզ՝
Ստորերկրյա բնակիչներիս,
Միայն մարդու շունչը
Թաղումների ժամանակ ենք առնում, մեկ էլ ծաղիկ բերելիս...
Լսեք, պարոն, պարո՛ն, դուք ինձ լսու՞մ եք,
Չէ, չի լսում, վատ է, որ ձայնի
Իրավունքն էլ ենք կորցրել:
Մուտքին մոտ գտնվող հարեւաններս
Պահակից լսել են, թե իբր նախագահ են փոխում,
Ի՞նչ տարբերություն Քոչարյանը կլինի,
Թե Դեմիրճյանը, մեզ համար միեւնույնն է,
Մեզ այստեղ թողել են, գնացել,
Ոչ հոգ են տանում, ոչ գերեզմաններն են մաքրում,
Դեռ մենք նոր ենք, բա հարեւաններս ինչ ասեն:
Է՜, ջղայնանում եմ, մի հիշեցրեք,
Այստեղ էլ բերեցին էլի աշխարհից չպրծա:
Բա էրեխեքը. հոգի են կանչում:
Այն օրն էլ ինձ էին կանչել,
Բախտները բերեց, հոգնած էի, գնացի:
Է՜, բա չես ասում, ես այստեղ աշխատանք էլ ունեմ,
Հա՛, դերասան եմ...

Վահան Իշխանյան

այցեքարտ

տեսնես ինձ կհասնի՞: սոնան բաժանում ա լրագրողներին տրցակով այցեքարտեր: սոնան՝ ջոնի օգնականը: էս էլ քոնն ա վահան: ռեզինով կապված այցեքարտերի տրցակը: կենտրոնում մեծ-մեծ Vahan ISHKHANYAN: տակը՝ reporter: ես աշխատանքի եմ ընդունված: նյութերիս տակ առաջ գրված էր correspondent, հայերեն թարգմանությունում՝ armenianow արտահաստիքային թղթակից: իսկ ում անվան տակը անգլերենում reporter, հայերենում՝ armenianow թղթակից: correspondent -ը արտահաստիքային, reporter-ը հաստիքային: ես արտահաստիքից վերջը հազիվ դարձա հաստիք: մի տարի ա արդեն, որ աշխատում եմ Ջոնի հետ, միշտ հոդվածներս գովում ա, բայց աշխատանքի չի ընդունում: յանկիի խասյաթ ա, երեւի ուրիշներին էլ ա գովում: գրածները զարդարում, դզում, սարքում կուկլա story ու գովում: գործ ա էլի, հայաստանում լրագրություն ա զարգացնում: ինչ որա յա: կարեւորը՝ գործի ընդունեց: արդեն ինձ ոչ թե աշխատանք ունենալ էր հետարքրում, սենց թե ընենց ամեն նյութիս 75 դոլար տալիս էր, իսկ հիմա՝ վահան, դու կստանաս ամիսը 220 դոլար ու 4 նյութ կտաս, այլ աշխատանք ստանալով գնահատվելը: յանկիի կողմից: թե չէ ջահելությունը ու տարեց մի կին՝ դավոլնի, լրագրողուհի reporter-ներ են, որ գրում են զապդնի սծիլով:

իսկ ես արտահաստիքային թղթակից, որ մի ինֆորմացիայի համար պախատ ա անում էրեւանի էս ծերից մյուսը՝ էս ծերում բրուցելոզով հիվանդը՝ նորք, էն ծերում հակահամաճարակայինի դեկանը ու հանրապետական անասնաբուժական լաբորատորիայի վարիչը՝ էրեբունի: ու ճիգերս չեն գնահատվում: մեկ տարի անհրաժեշտ եղավ, որ լսեմ՝ վահան, դու այս ընթացքում արժանացար իմ վստահությանը, քեզ աշխատանքի եմ ընդունում: գողի, բոզի կասկած էր ունեցել երեւի: թե՞ տեռորիստի: իռլանդական ծագումով էս ամերիկացին, որ դուբլինի հյուրանոցում իմացել էր հոկտեմբերի 27-ի մասին՝ «երեք տարի է անցել այն օրվանից, ինչ աշխարհն առաջին անգամ հանդիպեց նահիրի հունանյանին եւ ազգային ժողովում կրակ բաց արած չորս այլ հիմարների հետ», armenianow, 26 october: ամեն 30 անց հայի երեւի մի տարի պիտի փորձարկի, որ պարզի տեռորիստ չի, այսինքն, հիմար կամ էլ գող կամ բոզ:

ու հաճելի անակնկալ՝դեռ reporter-ի հետ նոր զարդարանք՝ վերջապես այցեքարտ էլ ունեցա: երկու էրնեկ մի տեղ: ի՜նչ ունենալ՝ մատուցեցին: այցեքարտի անկյունում կարմիրը մի ուրիշ սոլիդություն ա տալիս, վրան՝ ArmeniaNow.com, Now-ն սպիտակ, մնացածը սեւով: վերեւից սպիտակ մանր՝ published every Friday: տակից էլի մանր սեւով Independent Journalism From Today's Armenia: մյուս անկյունում հասցեն address: 26 Parpetsi St., No 9 Phone: +(374 1)532 422 email: info@armenianow.com internet: www.armenianow.com: այցեքարտը տալիս՝ մի որպես, ու սեւ թանաքով կավելացնեմ 395419, սա էլ տանս համարը:

կյանքում առաջին անգամ այցեքարտ: իսկ ես կարծում էի երբեք չեմ ունենա՝ կդիմանամ գայթակղությանը: որ հատուկ իմ համար էլ սարքեն՝ կմերժեմ: Միակ սկզբունքս, որ իներցիայով պահպանում էի, կոտրվեց՝ էս էլ քոնն ա վահան: երեւի վաղուց էր կոտրվել ու նոր իմացա, երբ տվին բուռս: սրանից հետո կդիմանամ՝ բայց չունենալու գայթակղությանը:

գիտե՞ս վահան մարդ ինչու է այցեքարտ պատրաստում, որ իր անձի արժեքը բարձրացնի: ինքնասիրահարվածության ցուցադրում է: դրա համար էլ ես երբեք կյանքում այցեքարտ չեմ ունեցել: հակոբ կարապենցը: նրա խոսքը իմ կարծր սկզբունքը դարձավ, մի սկզբունք, որ թվում էր՝ մինչեւ կյանքիս վերջ կպահեմ: եւս մի հատկանիշ մարդկանցից տարբերվելու: ու ես որոշեցի երբեք այցեքարտ չունենալ: ու տարիների հետ ես ավելի շատ մարդկանցից էի սկսում տարբերվել: էս ի՞նչ ա՝ այցեքարտ ես պատվիրե՞լ, ու ամեն մեկի պատասխանի մեջ բռնացնում էի սեփական անձի արժեքի ցուցադրումը՝ գիտես միշտ պետք ա գալիս, ու որ բռնացնում էի կայֆ էի ստանում: երբ ինձ ինչ-որ մեկը այցեքարտ ա տալիս ես հրճվանքով ասում եմ՝ գիտեք ես չեմ կարող իմը տալ, չունեմ: ու՝ ոչինչ, ոչինչ պատասխանը ինձ կայֆ ա տալիս:

իսկ հիմա մի ուրիշ կայֆ՝ սա ձեզ ու կպարզեմ նոր ծանոթիս անկյունում կարմիր, մեջտեղը մեծ-մեծ Vahan ISHKHANYAN: ու հակոբ կարապենցը չկա, որ ասեմ պարոն կարապենց հիշու՞մ եք, որ եկել էիք երեւան, ինձ ասեցիք այցեքարտի մասին: մինչեւ հիմա չեմ ունեցել, իսկ դուք ունեցա՞ք:

մուշեղ իշխանի մասին ո՞վ կպատմի: գուցե մեկնումեկին խնդրենք արտասահմանից նյութ ուղարկի: անելկա, լսե՞լ ես հակոբ կարապենց: ամերիկահայ գրող ա: իմացա, որ երեւանում ա: իրան խնդրենք: հա լսել եմ: բայց չեմ կարդացել: ես մի պատմվածք եմ կարդացել: գրական թերթում մի շաբաթ առաջ էին տպել՝ որ գնաք հայաստան արարատին բարեւ տարեք: շատ դուրս եկավ: համ էլ դաշնակ ա, մուշեղ իշխանն էլ ա դաշնակ: լավ անպայման գնա

www.բնագիր.am

գտիր: ու նյութս տեսք կունենա:

14 տարի առաջ: 89 թվին էր: բեմ ամսագիր: խմբագիրս անելկան, որ էդպես էլ չհասցրեց ինձ թատերական մեկնաբան դարձնել ու դարդից մշակույթի նախարարի տեղակալ դարձավ: թատերախոսություն՝ մուշեղ իշխանի կիլիկիո արքան: թատերական ամսագրում թատերախոսություն: ոնց էլ գրել էի առանց թատրոնից ջոկելու: ձեռս չեմ ուզում վերցնեմ, որ սիրտս չխառնի: ներկայացումը հիմա չեմ հիշում, հիշում եմ մասիվում էր՝ ռեժիսորի հետ հարցազրույցը՝ արտաշես հովհաննիսյան, մեկ էլ՝ հրամայական բառը գրածիս մեջ: առիթ էր՝ օգտագործեցի: երեւի հիմիկվա աչքով մի քաք էլ ներկայացումն էր:

ու հոդվածիս կողքը հանկարծ լինի կարապենց, ոնց կզարդարի: սովետը դեռ չի քանդվել ու դաշնակ գրողը ամերիկայի ձայնի թղթակից, անդրօվկիանոսից հայտնված գուրու , ճիշտ ա, հիմա արդեն լեգալ, գրական թերթում արդեն տպվող, բայց ամեն դեպքում: երկու տարի առաջ ձեռդ առնեիր նրա մի հոդված թեկուզ, կկարծեիր, թե ուղեղդ լուսավորվեց: իսկ հիմա հյուրանոցի համարն ես հավաքում՝ ալո պարոն կարապենց դուք եք: այո:

հրավիրեց հյուրանոց արմենիա՝ եկեք վաղը առավոտյան ինձնի, կզրուցենք: գիտեք, ես մուշեղ իշխանի մասին վատ գիտեմ, ու դժվար թե կարողանամ որեւէ ձեզ համար հետարքիր նյութ տալ: գիտեք կարող եք դիմել, ու՞մ ասեց հիմա չեմ հիշում: ուզում էի արդեն գնալ: զբաղվա՞ծ եք: չէ առանձնապես: ինչ զբաղված, բեմ ամսագրում իրեք տարում իրեք համար, բայց աշխատավարձս ամեն ամիս չոտկի՝ 125 ռուբլի: դե միասին գնանք: հետո եկավ վահրամ հաճյանը՝ տոլի սփյուռքահայ ավանտյուրիստ տոլի բանաստեղծ: տաքսի պատվիրենք: ու ամբողջ օրը միասին էինք: երկու- թե երեք անգամ փորձեցի պոկվեմ, կարապենցը չթողեց: նայի քրիստոսին նման է՝ տաքսու մեջ կարապենցը ասեց հաճյանին: ու ես դեմքս շրջեցի, որ ցույց տամ: հեչ պետքը չէր: հաճյանին քրիստոս չէր հետարքրում, այլ հայ մտավորական, մեր մեծերը, կճանչնա՞ս համո սահյան, ո՞չ, ափսոս է, կծանոթացնեմ, անցյալ տարի բերած էի, լավ պտտցուցի, լաս վեգաս տարա, գրանտքանյոն տարա, մետրոպոլ տարա:

ես լավ էի զգում, որ ինձ կարապենցը պահում ա: դարձա ակամա ախպար ուղեկցող: հայ մտավորականներին այցելություն՝ սարյանի տուն թանգարան, տնօրեն շահեն խաչատրյանին՝ հետեւի սենյակում այգում հաճյանը հուպ էր տալիս հաց պանիր խաղող՝ շատ կսիրեմ ու աչքերը դուրս էին թռչում, հետը իր բանաստեղծությունից տող մը ասում: շահենը պիտի ամսվա վերջում հաճյանի հրավերով մեկներ ամն: մայամի բիչ քեզի պիտի տանեմ: վահրամ, կըլլա՞ կին մը կրծքերին ափերս այսպես դնեմ՝ ու էրկու բուռը թարս մեկնեց հաճյանին: ի՞նչ մեկ, ի՞նչ երկու, միանգամեն չորս կին, կըլլա՞: ինձ մեկը կբավե:

ինչ-որ պահից հաճյանը չկար: հետո՝ ակադեմիա, արվեստի ինստիտուտ՝ լեւոն հախվերդյան, գրական թերթ՝ մելոյան:

մեկ էլ արդեն մութ էր: կարապենցը հարցրեց ուր պիտի գնաս՝ ընկերներիս տեսնեմ: գնացինք ալիկ արզումանյանի գործի տեղը: հայտնվեց պասկը պատերը գրկելով՝ տղան հարբած է: ծանոթացեք բանաստեղծ տիգրան պասկեւիչյանը, հեռուստատեսության նախագահի տեղակալ: էս մեկը սուտ էր, էրկու տարի հետո պասկը պտի պաշտոնի հասներ, երբ առողջ ուժերը գային իշխանության:

էդ օրվանից ուրիշ չեմ հիշում: մեկ էլ որ՝ ինձ հարցեր էր տալիս ես պատասխանում էի: հարցերը չեմ հիշում, իր ասածներից էլ 3 նախադասություն՝ այցեքարտը ու մեկ էլ՝ ես որ նստում եմ գրելու սեղանի դիմաց ինքս ինձ ասում եմ հակոբիկ անկեղծ եղիր, հակոբիկ անկեղծ եղիր, հակոբիկ քեզ չխաբես: եւ երրորդը, որ կարծեմ նաեւ ինչ-որ տեղ կարդացել եմ՝ լրագրությունը ինձ համար դրամ վաստակելու համար է, գրականությունը սիրելի զբաղմունքս: մեկ էլ զգացողությունը՝ կարապենցից տարածվող հանգստությունը, որ նրա ներկայությունը չէր կաշկանդում: ուրիշ անվանի մարդիկ, մանավանդ արվեստագետ, էն տարիքում՝ 17-27, ինձ շատ էին կաշկանդում, իրենցից երեւում ա, որ աստծուց տրված տաղանդավոր են, շարքային չեն, ուզում ես դուրները գաս, ինչպես աստծուն ես ուզում դուր գաս պատվիրանները կատարելով: իսկ կարապենցը՝ հակոբիկը, ինքն էր իմ ընկերությունը փնտրում, չգիտեմ խի: տաղանդավորների առաջնությունում երրորդ լիգա էլ չէի մտել: սովորած-չսովորածս էլ մեկ էֆենդու դասախոսություններն էին՝ երբ պետրարկան բռնեց կնոջ ձեռքը ու նավակից ափ իջեցրեց, այդ պահից սկսվեց վերածնունդը, մեկ էլ հորս քերականությունը՝ նախադասությունը ոչ թե երկու գլխավոր անդամ ունի՝ ենթակա, ստորոգյալ, այլ մեկ՝ խոնարհված բայը: իսկապես, ես ի՞նչ խեռս էի. միակ արժանիքս, որ ռաֆայել իշխանյանի որդին էի՝ ծանոթացեք ռաֆայել իշխանյանի որդին է: իսկապե՞ս, ձեր հորը շատ եմ հարգում, նա մեր ազգի համար մեծ գործ է անում: բայց էստեղ էլ ռազմիկ դավոյանի ու հրանտ մաթեւոսյանի տղերքը ինձ կրած ունեին: ու փոխանակ իրեն ուղեկցեին գրող-մտավորականներ արթուր անդրանիկյան ախպարագիտության թեկնածու(թեման՝ ախպարը՝ փոխարկելի վալյուտա) կամ ռազմիկ դավոյան՝ ախպարագիտության դոկտոր(թեման՝ ախպար հմայելու մեթոդիկա) ես անկապ արանք էի ընկել:

www.բնագիր.am

վերջին անգամ կարապենցը հիշ-ի համագումարում էր, ռոլանդ շառոյանի հետ: բարեւեցի երկուսին ու վերջ: ես ինչ ախպար ուղեկցող, իսկականը շառոյանն էր՝ հեռանկարային դաշնակ, համ էրգրի մասին գրող, համ էլ գյուղում նահապետական ազգուտակ, որտեղ կարապենցին կիյուրասիրեն գյուղական մածուն՝ բոստոն սենց անմահական բան կերե՞լ ես:

մինչ համագումարը պասկը մի քանի յանիմ առաջադեմ երիտասարդներով հանդիպում էին կազմակերպել կարապենցի հետ: ես չգնացի: ու շատ փոշմանեցի: խի՞ չգնացի՝ արհեստական, երեւի ինձ թվացել էր, որ կարապենցի վրա զիլ տպավորություն եմ թողել ու դա պահպանվի, հանկարծ քաքմեջ չանեմ: ու ալիկի հետ գնացինք լակելու: իբր տես-տես՝ խմելը ավելի կարեւոր ա քան գրողի հետ հանդիպումը:

վերջինը երեւան հյուրանոցի ռեստն էր: ինչի՞ց էինք խոսում, հարբած-հարբած, կողքի սեղանից մեկը խառնվեց, ալիկը չոտկեց՝ արա քեզ ով էր խնդրել տեսակետ ասես: կռիվ չեղավ: հետո դուրս էկանք, մտանք հյուրանոց, որ զանգենք: երեւի խմելը շարունակելու տեղ: ֆոյեում դեմքեր էին նստած: ալիկը սրանց հետ վեճի մտավ: ի՞նչ էր ասում: մեկը տեղից ուզեց հելնի: երեւի ավտարիտետն էր՝ ձեռով պահեց: լավ ա, որ պահեց, կռիվ չի լինի ու մի կողմի վրա սպասում եմ, որ պրծնեն: մեկ էլ՝ զխկ՝ տվին: ո՞նց հայտնվեցի փողոցում: աբովյանի մեջտեղը չորս կողմից տալիս են: մենակ գետնին չընկնեմ, որ քացու տակ չգցեն: ինձ պահում եմ: կամ հարվածները հավասարակշռության մեջ են գցում: մեկ էլ աչքս ընկավ հյուրանոցի մուտքին: ալիկը փռված ասֆալտին: ալիկին ոտ ու ձեռից տարանք ներս՝ բազմոցին: տփողների հետ: ալիկ, ի՞նչ էղավ: ալիկ չկա, աչքերը չի բացում: պուլսը տեղն ա: չի մեռել: դույլով ջուր են լցնում: չկա: շտապ օգնություն: նասիլկով ալիկ ենք տանում: հենց պիտի մտցնենք ավտոն ալիկը տեղից թռավ ու վազեց աբովյանով ներքեւ: ես հետեւից: ինձ տար անոյենց տուն: ինչ անո: դերասանուհի անոն: կիսագրկած տանում եմ: անոն դուռը բացեց քիչ մնաց ուշքը գնա՝ ոնց որ ճակատից՝ արյունը ալիկի ունքից էրկուսիս ներկել ա: նորից շտապ օգնություն: դու՞ք էիք մի քիչ առաջ էլի կանչել: մասիվի հիվանդանոցում ալիկի ունքը կարում են: տենց էլ չհասկացա ցավազրկող ներարկե՞լ էին: որովհետեւ ամեն ասեղ խրելու հետ ալիկը գոռում էր՝ յոթը: յոթը ի՞նչ կապ ուներ: հետո պարզվեց, որ նկատի ա ունեցել մաշտոց ամսագրի յոթերորդ համարը, որ սկրեպով դակելով կարում էինք: մաշտոցի յոթը՝ վրան սիմոն զավարյան «եւ եթէ ազգերի մեջ բարձր դասն է, որ կճոխացնէ մայրենի լեզուն, մեզ մոտ...», որ տարածում էինք ազատության հրապարակում: յոթի դակոցը ու ասեղի խրվելը ունքին՝ ասոցիացիաներ էին տվել:

հետո, որ մակ-ի ներկայացուցիչն էր ալիկը, հետո հայաստանի արտգործնախարար, էկրանին քիփ մոտենում էի ու ասում՝ որ լավ նայեք հոնքի կարը կտեսնեք: որ պրեզիդենտ դառնար, տեսնես, ալիկը ինձ կգյուլլե՞ր: ասում են ստալինը կամոյին մաշնի տակ գցեց, որովհետեւ կամոն աջուձախ պատմում էր ստալինի ջահելության արկածները:

ալիկի հետ ընկերությունը ավարտվեց, երբ դառավ հիշ լրատվականի պետ: ու որ շիշը ձեռիս մտա հիշ ալիկի լրատվական, այսինքն ալկաշ ընկերոջս մոտ, 2 պլասմասայի բաժակները լցրի: ալիկը գոռաց՝ կարող ա քո համար ըստե բար ա: վայ ես քո՝ ու բաժակները հերթով ալիկի վրա: պլաստմասան. փետուրի նման թռան ընկան:

հետո իրար հաջորդող նոր ընկերներ, որոնց հետ մեզ իրար կապում էր արաղը: ճիշտ ա ասում հայ մտավորականի տիպար մերուժան տեր գուլանյանի ժամանակակիցը՝ գրիգոր խաչատրյանը՝ լավագույն ընկերը բաժակի ընկերն է: ու լավագույն ընկեր կորցնելը սովորական էր արդեն, մի լավագույնը թարգում էր՝ նոր աշխատանք, ընտանիք-երեխա, գրանտ ու պաշտոն՝ բուրժուական փափուկ կենցաղ, հետո մի ուրիշ յանը տարած գտնվում, որ յանը իմ ու արաղի հետ տեղը բերի: ամբողջ կյանքս վերածվել էր ապրելու նախապատրաստության... խմելուց հետո: ձմեռը սպասում ես թեժ գարնանը, որ ծուլված ամբոխին ցնցես ազգային ժողովի ճաղերը: ամառը սպասում ես թեժ աշնանը, որ ամբոխի թափի հետ նախագահին թռցնես պալատից: քաղաքը մի քանի րոպեով քոնն ա դառնում, ահա նա, արա հետը ինչ ուզում ես: լսել եմ բիսմարկն ասել է (կամ ուրիշն ա ասել, կարեւոր չի)՝ ով մինչեւ 30 տարեկան հեղափոխական չի սրիկա է, ով 30-ից հետո հեղափոխական է՝ սրիկա է: ես արդեն երեսունն անց՝ ութ տարի սրիկա եմ: իսկ պասկը, ալիկը, մյուսները այդպես էլ սրիկա չեղան, ճիշտ տարիքում հեղափոխական, ճիշտ տարիքում կառուցողական: միշտ սրիկայի հակառակը:

իսկ հիմա էլ սրիկա չեմ լինի, ի՞նչ լյումպեն: յանկի խմբագրի մոտ աշխատանք՝ էլ ի՞նչ խմել: 38 տարեկանում նետվում եմ բուրժուազիայի գիրկը: ճիշտ ա էժան գնով, էրկուհարյուր դոլարով, բայց հայկական բուրժուազիայի գինը էս ա, դեռ ավելի էժանով էլ տվող կա: մերն ուրիշ ա:

տունս կաֆելը խփել եմ, խանութում ջոկում եմ կաֆել փայլացնող հեղուկ՝ domestos առնեմ, թե՞ emsal, պարսկականները լավը չեն: թանկից էժանը չկա: կավրոլիտը փռել՝ հյուր չգա որ կեղտոտ կոշիկներով կավրալիտիս վրա չքշի: չնայած sanyo փոշեծծիչ եմ առել ու փոշիները իրեք չորս օրը մեկ մաքրում եմ: էս էրեւանը շատ փոշոտ քաղաք ա՝ փոշին մաքրում ես նորից նստում ա, չնայած լուսամուտներս եւրո՝ ձայնա եւ ջերմա մեկուսիչ: ապակիները մաքրում ես window cleaner-ով: ariston-ը կախել՝ մշտական տաք ջուր, երբ ուզում ես մտի տակը,

www.բնագիր.am

ինտերնետի բաժանորդ. իմ փայ բուրժուազիան, մի քիչ ուշացած, որի համար պիտի վճարես: պահանջները, որ ծնվում են, սկսում են աճել: ավտո չունենա՞մ, հիմա առանց ավտո դժվար ա: չէ, էդքան էլ տենց չի, որ՝ լրագրողին ու գայլին սնում են սեփական ոտքերը: էլի թող սնեն, բայց որ աշխատանքից մեկ-մեկ շատ ես հոգնում, ուզում ես քաղաքից դուրս գալ: մեքենան՝ հայկական երազանքը ընթացքում կսնեմ փողով, որ մի օր հայաթս կայնած լինի:

մնում էր կայուն աշխատանքը: ուրեմն ըստեղից-ընտեղից հոնորարը քիչ ա, մեկնումեկն էլ գրանտի ժուռնալիստական փայից յա տա, յա չտա: աշխատավարձ էր անհրաժեշտ, որ աճելու հեռանկար ունի:

կհեռանամ յանը տարած ողբերգական դշերից, որոնք հոգու վերքերը արվեստի չափառների մոտ են փորձում բուժել: որ մարդու ջեբը փող ա մտնում-դուրս գալիս կլիրը ավելի բարձր տեղ ա կանգնում:

մի օր էլ կասեմ՝ յա բեզ գարյաչեյ վադի նե մագու, սրանք ոնց էլ ապրում են: ու մենակ բողոքեն: աշխատեք էլի: ձեր ձեռը ո՞վ ա բռնել: ես պիտի՞ քո փոխարեն աշխատեմ: սենց ժողովուրդ կլնի: մենակ միտինգ անեն:

վահան ինչ ես անում, չգնանք մի թաս խմենք: չէ վարդան ջան, նյութ ունեմ գրելու: միշտ էլ խմել գրել էիր, քեզ ինչ էղավ: չէ ապե, հիմա պիտի կանտրոլս պահեմ, պախմելյայով գրածը էն չի, էդ անտերը ստիպողական չի: ու ֆերեշեթը կորցնում ա մի լավագույն ընկեր, մորուքը ձգձգելով մնում մոլորված՝ ում գտնի, որ հետը բաժակը գլուխը քաշի ու հետը հիշի օղորմած էֆենդուն՝ հանգիստ, նայի աչքերիս մեջ: ֆերեշեթի շուրթերին մնացած էֆենդու ֆրազները ու զակուսկու՝ հաց ու երշիկի փշուրները: հիշու՞մ ես որ նոր տարուց առաջ գնացինք էֆենդու մոտ: կիսատ շիշը հանեցի էֆենդին գժվեց՝ դուրս՝ դու էս կիսատ շշո՞վ ես էստեղ գալիս: բայց ես լիքն էլ էի հանելու: քունիր վարդան, բայց լիքը չէիր ուզում հանես: ու էֆենդու հիշատակը գլխին քաշելուց հետո՝ բորխեսի նոր հատորներ են տպվել էրկուսը ունեմ, երրորդը չեմ ճարում: արա բա սաղ հատորները չառա՞ր: հա առա, բայց էս ուրիշ հրատարակություն ա: էս նոր երեք հատորյակի մեջ մի նամակ կա, որ նախորդների մեջ չկար: չէ, ֆերեշեթ գնա ուրիշ սօբուտիլնիկ ճարի, իմ հոգին էլ արաղը չի ոռոգում: բա ախպեր, դու առանց այցեքարտ մնացիր: էս հազար դրամը առ, տղերքով կխմեք:

ջոնի լավն էն ա, որ լավ նյութը գնահատում ա դու էլ գլխառադ չես ուզում անես: ու որ գլխառադ չանես, վախենում ես արաղի հոտից: ջոնը լրագրության միսիոներ քաղաքական մուտիլովկայի հայկական մամուլում. «մեկ աժ նախագահ արմեն խաչատրյանին կոմունիստ նորիկ պետրոսյանն է փայտե գլուխներ դարձնում, իր հերթին արմեն խաչատրյանը արդարանում է, «իմը հաստատ փայտե գլուխ չէ, ձերը միգուցե», մուտիլովկա «առավոտից»: ջոնի ժուռնալիստիկայից հայ խմբագիրները գյոթ են կպնում, ինչպես ամենայն հայոց կաթողիկոսը եհովայի վկաներից: քեզ ասպարեզ տվեց, որ ինքնագոհ դառնաս, էսքան տարի խմբագրից լավ խոսք չլսած ականջս զարմացավ՝ էս նյութիդ լավն էն ա, որ սրճարանների շատանալու մի պատճառ չես գտել, այլ մի քանի բոմբիկներ՝ ասում ա ջոնը ու թուլանում ա պրեզիդենտականի ճաղերը ճոճելու ցանկությունս՝ թող ուրիշները ճոճեն ես նայեմ ու օբյեկտիվ գրեմ. այսինքն երկու կողմի կարծիքն էլ հարցնեմ՝ «դա մի խումբ չկայացած քաղաքական գործիչների սադրանքն է, որոնց իշխանության գալու ամբիցիաները իրենց հանգիստ չեն տալիս: նրանք չեն կարողանում հաշտվել մեր երկրի տնտեսական զարգացման, նոր աշխատատեղերի բացման իրողությունների հետ: նախագահը թույլ չի տա, որ երկրի սահմանադրական կարգը խախտվի, անկարգությունների կազմակերպիչները կպատժվեն օրենքի խստությամբ, – ասում է նախագահի խոսնակը: «էրեխիս կոշիկ չեմ կարում առնեմ որ դպրոց գնա, աղջիկ էրեխա յա, ոնց ա ամաչում, որ կարգին շոր չունի: հելը առանց դասագիրք ա մնացել էլի ոչինչ: դպրոցից ամեն օր փող են հավաքում, լուսի վարձը մի կողմից, կնիկս պոչկեքը քայքայվել են՝ ես որտի՞ց ամսական տասը հազար դրամ դեղի փող տամ: սովետի վախտով տասը տարի սվարչիկ եմ աշխատել, 16 կվարտալի շենքերի արմատուրեքը ես եմ իրար կապել: տունս նեղություն չի տեսել: քանի տարի աշխատանք չունեի, մի հատ ճարեցի՝ ամիսը 20 հազար դրամ, իրեք ամիս աշխատի գործը կայնավ: ո՞ր ծակը փակեմ՝ աղջիկս մեծացող՝ պիտի նորմալ սնվի՞: տղես բանակում անցյալ տարի ցրտից մինինգիտ էր տվել: ճակատը թարախակալել էր: կամանդիրին ես որտուց փող տամ, որ գոնե մի անգամ տուն թողնի: ով ուզում ա լինի մենակ էս իշխանությունը փոխվի, – ասում է ցույցին մասնակցածներից մեկը, որ հրաժարվեց իր անունը տալ»: իհարկե նրա քաղաքական մեկնաբանությունները չեմ դնի՝ գյոզալ երկիրը քանդին, սաղ թալնին, բա էսի պրեզիդենտ ա՞, երկիրը իրեք հոգու մեջ բաժնել ա, ինքը թազա զուգարան բացեն էթա լենտը կտրի, ես դրա թուրք ...

ու կաֆելը-կաֆել, բայց քաղքենի դառնալու համար ինձ էս աշխատանքն էր պակասում: թե չէ լրագրությունը թողնել-չթողնելու արանքը մենակ օղին էր լցնում: հեղափոխությունը տարեթիվը չի ավարտում, ամեն մարդ մի օր կամ ավարտում կամ էլ էս աշխարհը չդզած հողին ա հանձնվում:

կյանքը հեռանկար է գծում: ու ընկերության ժամանակաշրջանը ավարտվում է: լավագույն ընկերության: ես այցեքարտ եմ ներկայացնում: հաջորդը սոտվին կլինի՞: իսկ գուցե ռոբին ընտրե՞մ: ու այդպես՝ պիզդեց:

հոկտեմբեր, 2002թ.

www.բնագիր.am

Գևորգ Թումանյան

*

Հայերենը ինձ համար
Ամենահուսալի ճանապարհորդական
գործակալությունն է:
Իմ միակ փոխադրամիջոցը՝
Դեպի վերուվար,
Դեպի ներսուդուրս,
Դեպի Աստված:
Իմ արկածների, խիզախումների ասպարեզը.
Իմ ցնծուն-թախծոտ վերելք-վայրէջքների լեռը.
Իմ կինը, իմ որդին...

Ջերմային երևույթների ակցիա

Տաքուպաղից
Մեր խոհանոցի մի պատի կեսը բորբոսնել է:

Ահա,
Երկիր մոլորակի մի մանրակերտ:

*

Հաճախ,
Միաժամանակ մի քանի գիրք եմ կարդում:

Եվ ի՞նչու սկսեցի
Միաժամանակ մի քանի բանաստեղծություն գրել:

*

Ի՞նչ խաս նախագահացուներ
Իրենց շքախմբերով մեր քաղաք եկան:

Զարմանք...

Ոչ մեկի մտքովն անցավ
Հանդիպել ինձ:

*

Այսօր ֆրանսերեն եմ երգում,
Եվ ինչ կարևոր է, որ չգիտեմ այդ լեզուն:
Հորինովի բառերիս մեջ ժե, ղե տառերի շաղախ:

Առավոտյան այդ երգը լսեցի.
Կիրք էր, հոգի...
Եվ ամբողջ օրը
Պատառոտում է ինձ:

*

Ինչ-որ մի քոլեջում
«Հավանականությունների տեսություն» եմ
դասավանդում:

Ոչ,
Աշխատում եմ խեղկատակ
Եվ դեռ վարպետության չհասած գազանազուսպ:

Մայրս, ես, Գոծիլան, ամերիկացիները, Սադամ Հուսեյնը և Բուշը

Առավոտ է:
Ես Գոծիլա ֆիլմն եմ նայում:
Մայրս տնային գործերով է զբաղված:

Ամերիկյան ընտրելագույն զորամիավորումները
Նյու-Յորքը ներսից-դրսից զրահապատել են.
Ժրաջան ուղղաթիռներ, դիպուկահար կործանիչներ,
Մանհեթընի ջրերում՝ մեծղի շնաձուկ-սուզանավեր:

Գոծիլան ավերածություններ է գործում:

Մայրս մի պահ էկրանին է նայում:
– Տես, մամ, – ցույց եմ տալիս մողեսին, -
Սադամի արարած գաղտնի զենքը,
Ջանգվածային բնաջնջման զենքը:

Մայրս նայում է, նայում և ասում՝
Դե ինչ, Բուշը խո գիտեր:

*

Մի գիշեր իմ սրտին

Հանգիստ,
Քնահարամ ես անում:

Ահագնացյալ խփոցներդ
Ոչ կնոջ համար է,
Ոչ՝ հայրենիքի,
Ոչ՝ Աստծո:

Հանգիստ,
Քնել է պետք:

*

1

Ես հասկացա... կամ կուզեի,
Որ գրելը ինձ համար լիներ ինքնաճանաչում:

Եվ եթե չի գրվում -
Գուցե վե՞րջ:

www.բնագիր.am

2

Ձոռով
Գրել պետք չէ:

Կստացվի Երկիր մոլորակի պես
Խոցոտ մի բան:
Բայց ինչ հրաշք...

*

Ես քեզ առավոտյան շուկայում տեսա:
Դեղձ ու ծիրան էիր ընտրում:
Ասացիր, որ սպասում ես հյուրի:

Հիմա ես անհամբեր
Սպասում եմ հեռախոսի զանգին:

*

Կեսգիշեր

Հայրս խռմփացնում է:

Կյանքում
Երկու-երեք աննշան խորհուրդներ է
Ինձ տվել:
Չեմ էլ հիշում:

Իսկ գունագեղ խռմփոցները
Շատ եմ լսում:
Եվ ի՞նչ խորհուրդ դնեմ դրանց մեջ:

*

Խզարն առած
Ես ու հայրս փետ կկտրենք.
Ոչ մի մորեխ չբուսնավ
Ռիթմը պահելու:

*

Ճրթճրթալեն տերևների դեզ կվառվի,
Ծուխը ջղոտ-ջղոտ կելնի վեր:
Ողջակեզի դեռ չէի եղել...

*

Կարգ է,
Որ մատաղացուն երեք անգամ
Պտտցվի եկեղեցու շուրջ:
Շատ անգամների պես
Էս մեկին էլ են քաշելով տանում:

*

Տեր հայրը
Նորապսակներ կօրհնե:

Տեր հայրը
Կծփծփա երանությունից:

Գործընկերոջ սկուտեղում
Թղթադրամներ կավելնան:

*

Երբ մութ է, և քայլում եմ՝
Ստվերներս ուղեկցում են ինձ...

Մեկ առջևից,
Մեկ ետևից՝ երկար ու կարճ,
Մեկ էլ աջ-ձախերից շրջապատած,
Հետս համաքայլ, համերաշխ
Ստվերներս ուղեկցում են ինձ:

Ավտոներ կուգան, կերթան,
Լապտերասյուներ վերևից նայող,
Լույսեր են իմ վրա բեկբեկում՝
Նոր ստվերների ծնունդ տալով:

Ստվերներս կթրթռան, կպարեն
Մայթերի, ծառերի վրա,
Ինձ թվում է՝ ես էլ ստվեր եմ՝
Նրանց պես մեռնող-հառնող:

*

Ցրտահարվել է ներշնչանքիս ծառը
Ցմքած անարև պտուղներ միայն

*

Երբեմն այնքան անկիրք եմ
Չեզոք և ունայն
Որ եթե մեկը սրբազան միջամտությամբ ինձ հրի
Կընկնեմ Նիրվանա

*

Ուսանողական տարիներիս
Հեծանիվ ունեի
Երիվարս սրբազան
Եվ վարգում էինք Արարատյան աշխարհով

*

Ծույլ և անբան ուսանողներս

www.բնագիր.am

Երբեմն ստում են

Ես նրանց ասել եմ
Եթե ստում եք
Գոնե արվեստով ստեղծագործաբար

Հարսանիք

Դա մի մեծ բերան էր
Կենաց էր ասում խմում խժռում
Կենաց էր ասում խմում խժռում

Հայտարարություն

Մեծ սիրով և ջանասիրությամբ
Կաշխատեմ ընթերցող

*

Նա միջակ բանաստեղծի պերճ նմուշ է
Ընդհանրապես չի սիրում կարդալ
Պրպտել հետազոտել տեսնել
Ըստ իրեն
Արժեքավոր գործեր չեն գրվում
Շնորհալի տաղանդավոր գրողներ չկան
Եվ նման բաներ
Մտքում թերևս առանձնացնելով իրեն

Ես թվարկում եմ շատ-շատերին
Շնորհալիներին տաղանդավորներին և այլն
Մտքում նաև ինձ

*

Հինգ տարի է ճանաչում եմ նրան
Շաբաթվա չորս օրը
Կարծես թե խմած եմ տեսնում

Մեկ-մեկ խոստովանում է
Որ ուզում է թողնել և խմելը և ծխելը
Մաքրվելու կենտրոնանալու կարոտ է քաշում
Հետաքրքիր բանաստեղծական մտահաղացումներ
ունի

Երբ կարդում եմ գրվածքները
Շատերի մեջ որբի տրտունջք եմ լսում
Եվ խմողի օղիախառն հառաչ

www.բնագիր.am

Արմեն ֆօն Գեւորգյան

Աբսուրդի ժանրով

Դեպք

Հիմա ես ձեզ մի տարօրինակ դեպք կպատմեմ. Սիմոն Սիմոնյանը բարձրացավ տասնչորս հարկանի շենքի տանիքը եւ...

Չէ, ավելի լավ է ես ձեզ մի սարսափելի դեպք պատմեմ. Սիմոն Սիմոնյանը ուշ գիշերով բարձրացավ տասնչորս հարկանի շենքի տանիքը եւ...

Չէ, ավելի լավ է ես ձեզ մի շատ հետաքրքիր դեպք պատմեմ. մի անգամ Սիմոն Սիմոնյանը բարձրացավ տասնչորս հարկանի շենքի տանիքը եւ...

Չէ, ավելի լավ է ես ձեզ մի տաղտուկ դեպք պատմեմ. Սիմոն Սիմոնյանը վաղ առավոտյան բարձրացավ տասնչորս հարկանի շենքի տանիքը եւ...

Չէ, ավելի լավ է ես ձեզ մի սովորական դեպք պատմեմ. Սիմոն Սիմոնյանը լավ մարդ էր:

Ահա եւ ամբողջ պատմությունը:

abs2.txt

Աբսուրդի ժանրով

Զվարճալի դեպք

Մի անգամ Սիմոն Սիմոնյանը անցնում էր բարձրահարկ շենքի մոտով: Իսկ բարձրահարկ շենքի ամենաբարձր հարկում տիկին Արուսյակը լվացքն էր փռում:

Նկատելով շենքի տակով անցնող Սիմոն Սիմոնյանին՝ հանկարծ տիկին Արուսյակը ձեռքից բաց թողեց փռման ենթակա ճերմակ ու թաց սավանը:

Իսկ սավանը ընկավ ուղիղ Սիմոն Սիմոնյանի գլխին:

Հավատացնում եմ ձեզ, որ սա շատ զվարճալի դեպք էր:

abs3.txt

Աբսուրդի ժանրով

Ինչ մարդ է Սիմոն Սիմոնյանը

Մի անգամ մեր քաղաքի երկնակամարում մի մեծ գդալ հայտնվեց:

Մեծ՝ չպատկերացնեք ճաշի գդալ, այլ մեծ, շատ մեծ, քառասուն հարկանի շենքի չափ մեծ գդալ:

Գդալը հայտնվել ու հանգիստ կախվել էր մեր քաղաքի գլխին:

Իսկ մեր քաղաքի բնակիչները շատ սովորական ընդունեցին այդ փաստը:

– Անոմալ երեւույթ է, – հանգիստ ասում էին շատերը:

– Չէ, սա անոմալ երեւույթ չէ, սա իսկական մտապատրանք է, – ասում էին մյուսները:

Իսկ Սիմոն Սիմոնյանը, ուշադիր լսելով բոլորի կարծիքը, ասաց.

– Անոմալ երեւույթ է, թե մտապատրանք, միեւնույն է, պետք է տակից փախչել:

Ահա թե ինչ մարդ էր այդ Սիմոն Սիմոնյանը:

Իսկ ինձ թվում է՝ նա պարզապես իմաստուն է:

Սուբյեկտիվ մոտեցում

(Խարմսի ոճով)

Երեկ չէ առաջին օրը իմ հարեւանի տնից շխկոց ու թխկոց էր գալիս:

Ես հետաքրքրվեցի եւ պարզեցի հետեւյալը:

Պարոն Շխկոյանը մոտեցել է պարոն Թխկոյանին, ձեռքի բանալիները շխկացրել եւ ասել՝ թըխկ:

Պարոն Թխկոյանն այդ արարքն անձնական վիրավորանք է ընդունել եւ իր ձեռքի բանալիներն էլ ինքը թխկացրել է ու ասել՝ շըխկ:

www.բնագիր.am

Պարոն Շխկոյանն էլ իր հերթին է պարոն Թխկոյանի արարքն ընդունել անձնական վիրավորանք եւ շխկացնելով ձեռքի բանալիները նորից է ասել՝ թըխկ:

Պարոն Թխկոյանը ամենայն հավանականությամբ չի ցանկացել հետ մնալ պարոն Շխկոյանից եւ թխկացնելով ձեռքի բանալիները ասել է՝ շըխկ:

Պարոն Շխկոյանը չի դիմացել դեպքերի նման զարգացմանը եւ շխկացրել է հենց պարոն Թխկոյանին ու նորից ասել՝ թըխկ:

Պարոն Թխկոյանն անմիջապես պատասխանել է պարոն Շխկոյանի շխկոցին եւ թխկացրել նրան ու ասել՝ շըխկ:

Դրանից պարոն Շխկոյանը պարզապես շխկացել է հատակին ու մեռել:

Պարոն Թխկոյանը տեսնելով մեռած Շխկոյանին բռնել է սիրտը եւ թխկացել...

Ահա թե ինչ շխկոց ու թխկոց էր գալիս իմ հարեւանի տանից երեկ չէ առաջին օրը: Ասեմ որ՝ բավականին անհեթեթ շխկոց ու թխկոց:

Պատկառելի մարդիկ են, բայց չեն կարողանում օբյեկտիվ լինել:

www.բնագիր.am

Անահիտ Ադամյան

Ինքնակենսագրություն

Ես գույնզգույն կոշիկներ նվիրեցի
երեխաներին
և համբուրեցի ճակատը ցմահ
սիրահարվածի:

Այլևս

Դու այլևս ինձ չես ճանաչում:
Մեռյալների մեջ չեմ ես, ոչ էլ
կողքին ապրողների:
Ես այնտեղ եմ, ուր ոտնակոխում են սահմանները
պարականոն կիրակիների:
Որովհետև ես ոչինչ չունեմ այլևս քեզ տալու...
Ողբացողների մեջ էլ չի լսվում ձայնս...
(Նրանք չգիտեն սուգ անելու գաղտնիքները -
դատարկ ու ձեռնունայն են վերադառնում տուն):

Անգիր գիտեի բառերը -
ինչպես սպեղանի դարմանում էին
դուռը տառապանքի...
Բայց ինչպես միալար անձրևներն են կուտակվում
կարծրաքար այս հողին,
Ես այլևս չեմ թափանցում քո մաշկի միջով:
Այժմ քոնն է հերթը:

Եկել, հափշտակել ես երազներիս խորքը...
Եթե ես ծուլվեի նրանց, օ՜, անէանայի,
ինչպես թմրանյութն է ջնջում ձայն, անուն,
հիշողություն,
ու թաց քնքշանքի հոտ է գալիս տարածությունից:
Այս կորստի դիմաց համրանում են ողբերը կատարյալ
Ու սգվորները կատակերգու են դառնում:
Օ՜, ինչ ծանր է մեղքը անմեղների:
Հարկ կար արդյոք ինձ թողնել մարգագետնի եզրին
ու հեռանալ:
Օ՜, ինչ ծանր է մեղքը անմեղների,
որ դռների առաջ համատարած սպասողն է,
թե ով իրեն ներս չի առնի մի ուշ ժամի...

Մանուշակները, որոնցով ծածկեցիր մարմինս,
թորշոմել են վաղուց:
Ես չգիտեմ, ինչ խորհուրդ ունի իրը
չտեսնողի համար,
և ցավը՝ չկրողի ներսում:
Իմ ռունգերը կույր են, և շոշափում են
տեղը, քո աջ ուսի վրա:

Թող մեկ ուրի՛շը կրի այս ժամանակը,
մեկը չապրողներից, կամ մեկը՝ որ ընդմիշտ կա:
Ուրիշ մեկի՛նն են այս ձեռքերը թափուր
այս փշե ծաղիկը՝ սրտի դիմաց:

Մի նայի՛ր ինձ դատարկ աչքերով:
Մի նայի՛ր ինձ վերստին դատարկ աչքերով:
Դու այլևս ինձ չես ճանաչում:

***

Քեզ համար եմ լալիս,
գիշերվա գիշեր:
Անանուն ծաղիկ, բոսորագույն դև:
Կա՛մ արտաքսյալ,
Քո՛ արտաքսյալ,
ներսից ու դրսից,
մութ, ամենամութ:

Ո՞վ կհանդգնի ինձանից բացի
քո շուքը դառնալ,
հնազանդ պառկել քեզ հետ
անապակ դարավանդներին,
լեռան կրծքի տակ,
հատակին լճի:
Անթիվ-անհամար մեռյալ թիթեռներ
մարմնիս վրա ասեղնահարած
այն կանայք ո՞ւր են հսկայամարմին,
աչքերի տեղակ - ցավի ծաղիկներ,
ձեռքերում պահած տարեկանի հաց:
Գետի ջրերում լվացին նրանք
մարմինս հանգած,
ու մեկիկ-մեկիկ համբուրում էին
ցավը թիթեռի - մարմնիս վրա
սպիներ դաջած:
Մութ, ամենամութ:
Կա՛մ արտաքսյալ:
Քո՛ արտաքսյալ:
Գիշերվա գիշեր:
Քեզ կին կդառնամ մի ուրիշ կյանքում
իբրև մի թիթեռ, տարեկանի հաց:

Բրուդերշաֆտ

Զազրելի առավոտ է, պարոն, այնպե՞ս չէ:
Եվ ոչ մի առիթ թույն չխմելու համար:
Թուրմը սառույցով կմատուցեմ:
Հո՞ չենք շրջանցի ձեր նախասիրությունները -
Սառույցով վիսկի, սառած քվորում, սառեցրած
ազատ-անկախ...
Սա ընդունեք իբրև սառը պատգամ:
վերջին պատգամը... վերջին ընտրազանգվածի...

www.բնագիր.am

Նրանց հետ հանդիպե՞ք: Ավա՜ղ, բոլորը
մեռան այս ձմեռ: Սովահար, ցրտահար,
ձայնահար եղան, չվեցին թռան:
Ասում եք, ձեր տոհմում ինքնասպաններ
չե՞ն եղել:
Մարդկային ցեղի՛ մասին մի մոռացեք:
Մի՛ անտեսեք գլոբալիզացիոն սուիցիդը:
Չե՞ք լսել այդ մասին:
Ազգային գենետիկան, թեև համառորեն
չոչ է անում,
Սակայն նույնպես փաստեր ունի:
Մենք դանդա՜ղ ինքնասպանների ցեղ ենք:
Ահավասիկ - պապս
ջրախեղդ եղավ ծիծաղախիտ ջրերում:
Թեև նախնիներս համառորեն պնդում էին,
թե նա հրաշալի լողորդ էր,
բայց տատս ցնորվելիս կրկնում էր,
որ նա մեռավ տխրությունից:
Սա հորինեցի հենց այնպե՞ս:
Մի բան էլ դո՛ւք հորինեք:
Թեև որոշել էիք թողնել սեն բերնարին,
Բայց ամեն ինչ կտակում եք ազգի՞ն:
Դուք գերազանցում եք ձեզ, պարոն:
Դղյակները կդարձնենք պատկերասրահներ,
Առանձնատները կմնան բոմժերին,
Նայթ քլաբը՝ թափառական շներին,
Կիպրոսում վարժարան կբացենք,
Բարսելոնում՝ հյուպատոսարան,
Գաուդի՞ն է կառուցել,
Ձեր գեղագիտությունը գերազանցում է ձեզ, պարոն:
Կլորիկ հաշիվները- միապետության օգտին,
Միասեռական էլիտայի պաշտպանության ֆոնդին:
Գծերը, կետերը, օբյեկտները, պրոյեկտները
Գարանտները, գրանտները... ժառանգներին
նեղացնելը վնաս չէ՞ ազգի առողջությանը:
Ձեր փրկությունը իմ ձախ ձեռքում է, պարո՛ն:
Որովհետև ձեր հետևից չի գա ոստիկանը,
Չի այցելի ազգային անվտանգությունը,
Նմանապես ՖԵԲԵէՌ-ը, էմՉիէս-ը,
Ալ Քաիդան, Կարմիր խաչը, Եհովայի
վկան, Հաագայի դատարանը, իսկ Հռոմի
Պապը ընդհանրապես չի գա,
Որովհետև նամանավանդ սրբերը
առանձնապես պղտոր գետերը
երկրորդ անգամ չե՛ն մտնում:
Ու քանի որ այլևս ոչ ոք չի հավատում
Ահեղ դատաստանի արկածախնդրությանը,
Ուրեմն դուք, պարոն, Անձեռնմխելի եք:
Թույնը սառույցով կմատուցեմ:
Հո՞ ձեզ մենակ չեմ թողնի:
Թեկուզ նրա համար, որ զազրելի առավոտ է,
Եվ այլևս առիթ չի լինի ձեզ հետ խմելու համար:

www.բնագիր.am

Լևոն Ջավախյան

Ուզում եմ ասեմ՝ խիղճս արթնանա

Փետրվարը ջարդել էր ձմռան սառույցն և հալոցքի արծաթե սույլերով, արեգակ լույսի պլպլան վահանով, երկնքի կապույտով բացված ծավալուն թիկնոցով, ճերմակագլուխ ամպերի փետրազարդ սաղավարտով, օդեղեն, զուլալ ծալքերից փչող թարմ շնչառությամբ, հազարաձայն զվարթուն թռչունների կարկաչուն լեզվով՝ ավետում էր գարնան հաղթական գալուստը: Բնության զարթոնքը խրոխտ քայլերգով իր դրասանգներն էր ճոճում, իսկ ես նահանջի պատյանը մտած ստամբակ գոյությանս պտուղներն էի որոճում: Աչքերս մթնում էին, օդը չէր բավականացնում, խառնիխուռն մտքերով լեցուն գլուխս կապարի ծանրությունն ուներ: Սիրտս մարում էր կրծքիս տակ: Այն մոխրամանի մեջ ճզմված ծխախոտի պես մխում էր՝ բարակ, երկար ու ձիգ շիթով:

Նախկինում ես այլ կերպ էի մտածում: Ես գրող էի և հումանիստ: Ստեղծագործելիս հնարավորինս հեռանում էի նախատիպից: Որքան էլ գրվածքը հաջողված լինի՝ մարդու կյանքն ու արժանապատվությունն ավելին արժեն, քան ցանկացած գրական երկ, – դատում էի ես: Դատեցի ու դատվեցի: Նախատիպից հիմա ոչ այնքան հեռանում, որքան մոտենում եմ: Մոտենում եմ այնքան, որ ձեռքս չի վարանում անգամ փոխել անունը: Գիրս, որ պետք է լիներ սրբագործութուն, հաճախ դառնում էր սրբապղծություն: Ես դա անում էի գրողական էգոիզմից դրդված՝ հանուն փառքի և ճանաչման: Արտեմիսի տաճարն այրող Հերոստրատից իմ տարբերությունը, թերևս, արարքիս աննշանությունն էր: Ժամանակի թաղանթին բախվող պատմվածքներս մոծակի խայթոցների արժեքն իսկ չունեն: Սակայն ես անդրդվելի եմ ու անվարան: Իմ փառատենչ ձեռքը չվարանեց իջնել ընտանիքիս վրա: Լույսն ու մութը խառնեցի: Այն ինչ մթինն էր, լույսին տվեցի, այն ինչ լույս էր՝ ցեխեցի խավարով: Կինս խռովեց, երեխաներս վրդովվեցին, հարազատներս պարսավեցին, ընկերներս պակասեցին, շրջապատիս ծաղրին արժանացա, բայց առավել դաժան փառքը եղավ, որ համառորեն երես թեքեց ինձանից: Ելք էի որոնում: Հեռուստատեսության էկրանից մահվան դատապարտված մարդը կարծես թե գտել էր ելքը. «Ես ի՞նչ եմ արել որ... Ուրիշները հազարավոր մարդիկ են սպանել, իսկ ես միայն ընտանիքս...»: Ռիսկս չնչին էր, ճիգս աննշան... Հերոստրատը աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր այրել, իսկ ես՝ ընդամենը ընտանիքիս անդորրը... Դա վրաս թանկ նստեց: Կինս ընդվզում էր՝ ինչպես կարող էր: Նրա հիմնական զենքը խոսքն էր: Նրա խոսքը մի քանի արագացում ուներ: Բայց ամենաահավորը «խալաստոյն» էր. երբ լեզուն վերածվում էր հավերժական շարժիչի, իսկ հնչյունը սողոսկում էր ամենահեռավոր բջիջն անգամ: Հարվածը շշմեցնող էր: Ուղեղիս գալարները դզվում էին: Գլուխս դառնում էր հարթ տափաստան, ուր մտքից զատ կարող էին և բուսնել ամեն տեսակի սեզ ու տատասկ: Սակայն որքան էլ բարձունքներս հերկվեին, այնուամենայնիվ, խոպան տարածքներ մնում էին: Կնոջս խոսքերն անգամ անզոր էին փխրեցնել մակարդված կոշտուկները: Բորբոքված ուղեղիս միշտ անհասանելի էր հոդաբաշխ հայերենը: Չգիտեի չարագործ գլուխս որ պատովը տամ, որ բորբոսը մեջից դուրս գա: Աստված ինձ անհնազանդությամբ էր պատժել: Ի՞նչ իմանամ, միգու՞ցե գործս դրա համար էր թարսվել... Վերնիսաժը լիքը տուրիստ էր, սակայն ոչ ոք չէր ուզում իր դոլարը ինձ տալ: Փոխադարձ՝ ես նրանց արծաթյա զարդ կտայի: Ավաղ: Արծաթյա խայծս նրանց չէր գայթակղում: Սեղանիս սև սատանա էր իջել: Խաչ էի պաչում, մոմ վառում, աղոթք ասում, խունկ ծխում, գիր կապում, բախտ բացում, բայց ոչ մի կերպ չար ոգին չէր վանվում: Գործս չէր գնում. մեկ օր, երկու օր՝ ընկել էի փոսը, երրորդ օրը անհույս էր ելնելը, չորրորդ օրը շնչահեղձ էի լինում, հինգերորդ օրն արդեն կապույտ էի... Այլևս կյանքի և մահվան եզրին էի: Մեկ շաբաթ էր բան չէի ծախել: Օրը տխուր էր տրտում ոչ միայն ինձ համար: Կողքիս Գագոն ասաց, էսօր շանս ծնունդն ա՝ մի-մի թաս չզարկե՞նք... Բաժակները դեռ պռնկներիս, հայտնվեց աշխարհի խելոք մարդկանցից մեկը՝ Ալբերտ Ստեփանյանը: Փափուկ երեսը բացվել էր բարի ժպիտով: Խանդավառ ձայնը պայծառ ամպրոպ էր մռայլ օրվա մեջ:

– Այ տղա, – ասաց, – Հարվարդի համալսարանն է քեզանով հետաքրքրվում... Գրքերդ են ուզում...

Տղերքը ապշել էին:

– Լևոն, – ասացին, – շան բախտ ունես...

Իմ բախտն ինձ հետ էր: Կինս խռովել էր, երեխաներս դժգոհում էին, հարազատներս՝ պախարակում, ընկերներս՝ պակասում, շրջապատս՝ ծաղրում... Քանզի իմ ուզածն իրենց ուզածը չէր: Ես գրիչ էի բարձրացրել սրբության սրբոցի՝ ընտանիքիս վրա: Գրչակից ընկերս համոզում էր.«Եթե անգամ քո մի ձեռքում Նոբելը լինի, – ասում էր, – մյուսում՝ պատմվածքդ, էլի դու պիտի մտածես՝ տպե՞ս, թե՞ չտպես»: Տպել էի առանց մտածելու: Նոբելյանին հասնելու այլ ճանապարհ չգիտեի: Ասենք, մի ճանապարհ էլ գիտեի: Ինձնից հեռու հաղորդալարի մի շատ բարակ սյուն կար: Կլիներ մոտավորապես 40-50 մետր այն կողմ: Իմ մոտից ձնագնդով խփելը գործնականում գրեթե անհնարին էր: Ինձ էլ պետք էր անհնարինը հնարավոր դարձնել: Մի սիրուն ձնագունդ սարքեցի: Մտքումս

www.բնագիր.am

ասի, թե ձեռքիս ձնագունդը էդ բարակ սյանը դիպավ, ուրեմն հաստատ Նոբելյան եմ ստանալու, թե չդիպա՞վ, ուրեմն չկպավ... Ինձ նշանառու երբեք չէի կարծել: Գցելս ու զուտ սյան կենտրոնում ձնագնդիս մեխվելը մեկ եղավ: Օ՜ ուրախություն... Կպցրել էի: Նոբելյանը համարյա գրպանումս էր: Ջհանդամը, թե էդ օրը մի տուրիստ չկպավ:

Ասենք, Նոբելյանն էլ կպցրինք, բա հետո՞... «Վայրկենական հաճույքներ կան, – ասում էր Վարազդատ ընկերս, – որ այն աշխարհում դառնալու են հավիտենական տառապանքներ: Երկնքից անձրևի պես մարդկային հոգիներ են թափվելու, – հավատացած էր նա, – որոնք մարմնավորելու են միլիարդավոր հանգուցյալների: Եվ յուրաքանչյուրը պիտի հատուցի իր մեղքերի դիմաց: Երանի նրան, – ասում էր, – ով նմանվելու է հրեշտակի»: Եվ նա այլևս ժամանակ չէր կորցնում: Առանց հապաղելու պատրաստվում էր հրեշտակակերպության: «Ով օրը երեք անգամ է ուտում, – ասում էր, – նման է անասունի, ով երկու անգամ՝ մարդի, իսկ մեկ անգամ ուտողը, – համոզված էր, – նման է հրեշտակի: Ես հլա որ օրը երկու անգամ եմ ուտում, – մեղավոր ժպտում էր, – Աղջիկներիս ամուսնացնեմ, – արդարանում էր, – անցնելու եմ մեկ անգամվա կերի, որ նմանվեմ հրեշտակի»: «Աղջիկներիդ ամուսնացնելն ուտելուդ հետ ի՞նչ կապ ունի», – զարմացել էի: «Ուժ պիտի լինի, որ էդ էրեխանցը կարենամ պահել», – ասել էր: Նախագահական ընտրությունների թեժ օրերն էին: Ասի. «Վարո, ձայնդ ու՞մ ես տալու»: Ասաց. «Գործող նախագահին»: Ասի. «Բա չես վախու՞մ դիետադ (նկատի ունեի՝ պահքը) հեչ լինի»: Ասաց. «Ինչ լինում է՝ Աստծո կամքով է լինում»: Նման ուսուցչի առկայության դեպքում անգամ ես դարձա անասուն՝ ուտեստեղենի հազարատեսիլ կոճոնների հետ խժռելով նաև ընտանիքիս նամուսն ու պատիվը: Հարվածները գալիս էին աջից և ձախից: «Քո անկեղծությունը երեսպաշտություն է, – քննադատում էր մեկ այլ ընկեր, – եթե այդքան անկեղծ ես, պատմվածքդ չպիտի ավարտեիր՝ քեզ տրվել չցանկացող կնոջը մեղադրելով: Դու պիտի մինչև վերջ անկեղծ գտնվեիր, ինչպես Ժան-Ժակ Ռուսոն է խոստովանվել: Դու պիտի նկարագրեիր կնոջդ չհասնելուց հետո քո սեռական տվայտանքները, թե ինչպես ես վերմակի տակ զբաղվում ձեռնաշարժությամբ...

– Խի՞, մենք Ռուսոյից պակաս տղա՞ ենք... Եթե պատմվածքը պահանջեր՝ դրան էլ կգնայինք..., – բառաչեցի անասնական անհայտ մի մղումով՝ ներքին շուրթիս տակ ծորացնելով փառակալած փսլինքը:

Հանուն նպատակի պատրաստ էի ոչ մի միջոցի առջև խտրություն չդնել:

Եվ ի՞նչ ...

Տունս շինված Շնողնա ծորում անտաշ քարով, թողած Լոռին, հորս այգին, զվարթ ջրերը Դեբեդ գետի և մորս անգամ չասած մնաս բարով ես հեռացա ընտանիքից, ընկերներից, շրջապատից և չհասած ոչ մի բանի և ոչինչ ոչինչ դեռ չգտած, մոլորվեցի անուրջներիս թավուտներում, երևակայական դղյակների պալատների որոգայթում: Անփառունակ երթս ավարտ չունեցավ, կյանքս կուլ էր գնում սորուն ժամանակին, ծաղիկ օրերս գարուն չտեսան, սիրտս մխում էր շամփրած կրակին: Հողանյութ հարկի շուքի վրայով, ախ, ուրախություններս իզուր չվեցին, անցած մոռացված օրերիս միջով, լուսե խորանների ծոցում մնացին: Ես ուռկան ձգեցի աստղազարդ երկնքում, ձկնիկն էր լողում ոսկե թեփուկով, ցանցս բռնկվեց աստղե կայծերում, հույսս էր այրվում հրեղեն բոցով: Ճակատագրիս կոտրած տաշտի առջև, ես մնացել էի հողեղեն հարկում, երկնքի բարձր գմբեթից վերև, ոսկե ձկնիկն էր ժրաջան խայտում:

Կյանքում շատ բան էի երազել, բայց որ առևտրական կդառնայի, մտքովս չէր անցել: Յոթ տարի է կոտրած տաշտակով էինք կերակրվում: Ընտանիքս վերնիսաժի սեղանիկն էր պահում: Հազիվ էի ծայրը ծայրին հասցնում: Մի օր որ բան չէի վաճառում՝ ընկնում էի շուն ու կատվի օրը. սպասում էի, սպասում, թե մի քիչ կացի՝ հրես կերևա... Գոնե գինը հարցնեին: Արհամարհած ունեին: Աստված ինձ խիստ էր պատժել: Մեկ էլ՝ ծղրտոց լսվեց: Ասես վերնիսաժը թառժաժ աներ... Քառասունն անց մուրացիկ կին էր: Վառեկ հավի պես բմբլատած վիզը ջղաձիգ երկարել՝ ճվճվում էր.

– Տաս դրամ տվեք, ի՞նչ կլինի՝ տաս դրամ... Հիսուն տվեք՝ քառասուն զդաչի տամ...

Մտքումս ասի՝ էսա որ կա, արի սրան ողորմություն տամ, կլինի որ Աստված էլ ինձ ողորմա՝ մեղքերիս թողություն տա: Ասի, արի, արի բարիկենդան քույրիկ, ես էլ քու պես մեկին էի ման գալիս, որ սիրտս դատարկեմ... Ու ափի մեջ գրպանիս մանրադրամի պարունակությունը դատարկեցի: Հուզվեց: Ասաց, արի քեզ օրհնեմ: Մտածեցի, թե էս է որ կա՝ կպել ա...

– Գնաս բոզի, – ասաց, – բանդ թուլանա կախ ընկնի: Գաս տուն՝ կնգանդ տեսաս՝ դիք կանգնի...

– Բա, որ չկանգնի՞..., – ասի:

Ասաց.

– Կտաս, խաղ կանի՝ կկանգնի:

Այս պատմվածքը Լևոն Ջավախյանի եռերգության («Ուզում եմ ասեմ՝ աշխարհն իմանա», «Ուզում եմ ասեմ՝ կինս չիմանա», «Ուզում եմ ասեմ՝ խիղճս արթնանա») երրորդ պատումն է:

www.բնագիր.am

Մարինե Պետրոսյան

ԳԱՐՈՒՆ Ա ԱՆՁՐԵՎ Ա ԳԱԼԻՍ

գարուն ա անձրեւ ա գալիս
բոլորը վազում հեռանում են
մենակ ես եմ կանգնել նայում
ոնց ա անձրեւը գալիս
ու ես էլ ընդամենը էսօր
այսինքն երեւի շատ ուշ
հասկացա որ պետք չի վազել
երբ որ անձրեւ ա գալիս

ԴԵԿՏԵՄԲԵՐ ԴԵԿՏԵՄԲԵՐ ՎԱՌԱՐԱՆ ԱՌԱՎՈՏ

դեկտեմբեր դեկտեմբեր վառարան առավոտ
անձյուն մի քիչ մութ մի քիչ ցուրտ կիրակի

չափազանց չափազանց սիրելի մի բան
անաղմուկ բայց անդարձ քայլերով
հեռանում ա

ամեն ինչ ամեն ինչ որ կա
թողնելով իրանից հիշատակ

ԿՈԿՈՐԴՍ ՑԱՎՈՒՄ Ա ՏՈՒՆՍ ՑՈՒՐՏ Ա

կոկորդս ցավում ա տունս ցուրտ ա
տարին էլ վերջացավ
մնաց անցած աշնանից չլվացված էս պատուհանը
որպես զանազան մժեղների
ու մեկ էլ քամու չգիտես որտեղից բերած սերմից
խելագար փարթամությամբ աճած հույսերի գերեզման

ու հիմա փակում եմ
անցած աշնանից չլվացված պատուհանը
արանքները խցկում եմ բամբակ

կոկորդս ցավում ա տունս ցուրտ ա
բայց վաղը եթե պատահի նորից գարուն գա
վերջապես կլվամ էս պատուհանը
որպես ոտքի տակ ընկած սերմից
հուսահատ փարթամությամբ նորից աճող հույսերի վկա

ԶՎԱՐԹ ՏԽՈՒՐ ԱՆԿԱՊ

ցուրտ որ չի սառացնում
լահմաջու որ կերար
ու էլի ես ուզում
բայց էլ չկա

զվարթ տխուր անկապ
մարդիկ էլի մարդիկ
ու բոլորը ուրիշ
ու բոլորը նույնը

ոնց որ մուրացկանի
հա կրկնվող երգի
զվարթ տխուր անկապ
բառեր

ՀԵՌՈՒ ԴԱՆԴԱՂ ՔԱՂԱՔ ՈՒՐ ԷՍ ՏԱՐԻ ԷՂԱ ՄԻ ՔԱՆԻ ՕՐ

մարդիկ խոսում էին
նույն լեզվով ինչ որ ես
բայց ավելի քիչ էին
քան շենքերն ու ծառերը

մի երկուսը փողոցում
մի երեքը հյուրանոցում

իսկ մեկը որ խանութում էր
ժպտաց ծանոթի պես
իսկ ես չէի ասել
ոչ մի բառ

ԲԱՅՑ ՉՏԵՍԱ

ոչ ոք
որ նայում էր ինձ
ես չէի

գիտեի -
եթե տեսնեմ ինձ
ուրեմն երազ ա
կանցնի

բայց չտեսա

որովհետեւ ոչ ոք
որ նայում էր ինձ
ես չէի

ես միայն նա էի
որին բոլորը
նայում էին

ԿԱՊԻԿ – ՀԱՄՐ ԳԱԶԱՆ

կապիկ - համր գազան

հավատում եմ
որ առաջ դու էիր

www.բնագիր.am

որովհետեւ դու էն ես
ինչին վախենում եմ նայեմ

քո մազոտ մարմինը
ճակատագրի դեմքն ա

դու ճչում էիր
ես խոսում եմ

ԱՍՖԱԼՏԸ ԿԱՐՄԻՐ Ա

ասֆալտը կարմիր ա
ուզում եմ աչքերս փակեմ - չի լինում

շուրջս լիքը մարդ ա
ուզում եմ հիշեմ գոնե մեկի անունը
հիշում եմ քառանիշ անկապ թվեր

հանկարծ մեկը գոռում ա
փակում եմ աչքերս

բացում եմ - ասֆալտը կարմիր-կարմիր ա
շուրջս լիքը մարդ ա

փողոցը վերջացել ա
նորից սկսվել ա ուրիշ փողոց

ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆ

ինչ որ ուզում եմ
հասարակ բան ա
բայց ոնց որ չկա

մրջյունները կան
մեղուները կան
օրը բացվում ա
օրը փակվում ա

ինչ որ կա իրա
վկայությունն ա

բայց ինքը
ինչ անես որ
չկա

ԴՈՒՌԸ ԲԱՑԵՑԻ

դուռը բացեցի
դուրս էկա փողոց

բայց մոռացել եմ
ինչ էի ուզում

մենակ հիշում եմ
որ ձայներ կային

անհասկանալի
ու հիմա չկան

ու հիմա արդեն
լույսը բացվել ա
բայց ոչ ոք չկա կողքի փողոցում
ինձանից բացի

ՍԵՆՑ ՀԱ ԳԱԼՈՒ Ա

ուզում էի քեզ գտնեմ
կեսից հետ դարձա

սառցակալած փողոցով
գնում եմ գալիս

մի մայթին ձյուն ա գալիս
մի մայթին անձրեւ

ու ծիծաղս գալիս ա
ինքս իմ վրա

ուզում էի քեզ գտնեմ
բայց քեզ չգտա

հարեւանդ ասեց որ
քեզ չի ճանաչում

կարող ա սուտ էր ասում
բայց արդեն մեկ ա

եթե ձյունն էլ կտրվի
անձրեւ ա գալիս

մինչեւ գարունը բացվի
սենց հա գալու ա

ԿՏՈՒՐՆԵՐԻՆ ԿԱՆԳՆԱԾ

մութը կուլ ա տալիս ձայները
ով որ խոսում էր
հասկացավ իզուր ա
լռեց
հիմա դավիթաշենի կամուրջից մինչեւ
մեր բակը
ձյուն ա գալիս
ու մութի մեջ
իրանց կտուրներին կանգնած
բոլորը նայում են
ոնց ա ձյունը իրանց վրա գալիս

www.բնագիր.am

ՏԱՆՏԵՐԸ ԳՆԱՑԵԼ Ա

տանտերը գնացել ա
չի գալու
դուռն էլ դրսից ա փակ
նոր տեսա՞ր մի խփի
չի բացվի
ներսից որ բացել լիներ
էսքան առարկաները
էս չորս պատերի արանքում
ինչի՞ մասին էին էսքան շատ
լինելու

ԱՎԵԼԻ ԼԱՎ Ա ԴՈՒՌԸ ՓԱԿԻ

արի լաց մի էղի
ավելի լավ ա դուռը փակի
որ մի քիչ պակաս ցուրտ լինի
չգիտեմ ինչի ես լացում
լացելու պատճառ միշտ կա
շարունակությունն ա տարբեր
այսինքն թե ինչ ես անում
երբ որ արցունքները վերջանում են
ես որ սիրեցի հանկարծ
էս բոլորը - բոլորին ու ամեն ինչ
չգիտեմ ինչի
երեւի
ուրիշ բան չկար անելու

ԷՆՔԱՆ ՑՈՒՐՏ ԷՐ- 1

էնքան ցուրտ էր
ջուրը խողովակների մեջ սառեց
նախագահն էլ հրաժարական տվեց
թողեց գնաց աստված գիտի ուր
հետո հեռուստաալիքները հերթով
դադարեցին լուրեր հաղորդել
բոլորը նստել տներում
սպասում էին ինչ ա լինելու
բայց ոչինչ չէր պատահում
մինչեւ որ ջուրը խողովակների մեջ հալվեր

ԷՆՔԱՆ ՑՈՒՐՏ ԷՐ - 2

էնքան ցուրտ էր գիտակցությունս կորցրի
զարթնեցի փողոցի նստարանին
որ կար միշտ երբ որ մեր հին տունը
դեռ չէին քանդել
ամեն ինչ նույնն էր ու բոլորը կային
մենակ շատ տխուր էր
ու չէի հասկանում էդ ինչից ա տխուր
մեր ծառից թութ պոկեցի որ ուտեմ
տեսա թթի ծառը ես եմ
ու պախկվոցի խաղացող էրեխեքի մեծ մասը
էլի ես էի
բայց մեկ ա տխուր էր

www.բնագիր.am

Միեր Բեյլերյան

Անծանոթը

Շքամուտքի դուռը ճռռալով բացվեց և շրխկոցով փակվեց: Անծանոթը կոշիկները խփեց հատակին եւ ուսերից թափ տվեց ձյունը: Լսելով աղմուկը՝ երրորդ հարկի տարեց տիկինը արագորեն թաքցրեց փողի կապոցը բարձի տակ, իջեցրեց հեռուստացույցի ձայնը: Առաջին հարկի երկու բնակիչները մոտեցան իրենց դռներին: Բնակիչներից մեկը մտածեց, թե հավանաբար աղմկողը դիմացի բնակիչն է, դիմացի բնակիչը մտածեց միևնույն բանը: «Տեսնես ու՞ր էր գիշերվա երկուսին»: «Երևի սիրածի հետ է թրև գալիս»: Երբ վերստին լռություն հաստատվեց՝ շքամուտքի սև կատուն նորից սկսեց մլավել՝ ամենևին չմտահոգվելով, որ խավարի մեջ երևում են միայն իր աչքերը: Անծանոթն անձայն մոտեցավ կատվի աչքերին. մլավոցը դադարեց: Երրորդ հարկի տարեց տիկինը հանեց բարձի տակից փողը և շարունակեց հաշվել՝ ուշադրություն չդարձնելով երկրորդ հարկից եկող սիրառատ զույգի հառաչներին ու տնքոցներին: Գրեթե նույն ժամանակ առաջին հարկի բնակիչներից մեկի դուռը թակեցին: Բնակիչը տեղից վեր թռավ, մոտեցավ և ականջը հպեց դռանը: Երկար սպասելուց հետո նա ի վերջո բացեց դուռը, ոչ այնքան հետաքրքրությունից դրդված, որքան փարատելու համար իր կասկածն ու համոզվելու, որ ոչ ոք չի թակել: Նա ուսերին գցեց տաք մուշտակը, դուրս եկավ շքամուտք և միացրեց լույսը: Տեսնելով կատվի դիակը նա մի պահ քարացավ, հետո արագ ներս նետվեց և կողպեց դուռը: Երկրորդ հարկի սիրատենչ զույգը լսեց ճիչը և ծանր առարկայի հատակին ընկնելու խուլ ձայնը, սակայն նշանակություն չտվեց: Առաջին հարկի բնակիչը կողպեց դուռն ու նետվեց հեռախոսի մոտ: «Ոստիկանություն» հնչեց լսափողի մեջ, սակայն հենց այդ պահին բնակչի դուռը կամաց թակեցին: «Ալլո, խոսիր, ձեռ ե՞ս առնում» ոստիկանն առանց դադարի մոտ քսան րոպե հայհոյեց՝ չկռահելով, որ իրեն չեն լսում: Երկրորդ հարկում սիրասպառ զույգը կյանքի նշաններ ցույց չէր տալիս: Շքամուտքում տիրում էր ճնշող լռություն, բայց չկար մեկը, որ ճնշվեր այդ լռությունից: Դռան թակոցից սիրահար զույգը վեր թռավ: «Մի՛ բացիր»,- աղերսեց աղջիկը. «Երազիս սև կատու եմ տեսել»: Տղան հորանջելով հագավ հողաթափերն ու ննջասենյակից դուրս եկավ միջանցք: Աղջիկը լսեց, թե ինչպես դուռը բացվեց, լսեց իր սիրեցյալի խուլ տնքոցը: Նա մտավ անկողնու տակ և շունչը պահեց: Երրորդ հարկի տիկինն այլևս փող չէր հաշվում: Այդ փողը նրան այլևս պետք չի գա, որովհետև նա արդեն չկա, նա մի դիակ է՝ ընկած փողի կույտի մեջ: Եռահարկ շենքում տիրեց ճնշող լռություն, որից ճնշվում էր միայն անծանոթը: Մի անբացատրելի տագնապ այրում էր նրա կուրծքը, ինչ-որ բան հանգիստ չէր տալիս: Անծանոթը հանկարծ հիշեց, որ չի այցելել սիրահար զույգի դիմացի բնակարանը: Այդ մտքից նրա ճակատին հայտնվեցին սառը քրտինքի կաթիլներ, սիրտը սկսեց ուժգին բաբախել: Նա իջավ երկրորդ հարկ, մոտեցավ փակ դռանը և կամաց թակեց: Ներսում ձայն չէր լսվում: Անծանոթը թաշկինակով սրբեց քրտինքը և ոտքով հարվածեց դռանը: Անսպասելիորեն դուռը բացվեց: Անծանոթը հուզմունքից ճոճվելով ներս մտավ և միացրեց լույսը: Նա թուլացած ընկավ բազկաթոռին և ամեն ինչ հիշեց. տասը րոպե առաջ նա դուրս եկավ այս տանից սիգարեթ գնելու համար: Ամեն ինչ նորմալ էր ըստ էության մինչև կատվի աչքերի մեջ նայելը: Ինչպես դա պատահեց, ինչու՞... Բայց ի՞նչ է պատահել. առաջին հարկում ծանր առարկա է ընկել, ոստիկանը հայհոյում է, որովհետև իրեն զանգել են գիշերվա երկուսին և չեն խոսում, երկրորդ հարկում աղջիկը մտել է անկողնու տակ, և դա բնական է, եթե նկատի ունենանք, որ նա երազում սև կատու է տեսել, երրորդ հարկում, ճիշտ է, դիակ կա, բայց դա դեռ ոչինչ չի նշանակում, շատ փողը դեռ ոչ մեկին լավ բանի չի հասցրել: Ինքը, խավարի մեջ կատվի աչքեր է տեսել, իսկ հիմա նստած է իր տանը... «Բա անծանոթն ո՞վ է»,- անցավ նրա մտքով. «Անծանոթն ուրիշն է, որովհետև ես չեմ կարող իմ տան մեջ անծանոթ լինել»: Ասես ի հավաստում այդ մտքի, բնակարան մտավ սև կատուն. նա բարձրացավ պահարանի վրա և սկսեց հոգնած նայել: Շքամուտքի դուռը բացվեց և շրխկոցով փակվեց: Ինչ-որ մեկը ոտքերը խփեց հատակին և սկսեց դանդաղ բարձրանալ աստիճաններով: «Անծանոթին հնարավոր չէ տեսնել»,- մտածեց երկրորդ հարկի բնակիչը,- «եթե նրան նայես, նա այլևս անծանոթ չի լինի»: Բնակիչը ավելի սեղմվեց բազմոցի թիկնակին և իր համար անսպասելիորեն բարձրաձայն ասաց. «Բայցևայնպես, դա իմ անվտանգությունը չի երաշխավորում»...

www.բնագիր.am

Ատամնացավ

Այդ բանը պատահում է մի քանի տարին մեկ անգամ, բայց միշտ կեսգիշերից հետո, երբ ատամնաբույժի մոտ գնալու հնարավորությունները կտրուկ նվազում են: Բնականաբար դեղ չի լինում կամ եթե լինում է՝ միայն լուծողական: Վզի նյարդը այնպես է լարվում, որ գլուխս կախ է ընկնում: Տնքում եմ գերմանական պոռնոֆիլմի հերոսուհու պես և բութ հայացքով նայում հատակին: Միացնում եմ հեռուստացույցը: Ցավը սաստկանում է, չգիտեմ ինչն է պատճառը՝ էկրանի լու՞յսը, թե՞ ռուսական էստրադան: Անջատում եմ հեռուստացույցը և ափս հենում այտիս: Ծնկի եմ գալիս թախտիս վրա և գլուխս հենում բարձին. այս դիրքում կարծես վզիս ցավը մեղմանում է: Քնելու անհաղթահարելի ցանկություն ունեմ՝ շատ իզուր: Արյունը գլուխս է լցվում, քունքերս ցավում են զարկերակի բաբախումից: Մարմինս այլևս ոչնչի վրա չի զարմանում, բայց արդեն հոգիս է սկսում զզվել: Աչքս ընկնում է սեղանիս դրված փոքրիկ Նոր Կտակարանին: Արագ ձեռքս եմ առնում և հպում այտիս. «Աստված, կամ դիմանալու ուժ տուր կամ ցավից ազատիր»: Շարունակում եմ դիմանալ, բայց ցավը դառնում է անտանելի: «Ո՞րն է այս ցավի պատճառը,- փորձում եմ տրամաբանել,- ի՞նչ մեղքից եմ մաքրվում: Յուրաքանչյուր ցավ բուժում է, յուրաքանչյուր չարիք՝ անհրաժեշտություն»: Այդ միտքը ինձ միշտ ուժ է տվել, բայց այս անգամ չի օգնում: Դիմում եմ սրբիս. «Սուրբ Գրիգոր, դու այնքան տանջանքների ես դիմացել, 15 տարի Խոր Վիրապում ես եղել: Օգնիր և ինձ, բազմամեղիս, որ հաղթահարեմ այս... ցավը»: Մի քանի րոպե համբերատար սպասում եմ: Իրավիճակը ծանրանում է: Առաջին անգամ մտածում եմ դեղերի մասին: Հիշում եմ, թե ինչպես վերջին քնաբեր հաբը տվեցի եղբորս նրա բանակ գնալու նախորդ գիշերը, որպեսզի գնալուց առաջ կարգին քնի, ուժ ունենա, պատրաստ լինի երկար ժամանակ քունը չառնելուն: Երբ նա քնեց, ես պառկեցի կողքն ու սկսեցի զննել նրա անհավասար սափրած գլուխը: Մտածում էի, որ վատ սափրվելու պատճառով իրեն կարող են ծաղրել, ինձ մեղավոր էի զգում, ուզում էի նրա համար ինչ-որ բան անել: Աշխարհում ավելի հարազատ բան չունեի, քան այդ վատ սափրած գլուխը: Ցավը գրեթե անցնում է: Քանի դեռ նորից չի սկսվել, անհրաժեշտ է հասկանալ ապաքինման պատճառը: Սիրում եմ բարկանալ, որ եղբայրս կողքիս չէ, կրծքիս մեջ զգում եմ այրող կարոտը: Ցավը վերսկսվում է նույնքան աննկատ, ինչպես ընդհատվել էր: Փորձում եմ նորից մտածել եղբորս մասին, ստիպում եմ ինձ հիշել նրա սափրած գլուխը, բայց՝ ապարդյուն: Սերը լցնում է ինձ ու դուրս հորդում, և սիրո հետ իմ մեջ լցվում է ցավը: Սիրո և ցավի նոր պոռթկման պահին հիշում եմ Անուլիս, բայց փորձում եմ չմտածել նրա մասին, որ հանկարծ ցավս նրան չանցնի:

Փորձում եմ դատել էզոթերիկ տեսակետից: Բուդդան պնդում է, որ տառապանքն ու ցավը չեն պատկանում մեր ճշմարիտ էությանը: «Իմ ես-ը վեր է այս ցավից, ցավը պատրանք է, ցավ չկա»: Մի քանի վայրկյան սպասում եմ: Չկպավ: Միտքս կարողանում եմ անջատել ցավից, բայց ցավը չի դադարում: «Իմ ես-ը ատամներ չունի, այն չունի որևէ բանի կարիք: Շնչում եմ խորը: «Վայ քեզ Բուդդա ասողի...»: Անկախ ինձանից ելնում եմ տեղերիցս և ոտքերս քարշ տալով հասնում խոհանոց: Փորփրում եմ դեղերի դարակը, խմում եմ ծանոթ անունով մի դեղ, բայց հետո հիշում եմ, որ տաքության դեմ է: Ցավը կայծակի պես շամփրում է ուղեղս: «Չեմ հանձնվելու: Ես կապրեմ, իսկ դու կսատկես-կգնաս», – դիմում եմ ցավիս: «Ո՞վ է քեզ հիշելու, ու՞մ ես պետք, քեզ ո՞վ է սիրում, ա՛յ թարախ»: Միաժամանակ մեկ այլ ներքին ձայն կրկնում է. «Տեսնես կանցնի՞, թե՞ չէ: Բա որ չանցնի՞: Քաշվար»: Տանջվում եմ ևս երկու ժամ և հանկարծ միտքս պայծառանում է. ասես տիեզերքի խորքերից եկած մի շող լուսավորում է ինձ. «Դեղերի մեջ սրվակով դիմեդրոլ կա, այն կարելի է կոտրել, լցնել ջրի մեջ և խմել»: Այդ պարզ գործողությունն իրագործում եմ մեծ դժվարությամբ: Այլևս չեմ պառկում, աննպատակ թափառում եմ սենյակում: Գլուխս կախվել-հենվել է ուսիս, ծնկներս ծալվում են: «Մենակ առավոտը շուտ գա: Անուլին կասեմ, դեղ կբերի, ներվը կհանեմ, կսպանեմ»: Նստում եմ թախտին ու սպասում: Դիմեդրոլը սկսում է ազդել: Կոպերս փակվում են, և ես պատին քսվելով ընկնում եմ բարձին:

P.S. Հաջորդ օրը ցավն անհետացել էր: Քնելուց առաջ ընթերցեցի Նոր Կտակարանը և աղոթեցի ատամիս համար: Սուրբ Գիրքը փակելուց առաջ էջերի արանքում դրեցի Անուլի բերած անալգինը: Մարդ ես... Երազում տեսա եղբորս գլուխը: Հո չէի սափրել...

www.բնագիր.am

Վիոլետ Գրիգորյան

«Նեգրի համբույր»

Ընկերուհիներիս

Խմոր եւ կրեմ

150 գ. կարագ, 6 ձու, 2 բաժակ շաքարավազ, կես բաժակ կաթ, 2 ճաշի գդալ կակաո, 1/ 5 բաժակ ալյուր, սոդա, քացախ, վանիլին:

Գլազուր

70-75 գ. կարագ, 3 ճաշի գդալ կակաո, կես բաժակ շաքարավազ, 5 ճաշի գդալ կաթ:

Պատրաստման եղանակը

6 ձվերի դեղնուցները խառնել մեկ բաժակ շաքարավազի հետ, ավելացնել փոքր-ինչ հալեցրած կարագը, լավ հարել: Մեկ թեյի գդալ սոդան եւ մեկ ճաշի գդալ քացախը նախապես խառնել ու լցնել զանգվածի վրա: Ավելացնել 2 ճաշի գդալ կակաո, վանիլին, կես բաժակ գոլ կաթ եւ 1/ 5 բաժակ ալյուր: Այս ամբողջը լավ խառնել, դնել ջեռոցի մեջ եւ թույլ կրակով եփել մոտ 30 րոպե: Մինչեւ եփելը կարդալ հետեւյալը.

Սիրում մարմին, բոսոր սրտիկ, չքնաղ էույթ (ո՞նց անվանեմ), գուցե իրար էլ չենք տեսնի արեւի տակ, հողի վրա, ջրերի մոտ,

(«Էույթ» բառիկ, բարով եկար իմ տեքստի մեջ, խալխի աղջիկ, ինձ՝ եկվոր հարս, ղարիբ քույրիկ, իմ տողերին՝ ոտքդ խերով),

Գիտեմ, իրար էլ չենք տեսնի արեւի տակ, հողի վրա, ջրերի մոտ,

Մինչդեռ ես քեզ կուզենայի կու՜շտ համբուրել տասը տարի,

Էհ, ինչ արած, հիմա պիտի լավ հապավեմ, համառոտեմ, խիտ zip անեմ,

Տասը տարին կդարձընեմ տասը ամիս, տասն ամիսը կդարձընեմ ես տասը օր, տասը օրն էլ կդարձընեմ մի տասը ժամ՝ սիրո մի օր,

Էս մի օրն է բաժին հասել, փոքրիկ շահում, շահում խոշոր...

Էսօր իրար սիրիկ անենք տաս տարվա չափ, վաղը՝ ծյու-ծյու, վաղը՝ ադբոյ ...

Չեմ կշտանում, էլի ասեմ.

այսօրիկս,
էսօրսիրիկ, վաղամեռիկ, էգուցչիքս,
մեկանգամյա օգտագործման թիթեռնիկս,
վարժաձեռիկ, թունդ պաչիկս,
Լեւի գրդոն, Իմ ռազըվի,
հեւիհեւ տոն, վռազովի,
սեւդ ճերմակիս սազովի,
կարճընթացիկ, պահատեւիկ,
պահատվիկ թանկ պարգեւիկ,
թեթեւշունչիկ ու հեշտանցուկ,
դյուրամարսուկ, դյուրմոռացուկ,
գաղտնապաչիկ, խուփբերանուկ,
կարճ ու հակիրճ սեր-հապավուկ...

Չի հասկանում, լուռ նայում է... Չե՞ս հասկանում, լուռ նայու՞մ ես, դունչը ծնկիս, ներքեւից վեր լուռ նայում է, չի հասկանում՝ ինչ եմ ասում: Բայց ես լռել, չէ, չեմ կարող, խոսքով եմ ես սիրում սիրել:

Չեմ կշտանում, էլի ասեմ.

www.բնագիր.am

Հենց առավոտից, երբ որ քեզ տեսա նախաճաշելիս նորանկախ երկրի այս հյուրանոցում, ուր կանգ ենք առել մենք անցողակի՝ (ահաբեկչալի ինքնաթիռներից հազիվ մազապուրծ) ես՝ Երևանից, դու Փարիզ-Քոնգո երթուդառնալիս,

Հա, առավոտից, ի հեճուկս բիրտ օդակայանի, ավտոմատներով զինված տղերքի, մաքսատան բռի պաշտոնյաների և թշվառության և չտեսության և թիթիզության զանգուլակների, զոռով ընտրյալի նկարներով լի գորշ փողոցների, համառ աչքերով տեղացիների, որոնք ուզում են (ճիշտ մերոնց նման) արտասահմանցու քո զույգ աչքերը դարձնել հայելի – արտացոլվեցի՞ն, նկատեցի՞ր դու՝ Դրսից Եկածդ իրենց՝ պուճուրիկ գոյականներին...

Որ հիշեցրեցին ինձ իմ երկիրը,

Հենց առավոտից երազում էի սևաթույր գլուխդ տեսնել ազդրերիս արանքում բանտված

Եվ քո վարդագույն լեզուն էի ես տենչում իմ ներսը – ինչպես որ այդժամ բաժակի սուրճը – ալեկոծելիս,

Եվ քո ճեփ-ճերմակ ատամները, որ հացն էին խածնում, շերտ-շերտ պանիրը, ապա խրվեցին տռուզ ու փայլուն ծիթապտուղի (փշաքաղվեցի՜) ողորկ մսի մեջ,

Ապա թխվածքը՝ թանձր միջուկով... Եվ քաղցր հյութն էր բալով կրեմի, հո՛պ, ցայտում միջից ու հանկարծակի ներկում ուռուցիկ վայրի բերանդ կաթ ու արյունով,

Բկլիկ-բուկուլիկ, չէիր կշտանում, վերցրիր կծեցիր նաեւ տորթիկը՝ փափու՜կ, սրսռու՜ն ... Եվ ճերմակ սուֆլեն սեւ գլազուրի միջից հայտնված ատամների պես բացվեց ու ժպտաց՝ «Նեգրի համբույրը»...

Կտրուկ բարձրացրիր հայացքդ ափսեից՝ զգալով սևեռ բիբերս վրադ – ի՜նչ այրող լավա,

Սպիտակուցներն աչքերիդ վիհում – ա՜հ, ինչ խոռոչներ առեղծվածով լի – շողում են ասես փղոսկրյա տոն,

Թարթեցիր հապա աչքերդ թեթև, կոպդ խփեցիր – Նեղոսի թանձր ալիքը խփեց ափի շամբուտին, կոկորդիլոսը սահեց-ներծծվեց ջրերի խորքում, շառաչող օձը շշշշշշշառաչեց շ-ով, ալիքվեց-կլլվեց տաքուկ ավազում, և սև հովազը, տես, վա՜յ էլ չկա, ոստնեց ու չքվեց ափամերձ կայքում...

Հենց առավոտից...

Հիմա այստեղ ես, իմ տաք սենյակում,

Չեմ էլ հասկանում, թե ինչ ես խոսում, դունչս ծնկներիդ՝ ներքեւից վերեւ՝ միայն նայում եմ ու լսում միայն թմբուկները քո ձայնեղ պայթական, շնչեղ պայթական, ձայնորդ ռնգային հնչյունահոսքի,

Ոչինչ մի ասա, միայն շարժըվիր, մերկանդամ քայլիր, ձեռքդ բարձրացրու, գլուխդ թեքիր, կռացիր, նստիր, այդ բաժակը տուր, այն սրբիչը տար, կանգնիր, պտտվիր, ցատկիր, շուռ արի... Թույլ տուր հիանամ պիրկ գնդակներով՝ մաշկիդ տակ խայտուն եւ մկաններիդ համալիր խլիրտն այսպես ըմբոշխնեմ... Լավ, լույսը մարիր,

Ինչպե՞ս քեզ սիրեմ, սեւ աստվածություն, գուցե ծնկածա՞լ, ափերս ազդրերիդ՝ հանց երկրպագու աղոթքի չոքած, նշխարք կլլելիս,

Գուցե քո ներքո՞ – փուխր ու տաք ակոս՝ հերկումիդ հլու,

Թե՞ ելեւէջեմ քեզ վրա ասես ծիսական պարում...

Դու սեւ թավիշ ես, քեզ վրա նետված ճերմակ վարդ եմ ես,

Դու սեւ ածուխ ես, քո ներքո հանգչող ճերմակ մոխիր եմ,

Դու սեւ մետաքսն ես բանաստեղծության՝ սեւ շեղատառով նրբորեն ձգված, քո ներքո փռված ճերմակ թուղթն եմ ես...

Դու սեւ մի մութ ես՝ այս մութ սենյակում, բնավ չես զատվում խավար խավարից, ես քեզ չեմ տեսնում, լոկ բոցկլտում է – կայծակ հպանցիկ – ալ կարմիր լեզուդ՝ արյունոտ դրոշ մեր ազատության՝ ազդրերիս միջեւ ծուփ փողփողալիս...

Գիտե՞ս, ձերոնցից մեր երկրում չկա, ու եթե պատմեմ քեզ ճաշակելս, պիտի նախանձեն մեր կողմի կանայք ինձ՝ բախտավորիս, որ համտեսել եմ պտուղն էկզոտիկ, իսկ իրենք գիտեն պահածոներից...

Սեւ ծիթապտո՜ւղ, ողորկ ու փայլուն, տռուզ տուտուզիկ, պիրկ ու առաձիգ զեյթունի հատիկ,

Թող ատամներս – հիշո՞ւմ ես՝ քոնը՝ նախաճաշելիս հյութեղ հատիկի մեջ որ խրվեցին, փշաքաղվեցի, գդալը ընկավ ձեռքիցս հանկարծ ու կարմրեցի – խրվեն մսի մեջ քո այլաշխարհիկ, սե՜ւ ծիթապտուղ,

Քեզ ծամելու եմ դանդա՜ղ, հաճույքով, կլլելու եմ քեզ փշուր-փշուրիկ ու պտղունց-պտղունց – այնքան սովա՜ծ եմ – կուլ եմ տալու քո միսիկն համովիկ եւ քամելու եմ հյութդ բաղձալի, օ՜, դառն ու անուշ...

Ինձանից հետո, երբ որ կշտանամ, քեզանից մի չոր կորիզ կմնա սավանի վրա...

www.բնագիր.am

Արդյունքները
Եթե դուք կարդացել եք մինչեւ

25-35 տողերը –
Դու առաջնորդվում ես բանականությամբ: Մինչեւ որեւէ զգացմունքի հետեւելը դու երկար մտածում ես, կշռադատում եւ երբեք գլուխդ չես կորցնում, չես հետեւում զգացմունքին: Դու համոզված ես, որ միայն ճիշտ կշռադատելով եւ բանականությանը հետեւելով կարելի է հասնել երջանկության: Ռոմանտիկ սիրով տարվելը քեզ թվում է մանկական խաղ, թեթեւ զվարճանք: Փոփոխությունները հաստատապես քեզ համար չեն: Դու քո ձեռքում ամուր պահում ես այն, ինչ որ ունես, թեկուզ պարզ չէ՝ երջանիկ ես քո ունեցածով, թե ոչ: Դու երբեք չես հավատում ոչ պատահականություններին, ոչ էլ նրան, որ ճակատագիրը կարող է քեզ էլ ժպտալ: Դու նախընտրում ես կառչել հնից եւ չփոփոխել քեզ համար սովորական դարձած իրադրությունը, կամ որեւէ կոնկրետ, նոր քայլ անել:

35-45 տողերը
Դու տպավորվող ես, եւ զգացմունքը քեզ համար կարեւոր է, չնայած կյանքը սովորեցրել է քեզ, որ այն հաճախ չպետք է լինի առաջին տեղում: Պատահում է, որ սերն ամբողջովին իշխում է քո հոգուն, սակայն դու անմիջապես չես կորցնում գլուխդ: Դու ռեալիստ ես, եւ հաճախ միտքդ սրտիցդ առաջ է ընկնում: Դու նաեւ հպարտ ես, եւ հաճախ մարդիկ քո այդ հատկությունը շփոթում են սառնասրտության հետ: Դու աշխատում ես ինքդ քեզ չդնել շրջանակների մեջ, չես բավարարվում քո ստեղծածով եւ ձգտում ես ավելի լավին ու բարձրին: Իսկ երբ ինչ-որ բան քեզ ձանձրացնում է կամ նյարդայնացնում, դու թողնում ես ամեն ինչ ու հեռանում, բայց բոլոր կամուրջները չես այրում: Դու չես վախենում փոփոխություններից եւ հավատում ես ինքդ քեզ ու քո ուժերին, ուղղակի երբեմն խնայում ես ուժերդ:

45-55 տողերը
Դու շատ զգայուն ես: Նվիրվում ես քո սիրելիին ամբողջովին եւ չես ամաչում ցուցադրել քո զգացմունքները: Սակայն եթե քեզ ու քո մեծ նվիրումը չեն գնահատում, քո զգացմունքը քեզ համար տառապանքի աղբյուր է դառնում: Դու սիրում ես փոփոխություններ ավելի, քան որեւէ մեկը: Դու երկար չես նստում տեղում, շարունակ ձգտում ես փոխել կյանքդ, հագուստդ, աշխատանքդ, հաճախած ռեստորանդ եւ սաունան: Նետվում ես նորանոր, նույնիսկ անսովոր զվարճանքների գիրկը, վայրկենական արտասովոր հաճույքի համար պատրաստ ես վճարել հարեւանիդ երկու ամսվա աշխատավարձի չափ գումար: Սովորաբար պատասխանատվություն չես կրում ոչ մի հարցում: Քեզ շրջապատող մարդիկ եկել են այն համոզման, որ հույս չեն կարող դնել քեզ վրա: Երբ դու հիասթափվում ես որեւէ բանից, անմիջապես թողնում ես ամեն ինչ ու հեռանում եւ չես էլ փորձում ինչ-որ բան ուղղել կամ փոխել:

55 եւ ավելի տողերը
Եթե դու կարդացել-հասել ես այս տողին, նույնիսկ չես էլ զգացել վառվածի հոտը, ծուխն էլ քեզ չի շեղել ինքնամոռաց վայելքի ծեսից, ստիպված ենք ուղղակի ասել՝ տորթն արդեն այրվել է, այս անգամ էլ դու «Նեգրի համբույրը» չկերար:

www.բնագիր.am

Սամվել Յավրյան

* * *

Պատի վրա շան դեմքն է,
Ներքևում՝ անիմաստ ուրախության դեմքը:
Կողքն էլ իմ դեմքն է,
Ուրախ…
Ուրախ եմ ես երեկոյան,
Ատամներս բերանումս,
Աչքերս ճակատիս,
Մազերս դեմքիս,
Ես սպիտակ պատի վրա եմ:

* * *

Ես երկար թափառեցի քաղաքում
Եվ հասկացա՝ անմիտ է այսպես թափառել,
Մութ քաղաքում՝ հենց այնպես,
Վերադառնալով տուն՝
Դռան առաջ երկար կանգնեցի…

* * *

Նստած կրակի կողքին
Չնկատեցի,
Կես գիշերին
Վառվեցի ինքս,
Վառվեցին ունքերս, թարթիչներս, ակնոցս
Վառվեցին մազերս,
Վառվեցին շուրթերս,լեզուս,
Վառվեց թափանցիկ կրծքավանդակս,
Վառվեցին ծնկներս,
Միայն ձեռքերս էին դանդաղ վառվում
Փափուկ մթության մեջ
և այդպես մինչև առավոտ:

* * *

Ես չեմ քնել տասը հազար գիշեր…
Իմ ստամոքսը լցված է ձնագնդերով,
Ծխախոտով և կարտոֆիլի կլեպով:
Իմ զարկերակը
Մեխել են ժանգոտ մեխերով,
Իմ սիրտը կարծես փոշոտ, ընկճված
Լամպ լինի
Հանրակացարանի արտաքնոցում…
Եվ ամբողջովին ես պլաստիրինե գունդ եմ՝
Գցված ինչ-որ մեկի կրակի մեջ:
Համաչափ տարածվելով՝
Հալվում եմ ագահ կրակի մեջ:
Իմ վերևում միայն աստղերով լի երկինքն է,
Եվ ինչ-որ բարի,
ուշադիր
դեմքեր :

* * *

Ես ընդհանրապես նման չեմ,
Իսկ դու նման ես…
Դու էլ ես նման…
Եվ նա էլ է նման,
Նրա դեմքը երկաթից է,
Եվ նրանք էլ բոլորը նման են,
Արյունը այդպես էլ եռում է,
Իսկ ես ընդհանրապես նման չեմ:

* * *

Աշխարհը քեզ հետ է…
Աշխարհը հենված է քեզ վրա…
Պահիր աշխարհը քեզ վրա,
Աշխարհը ապրում է միայն քեզանով,
Դե պահիր նրան քեզ վրա:

* * *

Մտնելով տաք սենյակ ցրտից՝
Ակնոցը քրտնում է,
Դույլից ջուր ես խմում,
Ձրում տեսնում ես քո դեմքը,
Կանգ ես առնում, քարանում,
Քեզ թափ տալիս…
Խոտը կանաչ գույն ունի:
Շնչում ես
և արտաշնչում:

* * *

Սպիտակ անտառում
ոչ ոք
ոչ մեկի
չգտավ:

* * *

Կուզենայի բռնել իմ դեմքը
Ոսկրոտ թռչնի ճանկերով,
Քաշեի ու պոկեի ինձնից,
Գցեի, տրորեի, ոտնահարեի:

* * *

Անպաշտպան ճանապարհին
Սառած արյունը
Հալվում է:

* * *

Աչքերս դուրս ընկած,
Վախից ծռված,
Ծանր շնչելով,
Ձգված բերանով,
Տրորված մղձավանջով՝
Ես վազում էի փողոցով:
Ետևիցս,

www.բնագիր.am

Ձգված աշնանային շարասյունով,
Ինձ հետապնդում էին
Տասնչորս
Սև
Թռչուն:

* * *

Ձեր դեմքերը նման են թանով ապուրի,
Ձեր կյանքը նման է յուղոտ թղթի,
Ձեր երազանքները նման են լվացված սավանների,
Ձեր աշխարհը նման է հակագազի:

* * *

Շտապեցի,
Հայտնվեցի,
Հրաժարվեցի,
Խորտակվեցի,
Շրջվեցի,
Ոչ ոք…

* * *

Քանդված երկաթգիծ,
Ժանգոտ, ծռված գործարան:
Թզուկ քաղաք հորիզոնում:
Թափառական ծառերի կույտ,
Իհարկե՝ աղբանոց…
Եվ մոխրագույն մղձավանջ՝
Հենց այստեղ են ինձ սպանել,
Իսկ հետո չեն գտել:

* * *

Կանգնիր և նայիր, կանգնիր և լռիր…
Ասֆալտե օրենքը խժռում է իմ անտառը:
Իմ կոկորդը քերում է գազի խողովակը:
Կանգնիր և նայիր, կանգնիր և լռիր…
Ասֆալտե օրենքը փակում է իմ բերանը,
Սոցիալական մազութը փակում է աչքերս,
Քիմիական ծիծաղը՝ իմ արհեստական ուղեղի…
Կանգնիր և նայիր… կանգնիր և լռիր…

* * *

Մետրոպոլիտենում երկու կին՝
Ներկած մազերով, կպատմեն
Նոր հարևանի մասին, մանկական կերի մասին,
Տղամարդկանց, որոնք հեռանում են
և վերադառնում:
Բոլորը կգան կգնան,
Դռները կբացվեն և կփակվեն,
Իսկ մետրոյի ապակու մեջ,
Սուր անկյան տակ,
Մեկ վայրկյանի ընթացքում,
Միայն մեկ վայրկյանի ընթացքում
Կերևա նրա խելագարված դեմքը:

* * *

Մարմինը ծաղկում է աղիքներով դուրս,
Մարմինը զարմանում է,
Մարմինը սովորում է աղիքներով դուրս,
Վազում է արյունը, միևնույն է ուր,
Միայն թե փախչել, չլինել գերի:
Ուզում է, բաց թող,
Թող զբոսնի իր համար:

* * *

Մաքրիր փսլինքդ, լպստի,
Պատմիր այն չեղածի մասին,
Պարիր քո ուրախության հետ,
Ձգիր ամուր քո գոտին,
Բարձրացրու, ինչքան կարող ես, վերև
Քո կախարդական օձիքը,
Խոնարհվիր, ինչքան կարող ես, ներքև,
Թաղիր, ինչքան կարող ես, խորը,
Լռիր, ինչքան կարող ես, բարձր,
Շտապիր այնքան հեռու,
Ման արի ափսեիդ մեջ,
Միգուցե մնացել է գոնե մի բան:

* * *

Մոտիկ - մոտիկ,
Հեռու - հեռու,
Ցածր - ցածր,
Բարձր - բարձր,
Խորը - խորը,
Շոգ - շոգ,
Ցուրտ,
Սոված,
Կամաց - կամաց
Դաշտերի վրայով, արտերի վրայով,
Չդիպչելով խոտերին, չդիպչելով ջրին…
Ձարթնի, գլխիդ մեջ մուկ է:

* * *

Ինչ է նշանակում…
Ինչ է տեղի ունենում,
Երբ դադարում են աշխատել օրենքները,
Երբ անհետանում է
Երկրագնդի ձգողականությունը:
Հրաժարվում է,
Մոռացվում է,
Երկիրը չի բռնում,

www.բնագիր.am

Խփում է, ուղարկում հեռու,
Հրում է անդունդ:
Երբ մայր հողը
Ասում է քեզ քնքուշ ու բարի.
- Սատանայի ծոցը:
Նա ասաց,- Գնացինք…
Ու թափ տվեց ձեռքը:

* * *

Ահա և հոյակապ է,
Ահա և հիասքանչ է,
Բոլորը մահացած են,
Կարելի է հանգստանալ:
Կարելի է ցրվել,
- Գնացեք ձեր տները,
Բոլորը մահացած են:

* * *

Աշխարհ թողեք գայլերի ոհմակը:
Հեռացեք, պատեր, սև գիշերով,
Թող դառնամ վերջին սրիկան,
Թե գազան դառնամ՝ մոխրագույն մորթով,
Լինեմ սոված, ուտեմ,
Լինեմ հիմար, լինեմ խելոք,
Միգուցե գնամ քաղաք,
Որտեղ կամուրջները քարից են:
Մահանամ այնտեղ,
Միգուցե ցրտից,
Միգուցե սովից…

* * *

Երբեմն մահանում են աստվածները,
Եվ իրավունք չկա այլևս հավատալ:
Երբեմն ջնջվում են ճանապարհները,
Խաչերով փակվում են դռները,
Երբ մահանում է աստվածուհին:
Երբ հեռանում են հոգիները,
Կրակը խժռում է պատերը,
Եվ տաճարը վերածվում է մոխրի:
Այժմ հավատում են միայն
Ուսադիրներին և թմրանյութերին:
Կմարեն ճրագները, կլռեն սուրբ ձայները,
Չի լինի ոչ դժոխք, ոչ դրախտ:
Երբ մեր աստվածները կմահանան…
Դե գնա ու գործի անցիր:
Պետք չէ վախենալ, ոչ ոք քեզ չի պատժի…
Այժմ ոչ մի բան սուրբ չէ:

* * *

Բառերս քիչ են մտքերիս համար,
Հավատքս քիչ է բառերի համար,
Երազներս քիչ են քեզ համար:
Ովքեր գիտեն, լռում են,
Ովքեր ուզում են, գոռում են,
Ով ճախրում է, նա երկնքին չի նայում,
Ով մոռացել է ժամերի մասին,
Նա չի վախենա բոպեներից:
Քիչ են ձայները լարերի համար,
Քիչ են երգերը կռվի համար,
Իսկ մութ անկյունում հեռախոսն է զնգում:
Ովքեր լռում են,
Նրանք էլ գիտեն ինչ-որ մի պատասխան:
Ով գոռում է,
Նրան էլ պետք է ինչ-որ մի հարց:

* * *

Ահա նստեցի, նստեցի ու որոշեցի գրեմ պատմվածք:
Դե՝ առաջինը ինչի մասին:
Դե դա շատ հեշտ կարելի է մտածել,
Մինչ գրում ես,
Ամպայման ինչ-որ մի բանի մասին կգրես:
Ահա նույնիսկ ինչ որ հիմա գրեցի, դա էլ է գործ:
Եվ ինչի ամպայման պետք է գրել…
Գրել կարելի է ամեն ինչ .
Օրինակ, բառեր,տառեր,թվեր տարբեր …դա էլ է գործ:
Ահա կգրեմ թվեր: Նայիր՝ 2,10,17,1000,5,748.
Դե էլի կարելի է, ուղղակի չեմ ուզում,
Եվ ընդհանրապես ոչ մի բան չեմ ուզում:Ահա հենց
այդպես…

* * *

Ոսկորներս իրար խփեք
Գերեզմանիս վրա,
Ոտնահարեք հողը
Գերեզմանիս վրա,
Անիմաստ ծիծաղեք
Գերեզմանիս վրա,
Խեղդվեք վախով
Գերեզմանիս վրա,
Երգեք վայրի երգ
Գերեզմանիս վրա,
Եվ կշարժվի հողը իսկույն,
Հողը ինձ վրա…
Եվ դուրս կգամ ես ու կասեմ.
– «Սա ես եմ» լա-լա-լա…

www.բնագիր.am

Վարդան Ջալոյան

Մտավորականությունը, զանգվածային մշակույթը և սերը

Ամեն մշակույթ ունի մի հատված, որն անվանում են գռեհիկ, ցածր, անճաշակ, և սովորաբար ավելացնում, որ հարկավոր է այդ վտանգից փրկել բարձրաճաշակ, էլիտար մշակույթը և արվեստը: Հարկավոր է փրկել ամբոխից, զանգվածից: Ինչին որ դիպչում են ամբոխի կեղտոտ ձեռքերը, նրբաճաշակ մտավորականի համար կորցնում է իր աուրան և հրապույրը: Այլ ենք մենք: Մենք ամբոխ չենք: Մի հետազոտող սրամտորեն նկատել է.«Ամբոխը ուրիշներն են»:

Այստեղ պարադոքս կա: Թվում է, թե Լուսավորականության դարաշրջանում առաջ եկած, ռոմանտիզմի դարաշրջանում ազգայնականություն հայտնագործած, ժողովրդի հետ միաձուլվել ձգտող, բանահյուսության պաշտամունքով ապրող մտավորականությունը այլ վերաբերմունք պետք է ունենար «գռեհիկ» մշակույթի նկատմամբ:

Բացասական վերաբերմունքի տեսական հիմքերը հետազոտողները գտնում են նորմատիվ գեղագիտական դատողության հասկացության մեջ, որի վերջնական ձևակերպումը տվել է Ի. Կանտը: Ժամանակակից «անմիտ սպառողների մշակույթի» քննադատությունը կատարվում է նույն նորմատիվ գեղագիտական դատողության միջոցով: Այն գծում է բարձրաճաշակ և ցածրաճաշակ մշակույթների տարբերությունը: Առաջինը մտային է, երկրորդը՝ անմիջական, չմիջնորդավորված: Առաջինը իրեն հակադրում է կյանքին, երկրորդը՝ նրանց միջև սահման չի դնում: Ինչպես նկատել է Մ. Զոշչենկոն. «Կյանքը պարզ է, վիրավորական և մտավորական մարդու համար չէ»: Ամբոխին, նաև՝ ժողովրդական մտածողությանը, վախեցնում է ձևի ու ձևականության ամեն մի առկայություն, երկիմաստության և վիճակի բարդությունը: Հասարակ մարդիկ լավատես են և պահանջում են, որ լատինամերիկյան սերիալի հերոսուհին «հասնի իր մուրազին»:

Մտավորականի վրեժը նույնքան կտրուկ է. բիսերով խաղերը նախատեսված չեն բոլորի համար, ինչը հասարակ մարդը հասկանում է: Թանգարանների, օպերաների շքեղությունը, ավանգարդիստների ձևական էքսպերիմենտների գաղտնագրերը միտված են պրոֆաններին հեռու պահելու, նրանցից սահմանազատվելու նպատակին: Ցրտաշունչ քաղաքավարությամբ նրանք ոչնչացնում են իրենց մերձենալու հասարակ մարդու ողջ ցանկությունը:

Էլիտար արվեստ ստեղծողները կարող են պատկանել միայն փակ խավի, այնպիսի խմբի, որը հետևում է աղանդի ներքին օրենքներին: Բայց ավելի էական է այդ խավի մեկ այլ առանձնահատկությունը. նա իրեն իրավունք է վերապահում տիրական, ուսուցողական տոնով խոսել ամբոխի հետ, կարծես այն բաղկացած է անմիտ, փոքր երեխաներից: Այս կետում մտավորականի և պետության հավակնությունները համընկնում են: Երկուսն էլ ունեն օրենսդրի հավակնություն: Այստեղից՝ պետության և մտավորականի հարաբերության երկվությունը. նրանք կա՛մ հայտնաբերում են իրենց հոգեհարազատությունը և կրքոտ սիրահարների նման, փակ աչքերով նետվում միմյանց գիրկը, կա՛մ խանդոտ ատելությամբ, յուրաքանչյուրը միայն իրեն հռչակելով ճշմարիտ օրենսդիր՝ պայքարում փոխադարձ ոչնչացման համար: Երևույթ, որը երբեմն անվանում են հոգևոր և աշխարհիկ իշխանությունների պայքար, և որը օրինակներով լուսաբանելու կարիք չունի:

Գրականությունը ևս բարձրաճաշակի ու ցածրաճաշակի մրցակցության ոլորտ է: Առաջինի համար մտավորականները ստեղծել են գեղագիտական տեսություններ, գրականագիտություն և քննադատություն: Երկրորդը կարելի է վերլուծել սոցիոլոգիական եղանակով: Այդպիսի գրականությունը վերլուծելու համար հավանաբար հարկ է գործել ինչպես հնագետ, որը գրավոր վկայված տվյալների բացակայության պարագայում, ելնելով շերտի խորությունից, գտածոյի առանձնահատկություններից ու ինչ-ինչ հատկանիշներից, թվագրում և բնութագրում է այն: Գրականությունը գործ ունի գիտակցության հետ, որը փոխվում է ժամանակին համընթաց: Սա դետեկտիվի նմանվող պատմություն է, երբ պետք է միայն հետքերով պարզել «մեղավորին»: Կարելի է պատկերացնել, օրինակ, «Անմեղության կորուստը հայ գրականության մեջ» խորագիրը կրող մի հետազոտություն սիրային ժանրի մասին: Պատկերացրեք ճանապարհը, որ անցել է սիրային բանաստեղծությունը կամ սիրավեպը իր սկզբնավորումից մինչև այսօր. բնապահպանական առումով մաքուր աղբյուրների ջուր հիշեցնող (որն, իմիջայլոց, այսօր վաճառվում է շշերով) ռոմանտիկական բանաստեղծությունից մինչև սեռական գործողության մանրամասնություններով լեցուն ժամանակակից որոշ գործեր: Սիրային ժանրը կարող է դառնալ փորձաքար «գռեհիկ» մշակույթի հետազոտության համար: Սիրայինը, որովհետև սա ամենատարածված ժանրն է: Հայաստանի Հանրապետության (համարյա) յուրաքանչյուր քաղաքացի համոզված է, որ երբևէ (պատանեկության տարիներին, մեկ անգամ, բազմակի) իրեն այցելած սիրո զգացմունքը արժանի է արձանագրվելու հայ գրականության ոսկե մատյաններում:

www.բնագիր.am

Արդիական սերը տարբերվում է նախորդ դարաշրջանների, օրինակ՝ միջնադարի ավատատիրական կամ նահապետական գյուղի ընդերքում ծագած սիրո զգացումից: Այս վերջին միջավայրում այն խիստ հազվագյուտ, համարյա հրաշքին համազոր երևույթ էր, և քանզի խիստ հազվագյուտ էր, շատ արագ (կարելի է ասել մի քանի ամսվա ընթացքում) հակասության մեջ էր մտնում հասարակական բարքերի հետ և ողբերգական ավարտ ունենում: Այդպիսին են «Լեյլի և Մեջնուն»-ի, «Ռոմեո և Ջուլիետ»-ի, «Անուշ»-ի սյուժեները:

Այլ է ժամանակակից հասարակությունը: Հավանաբար այսօր սերը հասարակության հետ հակասության մեջ չի մտնում, այդ պատճառով մատչելի է հասարակության լայն խավերին և զանգվածային բնույթ է ստացել: Զուր չէ, որ ավանգարդի էլիտարությունը փառաբանող, «Ամբոխի ապստամբությունը» գրքի հեղինակ Օրտեգա-Ի-Գասետը բացասաբար էր վերաբերում սիրուն: Սիրո, որպես զանգվածային երևույթի, դրսևորումներից նշենք սիրո գարնանային համաճարակները կամ խուճապները: Սիրային զգացումների մի զգալի մաս հարուցվում է զանգվածային ներշնչման մեխանիզմով:

Սա, անշուշտ, չի նշանակում, որ բնակչության լայն խավերի ներկայացուցիչը իր սերը չի վերապրում որպես անկրկնելի ու ինքնատիպ, բայց չի նշանակում նաև, որ սիրելի էակը նրա համար այլևս աննման ու անփոխարինելի է: Համարվում է, որ հորդ տված զգացմունքները, ադրենալինի քանակությունը թույլ չեն տալիս նկատել, որ (սովորաբար) քո առջև սովորական տղա/աղջիկ է կանգնած, զանգվածային հասարակությանը բնորոշ սովորական արտաքինով, ստերեոտիպային զգացմունքներով և մտածողությամբ: Հայտնի է, որ սերը կույր է: Այստեղից ժամանակակից սիրո մեջ առկա տրամաբանությունը. այն չի ավարտվում ողբերգությամբ, այլ՝ հիասթափությամբ:

Հայտնի է, որ սիրո ամենակարևոր խնդիրը պատկանելիության թնջուկն է. «դու իմն ես, դու իմը չես»: Այս առումով հետաքրքիր է Հեգելի դասակարգումը: Հեգելը ճանաչում է սեփականության ստեղծման երեք եղանակ. կողոպուտ-յուրացում, փոխանակում և անվանակոչում: Միջնադարի բիրտ բարքերը ենթադրում են սեփականության ստեղծման առաջին եղանակը: Համապատասխանաբար միջնադարյան քնարերգուի ուշադրության կենտրոնում իր սիրեցյալի բարեմասնություններն են, որոնք մատչելի չէին բոլորի, հասարակ մարդու հայացքի համար, քանզի հաճախ կինը փակված էր տան խոր և անմատչելի անկյունում, իսկ սիրեցյալների հանդիպումները գաղտնի էին: Կինը գանձ էր և պատկանում էր ավարառուին: Այդ է պատճառը, որ սիրո համար ճգնաժամային պահերին համարյա միշտ միակ ելքը մնում էր «աղջիկ փախցնելը»:

Բուրժուական հասարակությունը վրդովմունքով մերժում է այդ բիրտ եղանակները և կողմնորոշվում սեփականության ստեղծման երկրորդ եղանակի, պարզ ասած՝ առևտրի վրա: Սա մարմնավաճառություն և պոռնոգրաֆիա չէ, երբ կինը վերածվում է անշունչ առարկայի: Ընդհակառակը. անձնական հարաբերություններում այն ենթադրում է փոխադարձություն, ավելի շուտ այդ փոխադարձությունը երաշխավորող հոգեկան պարտավորությունների՝ հավատարմության, վստահության և այլնի անթերի ու արդար կատարում, որոնք կարևոր հատկանիշներ են նաև կայուն տնտեսություն ունենալու, առևտրական փոխշահավետ համագործակցության համար: Ինտիմ հարաբերությունների բուրժուական սխեման իր էությամբ նահապետական է: Սա մեզ թույլ է տալիս բուրժուական սերը մեկնաբանել որպես տղամարդու կողմից ձեռնարկված գործ, ձեռնարկատիրություն՝ ուղեկից կասկածներով. արժե՞ արդյոք կատարել համապատասխան զգացմունքային ներդրում: Իր բնույթով մասկուլինային լինելով՝ այն հաճախ շեշտում է կանացի խարդավանքների պահը, ինչը համեմատելի է կապիտալիզմն ուղեկցող ճգնաժամերի հետ:

Զանգվածային մտածողությունը ըստ էության անանուն է, զանգվածային մշակույթին պատկանող արտեֆակտի հեղինակը տարրալուծված է զանգվածային մտածողության էության մեջ, նրա արտահայտությունն է՝ հիմնված հասարակական նախապաշարումների, կարծրատիպերի և կլիշեների վրա: Այս մշակույթը իր սպառողին հրամցնում է հասարակական առօրյա մտածողության մեջ արդեն արմատավորված, գովազդված և ապրանքային տեսակետից անկասկած արժեքներ՝ մայր, հայրենիք, Աղթամար և այլն: Այդ անկասկածելիությունը հանգեցնում է զանգվածային գրականության մեջ կայուն բառարանի ձևավորմանը: Եթե սիրային բանաստեղծություն է, ապա անվերջ կրկնվում են «սպասում», «թախիծ», «տենչանք», «վերհուշ», «անուրջ», «երազ», «լաց» բառերը և իհարկե՝ «սիրել» բայը «սիրտ», «հոգի» և այլ նման գոյականների համադրությամբ: Սյուժեն նույնպես պարզ է. կա՛մ հեղինակն է ընդառաջ գնում իր սիրեցյալին, կա՛մ՝ ընդհակառակը: Արդեն նշել ենք կասկածների և երկմտության դերը բուրժուական սիրային հարաբերություններում և այն, որ կասկածամտության մթնոլորտը ժանրի բնութագիրն է: Համլետյան նշանավոր «լինե՞լ, թե՞ չլինել» հարցը այդ գրականության մեջ վերաձևակերպվում է որպես՝ «սիրու՞մ է, չի՞ սիրում, սիրե՞լ, թե՞ չսիրել» բանաձևի:

Միշտ չէ, որ զանգվածային մշակույթ ստեղծողները ապաշնորհ մարդիկ են. ոչ բոլորն են գերադասում դժվար ուղիները: Բայց տաղանդավոր մարդը, ի տարբերություն ապաշնորհի, ուժեղացնում և առավելագույնի է հասցնում

www.բնագիր.am

կլիշեավորված զգացումները: Այդպիսին է, ըստ իս, Հ. Շիրազը և մասնակիորեն՝ Պ. Սևակը:

Եթե գեղագիտական նորույթի և փորձարարության բացակայությունը այդպիսի մշակույթում չափանիշ է, ապա այս ասպարեզում և՛ տաղանդավոր, և՛ անտաղանդ հեղինակի ստեղծագործությունները անփոխարինելի աղբյուր են կենցաղային մտածողության հետազոտության համար: Այդպիսի մտածողությունը համահարթեցնում է ամեն ինչ՝ միօրինակություն մտցնելով կյանքի բոլոր բնագավառներում. քաղաքական գործիչների խոստումները հիշեցնում են սիրային խոստումներ, և՝ հակառակը: Հնարավորություն է ստեղծվում դիտարկել կանանց որպես ընտրազանգված, իսկ տղամարդկանց՝ որպես նրանց ընտրյալներ, որ գործուղված են սիրո և ընտանիքի խորհրդարան:

Մտավորականը մոդեռնիզմի ծագումից ի վեր հակված է համարել իրեն ամբոխի հակոտնյան, և կարելի է սպասել, որ նրա վերաբերմունքը սիրո նկատմամբ ևս կլինի բացասական: Եթե կյանքը, այդ թվում՝ սերը, անիմաստ է, վիրավորական և մտավորականի համար չէ, ապա նա հակված է կարծելու, որ կյանքը աբսուրդ է, իմաստ չունի: Այդ վերաբերմունքը նկատի ունի Ե. Չարենցը, երբ գրում է.

Հիմա ամեն ինչ անիմաստ է,
Իզուր այդպես դու շիկնեցիր.
Ինչի՞դ է կյանքը, իր իմաստը,
Հիմա ամեն ինչ անիմա՜ստ է...

Ժամանակակից հասարակությունը զանգվածային հասարակություն է, իշխող մշակույթը՝զանգվածայինը: Մտավորականը, մերժելով զանգվածային մշակույթը, մերժում է ամբոխի, հասարակ մարդու նաիվությունը՝ կենսասիրությունը: Անիմաստությունը մտավորականները ի վերջո վերածել են աշխարհայացքի՝ աբսուրդի կամ էկզիստենցիալիզմի փիլիսոփայության: Եթե կյանքը անիմաստ է, սիրուն հավատում է միայն նաիվ մարդը: Ֆրանսիական սոցիոլոգ Ժ. Էլյուլը գրում է. (աբսուրդի փիլիսոփայությունից հետևող) «դիրքորոշումը ակնհայտորեն հանգեցնում է տրոհված և հակասական պահվածքի նաև «տղամարդ և կին» հարաբերություններում: Այն վերածվում է լիակատար անորոշության, և անհատին մնում է միայն «ազնիվ լինել իր առջև»: Միակ ոչ աբսուրդը, ինչը կարելի է հաստատուն համարել, ինքդ քո առջև ազնիվ լինելն է: Լիովին, ամեն ակնթարթ լինել ինքդ քեզ հետ ազնիվ: Եթե այդպես է՝ ես սիրում եմ կնոջը (տղամարդուն) և տրվում եմ այդ սիրուն: Բայց ես պետք է խուսափեմ, զգուշանամ այդ սերը վերածել սովորույթի, բարության, հավատարմության. ինձ հարկավոր է շրջահայաց լինել՝ զգալու պահը, երբ պետք է ազնվորեն ասել, որ ամեն ինչ վերջացած է, և խզել կապը: Որտե՞ղ է այստեղ «ուրիշը»: Մենք պետք է արձանագրենք, որ գոյություն չունի և ոչ մի ճշմարիտ հարաբերություն այդ «ուրիշի» հետ»:

Աբսուրդը կարելի է վիճարկել՝ փոխելով մեր վերաբերմունքը «ուրիշի» հետ: Որպեսզի հաղթահարվի աբսուրդի իրադրությունը, որը մոդեռնիստական աշխարհայացքի քվինտէսենցիան է, հարկավոր է մերժել, վերաիմաստավորել «դժոխքը ուրիշներն են», «Ուրիշի» հայացքը անտանելի է» էկզիստենցիալիստական բանաձևերը: Հիշենք սակայն, որ «Ամբոխը ուրիշներն են», ուրեմն՝ ուրիշները ամբոխն են: Հայտնաբերել «ուրիշին» քո մեջ, նշանակում է ամբոխից մի կտոր ընդունել քեզ մեջ: Զանգվածային մշակույթի առաջ մտավորականի անվերապահ զինաթափումը կնշանակեր ինքնաոչնչացում: Ելքը զանգվածային մշակույթի մասնակի, հեգնական ընդունումն է: Մտավորականը հաղթահարում է իր մոդեռնիստական նախապաշարումները, համաձայնելով, որ ինքը ապրում է այլ՝ պոստմոդեռնիստական իրադրությունում: Այդ իրադրությունում նա համաձայնում է սիրո՝ զանգվածային մշակույթի կողմից զավթված լինելու հանգամանքի հետ, բայց առիթ չի դարձնում այն մերժելու. նա կարողանում է ևս մեկ անգամ խոսելու սիրո մասին: Հնարավոր պահվածքի տարբերակներից մեկն էլ առաջարկում է Ումբերտո Էկոն. «Պոստմոդեռնիզմի պատասխանը մոդեռնիզմին հանգում է անցյալը ընդունելուն. եթե անցյալը անհնար է ոչնչացնել, քանզի այդ դեպքում դատապարտված ենք լռելու, ապա անցյալը հարկավոր է վերանայել, հեգնաբար, առանց նաիվության: Պոստմոդեռնիզմի մոտեցումը ինձ հիշեցնում է այն մարդուն, որ սիրահարված է լուսավորյալ տիկնոջը: Նա գիտե, որ չի կարող ասել «ես քեզ խելագարի նման սիրում եմ», քանզի գիտե, որ տիկինը գիտե (և տիկինը գիտե, որ նա գիտե), որ այդ մասին գրել է Լիալան»: Տեղական իրողություններում դա մոտավորապես նշանակում է, որ այն արդեն հնչել է Արամ Ասատրյանի երգերում: Բայց Ու. Էկոն ելք տեսնում է. «Նա կարող է ասել. «Ինչպես կասեր Լիալան՝ «ես քեզ խելագարի նման սիրում եմ»: Այդպես նա կարող է խուսափել կեղծ անմեղությունից և հստակ հայտնել, որ անմեղ զրույցը անհնար է: Բայց նմանապես կարողացավ հայտնել տիկնոջը այն ամենը, ինչ կցանկանար ասել. որ սիրում է նրան և սիրում է կորուսյալ անմեղության դարաշրջանում: Եթե տիկինը հասկանում է խաղի կանոնները, ապա կհասկանա իրեն ուղղված բառերը որպես սիրո խոստովանություն: Նրանցից ոչ մեկը իրեն

www.բնագիր.am

անմեղ չի զգա: Նրանք երկուսն էլ ընդունում են անցյալի մարտահրավերը, այն, որ այդ բառերը ինչ-որ մեկի կողմից արդեն ասվել են, և որ դա անհնար է անտեսել: Երկուսն էլ գիտակցաբար և հաճույքով կխաղան հեգնանքի խաղը: Եվ երկուսն էլ կկարողանան խոսել սիրո մասին»:

Հնարավո՞ր է, որ նրբամիտ մտավորականը Հայաստանում կարողանա ևս մեկ անգամ խոսել սիրո մասին: Մատնանշենք Վիոլետ Գրիգորյանի վերջին տարիների սիրային բանաստեղծությունները կամ Արմեն Շեկոյանի՝ զանգվածային մշակույթի հեգնական արծարծումը իր ստեղծագործություններում: Բայց «պոստմոդեռնիզմ» տերմինը դեռևս խորթ է մտավորական լայն զանգվածներին, նրանք հիմնականում դեռևս կողմնորոշված են մոդեռնիստական հարացույցի վրա, երբ.

Հիմա ամեն ինչ անիմաստ է,
Իզուր այդպես դու շիկնեցիր...

Ուրեմն սիրո մասին այս մի խոսակցությունը ևս ավելորդ չէր:

www.բնագիր.am

Սոնիա-Սանան

Մաստուրբացիա՝ թավջութակի ընկերակցությամբ

մարմնիս վրայ
կը հատնի
գիշերը

սպասումս
կը դանդաղի
երաշժտութեան բոցաշերտին հետ

ձայները խոր
կը կամարեն
գագաթներս կլորցած
մինչ մատներս բնազդներուս կ'երկարին
նախերգանքներուս
առաջին բարբառը ձայնաւորելու

II
խածնող
միալար
թաւջութակը կը հոսի
եւ
գրգիռներս
կը բանայ
այրող
միսէ
տրոփներու շնչառութեան

չեմ կշտանար
նուագին ինքնամոռաց
խցկումները
խորացնելէ
կը սուզուիմ
ձայնանիշերուն մերկութիւնները
փնտռելու

III
լռութիւնը
կը քակէ
երաժշտութիւնը

հեղուկ կարմիր վայելքը
կը ժայթքի
միսերուս արիւնող կատարէն
ցանկութիւններս
ձայնախազերուն վրայ եղծանելով

IV
ափերուս հինան
կը թափի
երբ մատներս
երաժշտութեան ամենայեղ տարածքին հետ
կը խառնեն
կշռոյթը մարմնիս

ողողումս
գալ է աշխարհ
ու
հեռանալ է աշխարհէն

V

ես լուցկիներ կը վառեմ ու մէջս կիներ կը փնտռեմ

մարմնիս մառանին մէջ կիսափակ
ցանկութիւններս կ'արիւնին
մինչ մատներուս ծայրով
կ'ունենամ զիս մէջս

եւ
շնչահեղձ,
խորարմատ
հառաչանքներով,
զիստերես կաթող կարմիր հեղուկին
քայքայող համը
կը կաթեցնեմ
ձեռքերուս
հեղանիւթուող ցնորքին

ամբողջս
կ'անջատուի
ինքզինքէս
մեծադղորդ ներծայնային լարերով

հոն՝
ուր այլեւս չէի
կայի
ես
կարմիր թափանցումով արնահամ
այլադարձ ցնցումովս ամօթխած

VI
թաւջութակի լարերէն
շնչեցի
բացուածքը ներսերուս
մինչեւ որ
մատներս
սաւանի

www.բնագիր.am

լռութեան մէջ
տենդագրեցին
մարմնիս ծայրամասերը
քերթուածի պէս
կաթկթուն

VII
ձայնարարումի առաջին ճիչը
հրավառ
կ՚անջատուի

անդադար
կը բախիմ
թաւջուքակի լարերուն
լեզուիս
հակաբառ քերթուածը
խորացնելով

VIII
շնչառութեանս
թաւ ձայնին
ելեւէջներով
կը մերկանան
ձայնանիշերը
գիշերներուս մենութեան
լռութենէն

կը հասնիմ
գրգիռներուս յաւերժ տեւողութեան
ուր
կիրքերս
սերմերս կը հասունցնեն
եւ
արիւնի կը վերածեն

IX
երակներուս մէջ
կը խմեմ ձայնալիքները
կը քակուին
ձայներուն
խազերը
ու բերնիս մէջ կը քակուի երաժշտութիւնը

*** * ***

Երբ կոյս էի
շրթունքներս ներսէն ծակ էին
եւ կ՚երայ կ՚երայ
բացուածքս
մեծ խոշոր
շրթունքներովս բարակ անօթի
մամաս ըսաւ
իմ շրթունքներս ալ բարակ են
ես խածնեցի իմիններս
եւ
ունեցայ
ուրիշ
բացուածք մը
փոքր
պահուած
աննշան
արկած մըն եմ
ոչ աւելի
ինչպէս ծնունդս
որ անուն մը տուաւ ինծի
եւ
կանչեցին զիս
բոլոր
տղաքը մեր թաղի
մինչեւ որ
մոռցայ որ ծակ մը ունիմ

բայց կը յիշեմ

շատ լացի ես,երբ գինովցած ինկայ գետին ու ան վրաս պառկած
բացաւ շրթունքներս ու տեսաւ որ գոց եմ: ես ընդմիշտ կոյս եմ, մտածեցի,
բայց չհաւատացի հնարած սուտիս ու բացի ծունկերս, ունեցայ ուրիշ բացուածք մը, լաւ էր
հաճելի

ու հասկցայ
որ
բոլոր կիները գոց են միշտ

չնայած
Նենսին ճիշդ հակառակը կը պնդէ
բայց հարց մը չէ
ես կը կրկնեմ
որ
բոլոր կիները գոց են միշտ

Untitled #1

ճամբաները կը խորանային ճամբաներէն
դէպի
մութը հետախոյզ

www.բնագիր.am

երթալը դէպի
լեցնելու պարապը ժամանակին
քանի որ անձրեւը
ջրային սենեակ բացուող թոքերուս մէջ
ուր կը լողան ստուերներ
դէմքերու պէս ու հակադէմք
անտարբերօրէն կը թքնեմ
կերպարանքները մէջս վարակող

կը գտնեմ նորը

անձրեւը
ակնոցիս վրայ կաթիլ է միայն
ու
բերանս բնակիչ տաք շունչին ու մարմինին

կը հասնիմ աշխարհամաս լքումի
հորիզոնի բոլոր օղակները
ապարանջան դաստակիս
քարացնելու վայրեր ու ժամանակներ անցեալի
նոյնն է ցաւը
երբ հոգեվարքը
կը փոխարինուի լացերով
կ'ուզեմ կինը
որ կրէ ու ջնջէ երկիրը իր մեղքերով
կը կռթնիմ ուսերուն
սաղմ կը հոտի
կը շնչեմ
կ'անցնիմ իրմէ
ինծմէ
ուր ամբողջս անլսելի պահուած աղաղակ
սերմի եւ քերթուածի
ես չեմ
ձեռքերու ձեւը հագնող
աշխարհը վարագոյրներուս ետեւ
մութ պայծառ
խոհանոցի պարանը վզիս մանեակ
ես երթամ
կնոջ
կարմրաբիծ երկինք մը գտնելու

Untitled #2

կ'ըլլամ ինքզինք

ես ներաշխարհուող
ինծմէ անդին

սկիզբէն կը նայէիր
հիմա երբ կամ
փրկելու կորուստդ
լռութեան մէջէն
ժամանակէն
որ կը հաշուէր
քայլերդ
մինչեւ
տարեվերջ ու տեւողութիւն

գիտեմ, չես գար
երբ կու գաս
յիշողութիւնդ մարմնիդ կապած
համրօրէն լսելու զարկը հողին

մինչ ես
անդին
մոլորակէն տարածքի
ձեւազեղծում քերթուածի
որ կ'ապրեցնէ
վայրը անգոյ
կիզակէտ
ուր կը խուժեն
մարմին
եւ ձայն
եւ գոյներ
բխումներէն
աւելի տենդ
շիչումներէն
աւելի մերկ
մոռնալու խօսքը
ինքն իր մէջ
այն որ կանխող
նայուածքին մէջ ծակոտկէն
դէմքը պարիսպ գրաւեալ

գիտեմ,
յետնաշխարհի բանտարկեալ

երբ լեզուս լեզուիդ

ափերէդ դուրս պահելու
գիշեր ցերեկ լուսաբաց
հոն
բեկումներ այլակերպ
ու
ժամանակ անփոփոխ
փապուղիէ փապուղի
ցամաքին դէմ մարտնչող
բազմատկող
յայտնութիւններ մտերիմ
ալեկոծուող
բայց չյանգող

www.բնագիր.am

ետին տողին
նայուածքին

արտաշխարհուող
արտագնաց
դուն
ինքզինք

շեղընթացում
երկդիմի

խզումին մէջ
ինքնամատոյց մոռացում

ինքնամուտ

ընդմէջ
եսի
եւ մենքի
քեզ
քեզմէ դուրս առնելով
զիս
ինծմէ ներս հանելով

աչքերն են հոս
չկայ այլ տեղ
ներգրաւող
տարանջատող
միջոց
վայրկեան
տեւողութիւն
յարամէջ շարժում
տարբերակում

կ'ըլլայ ինքնմէջ
ինծմէ ասդին
յառող ես զիս

գիտեմ, պահեմ
ինքնիրվրայ
եսի
դունի
ներբաց ամբողջ
ներաշխարհը արտաշխարհին կապող կամուրջ

ինքզինք քակող
տեւողութիւն

www.բնագիր.am

Կարեն Մխիթարյան

Բոսորագույն մղձավանջներ

Ներեցեք, որ չճանաչեցի, ես շատ եմ փոխվել:
Օսկար Ուայլդ

Գոռը Պետական հարբեցող է. նրան Պետ. պատվերով են բուժում: Իսկ ես մասնավոր եմ. որ իմացա ինչքան պիտի վճարվեմ այստեղից դուրս գրվելիս, փշաքաղվեցի: Որտե՞ղ մնաց ձեր խոստացած ժողովրդավարությունը. բոզեր, հասկանու՞մ եք քանի շիշ կառնեի էդ փողով. անասուններ, հասկանու՞մ եք, որ ձեր պատճառով ես կարող է ծեծեմ Գոռին, ու՞ր են Ազատությունը, Եղբայրությունը, Հավասարությունը, հանգստացնող տվե՞ք...

Բայց դե էդ խեղճի վրա ձեռք կբարձրանա՞. նոպայի ժամանակ որ այստեղ էին բերել, քամակը չէին գտնում, որ սրսկեն: Ինքն էլ խեղճ-խեղճ մրթմրթում էր. «Նայեք, էլի, էդ կողմերում պիտի լինի»... Իմ լավ ընկեր, ներիր, որ բարկացած ժամանակ երբեմն քեզ եգոր եմ անվանում...

Երեկ Ցովինար IV-ը ծխախոտ ու խնձոր բերեց: Առաջին 3 Ցովինարները՝ Ցիլդան, Կալիգուլան ու Բոքոնը, պարզվում է, մարդ չեն, պիղծ արարածներ են. բա մարդուն էս վիճակում մենակ կթողնե՞ն: Չորրորդից էլ իմացա, որ երեքշաբթի օրը Մայր Հայրենիքին թաղել են... Ուրեմն դուրս էին գրել տանը մեռնելու համար, իսկ մենք մտածում էինք, թե դեպի լավն է գնում: Բայց, դե, եթե Բոսորագույն մղձավանջները սկսել են ամեն օր այցելել, ի՞նչ՝ դեպի լավը: Բոլորս էլ աշխատում ենք որոշ տհաճ փաստեր չնկատել...

Հրաշալի տղա էր Մայր Հայրենիքը՝ հանգիստ, համեստ, քչախոս: Բա հաղորդումնե՞րը, հաղորդումնե՞րը... Ռադիոյում հաղորդավար էր եղել: Հենց աշխատավայրում էլ, կամաց-կամաց, Բոլշի ասած, «հագել էր շշին», Բոսորագույն մղձավանջներն էլ, ինչպես միշտ, երկար չսպասեցրին, ու տառապյալ Մայր Հայրենիքին, ինչպես Արևմուտքում է ընդունված ասել, «բերին հոս»...

Երբեմն, մեզ չանհանգստացնելու համար, նա բարձով ծածկում էր երեսը և դանդաղ, պատը ճանկռելով, ցածրաձայն մզմզում: Մեկ էլ կլսեինք, որ բարձը մի կողմ է նետել ու հերթական հաղորդումն է եթեր տալիս.

«Երեկ, Հարավ-Աֆրիկյան... տեղի ունեցան հուզումներ... մանկահասակ... կանանց, սովահար ծերունիների դեմ... Փառք Աստծո, հայեր չկային... արցունքաբեր ռետինե մահակներ... Տե՞ր Աստված, սատանայի հոգին ա՛ռ... բլղուր»...

Իհարկե, ասածները լրիվ չէինք հասկանում, Բայց Բիձեն մեզ հանգամանալից բացատրեց, որ Մայր Հայրենիքը, ի տարբերություն մեզ նման անհեթեթությունների, արվեստի մարդ է և, համաձայն Պավլովի տեսության, ավելի խոցելի է խմիչքի հանդեպ, ու եթե մենք միայն Բոսորագույն մղձավանջներ ենք ունենում, ապա նրանց մեջ առաջանում է նաև «տհաճ երրորդությունը», իսկ դա դժոխքի իններորդ պարունակից էլ ահավոր երևույթ է...

Ամեն արվեստագետ համոզված է, թե մի բառ գիտի, որն արտասանելով՝ կարող է քշել տհաճ երրորդությանը, բայց, ավա՞ղ, դա ուտոպիա է: Մայր Հայրենիքի բառը «բլղուրն» էր...

Ուրեմն մենք՝ նախկին տեխնիկական գործիչներս, դեռ լավ ենք պրծել: Նախկին եմ ասում, որովհետև, վաղ թե ուշ, գալիս է մի ժամանակ, երբ շիշը, իրենից բացի, ոչ մի ուրիշ զբաղմունք չի հանդուրժում, Բոսորագույն մղձավանջները սկսում են հաճախակի այցելել, ու, սպիտակ տենդում այրվելիս, մենք տեսնում ենք նույն կանաչ առնետներին ու սողուններին...

Եթե նախկինում գյուտարար եմ եղել, ասել կուզի առնչվել եմ գոյություն չունեցողի հետ, ուրեմն ապահովագրված չե՞մ տհաճ երրորդության այցելությունից: Պատրաստ պետք է լինել, բայց, դե, միանգամից հո չե՞ս հարցնի, ուստի հեռվից սկսեցի.

– Մայր մեր, ո՞նց ես – Շան օրի, Կարեն ջան, կրկնակի դոզա են տվել, բայց զգում եմ, պիտի գա - Տհաճ երրորդությու՞նը - Բա շու՞նը... էլի պատը չանգռելու եմ, եղունգ չմնաց... «Բլղուր» գոռալու ուժ էլ չունեմ... - Մայր մեր, դրա գալը ո՞նց ես զգում, ի՞նչ տեսք ունի, ի՞նչ է անում – Կարեն, տեսքը չգիտեմ, որովհետև սկզբում բոսորներն են գալիս ու աչքերդ մթնեցնում, հետո հանկարծ տհաճ երրորդությունը հոգիդ հանում է, մտցնում քամակդ ու դարձնում էն բան, էն Բիձեն որ ասում էր, էն ո՞նց էր ասում...

– Խրամատային ակորդեո՞ն:

– Հա՛, ֆռանտավոյ գառմոշկա... Կարեն ջան, էն բարձը տուր, ոնց որ սկսեց... Բլղու՞ր...

www.բնագիր.am

Վերջնագծին մոտ մենք, իհարկե, նույն խղճուկ արարածն ենք դառնում, բայց ասել եմ ու կասեմ. մինչև քայքայվելը այս տխրության տան ակամա հյուրերը մեկը մյուսից արժանի անհատականություններ են: Իսկ ով չմեռավ երեքշաբթի, կմեռնի չորեքշաբթի...

Ամեն առավոտ, իրենց ադաթի համաձայն, բժիշկը ստուգում է մեր վիճակը: Այնքան էլ տարօրինակ հարցեր է տալիս, ակամայից կսկսես մտածել, բայց հենց հարցրեց, թե վերջին տարվա ընթացքում թեկուզ մեկ ուրախ օր ունեցել եմ, թե՝ ոչ, ակնթարթորեն պատասխանեցի «մի անգամ»:

Կայծակը թզուկին չի խփում. ինձ այստեղ էին բերել երիտասարդ մուրացկան ծեծելու համար, իսկ Բոլշն ու Բիձեն կամավոր եկան: Հարբած էին զմայլվելու աստիճան և կտրականապես պահանջում էին իրենց գենետիկ կոդերը փոխել: Անմիջապես հանգստացնող տվեցին, որը նրանց շատ դուր եկավ... Հենց այդ ժամանակ էլ, «հելենիումից» խաղաղված նրանց իմաստուն դեմքերին նայելով, երիցս համոզվեցի, որ կայծակը թզուկին չի խփում...

Մոտ մեկ շաբաթ մեր ուրախությունն էին այդ քաջերը, մեկը՝ մտքի, մյուսը՝ գործողության: Հետները բերել էին մի հսկա սեխ, որի մեջ, ինչպես երեկոյան պարզվեց, լիտրի չափ սպիրտ էր սրսկած: Առաջին բաժակը ծանոթության համար խմելուց հետո, Բիձեն առաջարկեց խմել իմ ծեծած երիտասարդի կենացը, առողջություն ցանկացավ նրան, ստեղծագործական հաջողություններ աշխատանքում ու կյանքում և ավելացրեց, որ եթե ես ծեր մուրացկան ծեծած լինեի, ընդհանրապես չէի արժանանա իրենց հետ խմելու պատվին: Այդ պահին, արկած որոնողի խրոխտ քայլերով, մոտեցավ Բոշի էշը (Խոհեմության սահմանը վաղուց խախտած զազրելի մի տիպ, որը հաճախ նեղացնում էր Մայր Հայրենիքին): Նրա առաջին և վերջին բառերն էին «Խի դուք ո՞վ դառաք, արա՛»:

Ես համոզված եմ, որ եթե այդ պահը նկարահանվեր և ցուցադրվեր դանդաղեցված, միևնույն է, Բոլշի հարվածը չէր երևա (այդպիսի հարված տեսել եմ միայն Թայսոն-Մըքնիլի հանդիպման ժամանակ, երբ հանդիսատեսների մեծ մասը չհասկացավ, որ մրցամարտն ավարտվել է):

Հաջորդ օրը Մայր Հայրենիքը բացատրում էր Բոշի էշին, որ նրա ուղեղի ցնցման պատճառը առաստաղի փլուզումն է եղել, իսկ Բիձեն ավելացրեց, որ «Բոլշը կյանքում խեղճին, թույլին, համեստին մատով չի դիպչի, բայց եթե հաճախորդը լկտի է, ոռից ոռ կհանի, փորից՝ ճրագու»:

Երբ Բիձեն հույժ կարևոր փաստաթղթերով մի տգեղ կին դուրս գրել տվեց և, Բոշի էշի կարծիքով, տարավ իր տուն, Բոլշը քոչեց Մոսկվա... Չեմ հավատում. Բիձեն էլ է քոչել, թե չէ տուն կզանգեր, կգար այստեղ, սեխ կբերեր (Ցովինար IV-ի էս խնձորներին արդեն նայել չեմ կարողանում)...

Ինձ կհասկանար միայն Թումանյանը.

Ու՞ր կորան... մոտիկներս ու՞ր կորան,
Ձեն եմ տալիս, լաց լինում,
Ձեն չտվին... լուռ կորան:

«Մենակ մարդու տատուն էշերը գգեն», – երբեմն ասում էր Բոլշը: Բա ես մա՞րդ եմ, բա ես իրավունք ունե՞մ ապրելու. բա սա շրջապա՞տ է... Ես սրանց հետ ի՞նչ շփվեմ: Բոշի էշը ցնցումից վերջին չորս տարվա հիշողությունը կորցրել է, ժամը մեկ հարցնում է՝ ինքը ամուսնացա՞ծ է, թե՞՝ ոչ, ես ո՞նց չխելագարվեմ, էդ թխվածքները բերողը կարո՞ղ է տատմերդ է, ա՛յ անասուն: Իսկապես որ՝ Բոշի էշ...

«Սուսիկ թայֆի» ժողովրդին էլ, բժիշկն ասում է, բերել են Հայրենիքի խմբակային դավաճանության համար. սրանց մոտենա՞լ կլինի: Առաջ գոնե մի կուսակցություն էր, նրա պլատֆորմի վրա էլ ցնդում էին, հիմա հարյուրից ավելի են, մեռան մեկը մյուսի գաղափարներին դավաճանելով, թե ձեզ որտեղի՞ց գաղափար, ո՞վ կբացատրի: Քաղաքում ինչ պլատֆորմի վրա ցնդած ասես չկա: Ախտորոշումն էլ մեկն է՝ շիզոիդ, ափսոս չե՞ն իմ հարազատ բոսորագույն մղձավանջները... Խեղճ Մայր Հայրենիքն էլ նենգաբար մեռավ, հիմա «ո՞վ կմոտենա, ո՞վ կբարևի»... Ասա էդքան ապրել էիր, մի քիչ էլ ձգեիր, էլի՞, զանգեիր տուն, իմանայիր, որ էստեղ եմ, սեխից-բանից բերեիր, քի՞չ բան քեզ սովորեցրեց Բիձեն... Մնացել է մենակ Գոռը, է՞, Գոռի հետ խոսելով գիտակցությու՞ն կպահպանես: Լավ է, գոնե, հանգստացնող բերեցին, հիմա մի քիչ կխաղաղվեմ:

Լավ, կարծես թե ամեն ինչ պարզ է դառնում, բայց, Գոռ, ես աթեիստ եմ... Դու լրի՞վ գժվեցիր, ախմա՛խ, տերտեր ծեծե՞լս որն է... Եգոռ, էս ինչե՞ր ես ասում, էսպես ո՞նց կլինի... Տե՞ր Աստված, սատանայի հոգին ա՛ռ, բլղու՛ր, բլղու՛ր: Էս ի՞նչ եմ դառնում... բլղու՞ր...

www.բնագիր.am

Անահիտ Հայրապետյան

Ես սովորեցի ծաղիկների ներկայացումը,
Մշտարթուն կամակորությունը
ծիածանագույն մազերը թափում է աչքերիս,
Շարում տեսադաշտիս պատնեշը...
Բողոքի ելեւէջները քնքուշ են ու առկայծուն,
Մաքուր է ծաղիկը,
Ես սովորեցի պաշտել, ինչպես ծաղիկը,
Տենչում եմ բացակայությունը,
Գլուխս լիքն է գաղափարներով,
Համրում եմ...

* * *

Դեռ երկար կշարունակվի այս հուշախռով լռությունը,
Որը կլցնի բաժակները,
Որը կսահի պատերով,
Որը կմնա քեզ հետ:
Անիմաստ է հակաճառելը,
Ես կփորձեմ հիշել ամեն ինչ,
Չի ստացվի,
Լուռ է...

* * *

Զրափոսերից վարդի թփերը բարձրացան,
Ձգվեցին վերեւ,
Ճանապարհորդելը հետաքրքիր է,
Դու չես մտածում, չէ՞,
Որ փորձում եմ ինչ-որ բան փոխել
Այս անչափ նեղ մոլորակում,
Ինչպես օրինակ դու կարող ես փոխել
Քո սենյակի կահավորանքը...

* * *

Տխուր մտավարժանք...
Խարխափել,
Խլել,
Տալ,
Ես ընդամենը գունավորում եմ,
Տալիս իրենց գույները,
Երբ զղջում եմ,
Փոխում եմ նորից,
Հետքերը մնում են:
Ամեն ինչ փոխվեց,
Երբ նրանք խոսել սովորեցին
Ու իրենք ուզեցին իրենց գույները:

* * *

Ընդերքից տարօրինակ ձայներ լսվեցին,
Ես հանդիպման եմ շտապում,
Ժամանակ չկա,
Ընձյուղները երկարել են դնչները,
Տապ է,
Ջուր չկա,
Գրի եմ առնում ձանձրույթով,
Խարխուլ մի լեռ հատկապես սիրում է խոտը,
Չմտածված մի քայլ,
Եվ ծուլորեն կկրկնվի նույնը,
Պետք է կարողանալ հայտնվել տարբեր անիվներում...
Որտե՞ղ են կամքի ծաղիկներ
վաճառում...

* * *

Տագնապը լուսավորեց միտքս,
Ստվերն իր ձեռքը երկարեց,
Ողջունեց ինձ,
Հնչում է հաղթական երգը,
Երեկ երեկոյան հանկարծ թվաց՝
Նավեր են լողում առաստաղին,
Գնում ու գալիս միշտ նույն հետագծով՝
Առանց հոգնելու,
Առանց ձանձրանալու,
Կոպերս ծանրացան,
Ու ես ընկղմվեցի Մորփեոսի գիրկը,
Քաղցր մի ժպիտով շուրթերս ձգեցի մինչեւ ականջներս,
Սկսեցի դիտել հերթական անհեթեթ երազը...

* * *

Ամենքն ասում են,
Ինչ կարծում են,
Սպասում ծափահարությունների,
Կրկնում վաղուց ասվածը,
Հիացած զննում շուրջը,
Պտտվո՛ւմ,
Պտտվո՛ւմ,
Պտտվո՛ւմ:
Կարուսել է,
Միայն թե չկա շարժման ուղեծիրը,
Չեմ կարող ըմբռնել իմաստը:
Գնեցի մեղեդին,
Ու շտապեցի համտեսել փոքրիկ պատառներով,
Երբ ամբողջը սպառվեց,
Հանկարծ նկատեցի,
Որ ինձ ամենեւին էլ չեն հետաքրքրում
Կարուսելի հնարքները...

www.բնագիր.am

* * *

Բարեբախտաբար դու ունես
Բոլոր հարցերի պատասխանները,
Եվ ես ստիպված չեմ փորփրել հանրագիտարանները,
Ուղղի՛ր իմ խոսքը,
Չգիտեմ, թե որքան կմնամ այստեղ,
Գուցե մեկ,
Երկու կամ երեք տարի,
Ճոճանակը դատարկ է,
Այն երբեք դատարկ չէր լինում,
Անգամ գիշերը,
Չգիտեմ որքան կմնամ այստեղ,
Գուցե մեկ, երկու կամ երեք
տարի...

* * *

Թեթեւ է միտքն այսօր,
Ոչինչ չի ուզում,
Միայն տալիս է...
Ես ինձ համար թափանցիկ մի գունդ գտա,
Քիչ նման մոլորակի,
Հիմա գլորում եմ մի կերպ,
Երբ վարժվեմ,
Իմ սենյակում կլինի ջերմ ու տաք
Ու ես երջանիկ կլինեմ:

* * *

Լսեցի գնացքի կանչը...
Նոր երկրներ,
Առատ լույս,
Ջերմության հոսք,
Ես չեմ կարող պոկվել տեղիցս,
Արագություն եմ հավաքում,
Երկար կծգվի ժամը,
Եւ կհասցնեմ արմատներ գցել,
Սպասել անձրեւի,

Երկաթի քաղցր աղմուկ,
Երկար սուլոց...
Հետաքրքրությամբ եմ դուրս նայում,
Փոշու թարմ հոտ,
Ծառեր ու ծաղիկներ...

* * *

Ինձ ուրիշ աչքեր տվեք,
Չեմ կարող իմ աչքերով նայել այս պատկերը...
Մի անգամ փորձեցի համտեսել փափուկ դեղինը,
Դրանից հետո սովորություն դարձավ
գունակերությունը,
Հիմա արդեն խայտաբղետ թագավորություն եմ,
Եվ ես հրամայում եմ՝
Ով երկնքից իջեցնի արեւը,
Առանց պատռելու կապույտ վարագույրը,
Թագավորությանս կեսը կտամ նրան...

* * *

Վերցրի բահն ու փողոց դուրս եկա,
Ամենքին հետաքրքրեց՝ ի՞նչ եմ անելու,
Սկսեցի փորել,
Հետո,
Չգիտես որտեղ ծնունդ առած մի ծառ տնկեցի,
Ջրեցի,
Սկսեցի խոսել հետը,
Հարեւանն ասաց՝
Հերի՞ք է,
Անցի՛ր տուն,
Ես խեթ-խեթ նայեցի...
Առավոտյան արթնացա ծանր գլխով,
Սուրճը չօգնեց,
Չէի հիշում ոչինչ,
Երբ դուրս եկա,
Աչքովս ընկան բարալիկ մի ծառ
Ու ախտորոշող հայացքներ,
Ասացին տարօրինակ է...

www.բնագիր.am

Արման Գրիգորյան

Ռոմանտիզմի անօգտակարությունը

Հայաստանում արվեստը հաճախ նույնացվում է ռոմանտիզմի հետ: Արվեստագետներն էլ շատ են սիրում ընդգծել իրենց՝ արվեստի որևէ ուղղության չպատկանելու փաստը: Եթե դուք հանդիպում եք մի արվեստագետի, ասենք, «ոմն Հարութ Կբեյանի» ու նրանից լսում եք «(Ես) ատում եմ այն ամենը, ինչ իզմ է», հաստատ իմացեք, որ դուք հանդիպել եք ռոմանտիկի: Բերտրան Ռասելը ռոմանտիկական շարժման մասին ասում է հետևյալը. «Անհատապաշտական բնազդների ապստամբություն՝ հասարակական կապերի նկատմամբ, ահա այն բանալին, որը թույլ է տալիս հասկանալու փիլիսոփայությունը, քաղաքականությունը և զգացմունքները, որ սովորաբար անվանում են ռոմանտիկական շարժում» և ավելացնում՝ «եթե մենք բոլորս կարողանայինք ապրել միայնակ ու չաշխատել, ապա մեզ կհաջողվեր վայելել անկախության այդ էքստազը, բայց դա հնարավոր չէ, ուրեմն ռոմանտիկական վայելքին կարող են տրվել միայն հոգեկան հիվանդները և դիկտատորները»:

Շաքե Ա. Պետրոսյանը, որը մեզ ներկայանում է իբրև «հանճարեղ երեխա ծնած» «տաղանդավոր մայր», www.bnagir.am ինտերնետային ամսագրի շուրջ հավաքված ռոմանտիկ արվեստագետներին, այնուամենայնիվ, ինչ-որ մի իզմի հետ փորձում է կապել՝ «Անարխիստական ու տականքային գրականության հիմնարար դրույթները», իր ասելով, գլուխգործոց աշխատության մեջ, որը սակայն նրան չի հաջողվում, գլոբալիզացիան («նորագույն տեխնոլոգիաները») թույլ չեն տալիս: Եվ պարզվում է, որ մեր արվեստագետները չեն կարողանում որևէ արվեստի ուղղության հարել, որովհետև գտնվում են փախուստի մեջ վերահաս գլոբալիզացումից: Հրաչ Բայադյանը կցանկանար, որ այդ փախուստը լիներ «մշակութային դիմադրության ձև», և ոչ այնքան արվեստագետների տեքստերից, որքան ինքն իր գրածից ոգևորվելով՝ Բայադյանը, տոգորված հեղափոխական ռոմանտիզմով և արդեն տիպիկ խորհրդային տոտալիտարիզմի ոգով, բացականչում է. «Ի՞նչ ձևերով են մշակութային իմպերիալիզմը կամ գլոբալացումը գրավում նոր տարածքներ, նոր սրտեր ու երևակայություններ, որո՞նք են դրանց տեղական ագենտները, և որո՞նք դիմադրության տեղերն ու եղանակները»: Հ. Բայադյանը, նմանակելով լիմոնովական «նացիոնալբոլշևիկներին», ցանկանում է www.bnagir.am-ի արվեստագետներին դարձնել la sensibilite-ով առաջնորդվող ֆունդամենտալիստներ, որոնք կփորձեն «կործանումից փրկել այն, ինչ անհետացման եզրին է»: Եվ ինչպես, ըստ Բայադյանի, «մենք սիրում ենք հարցնել», ես էլ եմ ուզում հարցնել՝ «ի՞նչ իմաստ ունի» այս ամենը:

Փորձենք պատասխանը փնտրել «ոմն Հարութ Կբեյանի» «Ինձ սպանել են», «Առավոտը, ձմռան ճռճռան ցրտին» տեքստերի մեջ: Հեղինակը, չգիտես ինչու, պնդում է՝ «երբ մարդու մեջ մահանում է մարդը, ծնվում է գրականությունը»: Հետո պարզվում է, որ նա տառապում է «արարչամտությունից», ու դրա մեղավորները սպիտակ թղթերն են: Հեղինակը չգիտի, որ գրամեքենան սպանել է գրիչը, իսկ ինտերնետը՝ թուղթը: «Արարչամիտը», չնայած տպագրվում է www.bnagir.am ինտերնետային ամսագրում, սակայն երազում է կուսական սպիտակ թղթեր: «Նա՝ Աստված, այն սպիտակ թուղթն էր, որ պառկեց իմ դեմ մորեմերկ, մաքուր ճերմակ ...: Ու գնաց այլասերումը...», իհարկե շատ չանցած նա, ով չէր «տառապում աշխարհը փրկելու մոլուցքով», հանկարծ վախենում է, որ իրեն կհամարեն «սեռական փոքրամասնություն» և P.S.-ում ամաչելով բացատրում է, թե «Աստված չէր, աստվածուհիներ էին... ես ընդամենը ուզում էի ինքնաթիռ սարքել... կներեք, որ այսքան անկեղծացա»: Ինչպես և սպասելի էր, «ոմն Հարութ Կբեյանը» աստվածուհիներին մեծատառով գրվելու արժանի չի համարում՝ ի տարբերություն արական ծագում ունեցող աստվածների. «Ես չեմ հավատում մեր Աստծուն, որովհետև չեմ ուզում հավատալ, սակայն գրում եմ նրա անունը մեծատառով»: Դժվար է հավատալ, որ չի հավատում, համենայն դեպս, հայրապետական իշխանությանը նա ավելի քան հավատում է:

Ռոմանտիկները միակ օրինական հոգեվիճակը համարում են սադոմազոխիզմը, երևի այն պատճառով, որ Մարկիզ դը Սադը եղել է վաղ ռոմանտիկ, իսկ Զախեր Մազոխը՝ ուշ ռոմանտիկ:

Տղամարդկանց գերիշխանությունը կանանց նկատմամբ սկսվել է վեց հազար տարի առաջ, երբ գյուղատնտեսական ապրանքների ավելցուկը հնարավորություն տվեց վարձել և շահագործել աշխատավորներին, ստեղծել բանակներ և հզոր քաղաք–պետություններ: Այդ ժամանակվանից մինչև այսօր աշխարհի մշակույթների մեծ մասում, և ոչ թե միայն մերձավոր արևելքում ու Հայաստանում, «տղամարդկային ընկերակցությունները» դարձան տիրապետող:

Սեռերի միջև ընթացող պատերազմը հսկայական վնաս է հասցրել մարդկային ցեղին և մինչև այսօր էլ վնասում է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց: Պատրիարխալիզմը այսօր օրենսդրորեն վերացված է, սա-

www.բնագիր.am

կայն այն իր էությունը շարունակում է արտահայտել ուժի պաշտամունքի մեջ, թույլի նկատմամբ բռնություն կիրառելու մեջ: Կանանց ազատագրական պայքարը, որին այսօր միացել են նաև երեխաները, պատանիները և բնության պաշտպանները (կանաչները), պայքար է իշխանության նոր սկզբունքների համար:

Այս ամենը իհարկե բոլորովին չի հետաքրքրում մեր ռոմանտիկ գրողներին, նրանց համար հեղափոխությունը, ապստամբությունը և պայքարը միայն մեկ նպատակ են հետապնդում՝ վերադարձնել անհետացող պատրիարխալիզմը:

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե նույնիսկ կին գրողներն էլ շահագրգռված են պատրիարխալիզմի պահպանությամբ: Արփի Ոսկանյանը երանի է տալիս անտառաճանաչներին, «որովհետև միայն նրանք կարող են վերծանել տառերի իսկական իմաստը»: Սոնա Բաբաջանյանը ավելացնում է, թե իբր «կոպտությունը կարող է կիրք կերտել», որից հետո երևի նրան վերջապես կհաջողվի «ուղտ ուտել» և դառնալ «Մարդ մեծատառով»: Վիոլետ Գրիգորյանն էլ, չգիտես ինչու, կռիվ է սարքում կանանց հետ ու փորձում է պաշտպանել տղամարդկանց, որոնք կամ զոհվել են կամ հեռացել երկրից, և վերջում, որպեսզի մենք շատ չվախենանք նկարագրված սարսափելի դեպքերից, թաքուն ասում է, որ հղիացել է գրականությունից՝ «էխոյով ասել են երկու տղա»: Ակնարկը շատ թափանցիկ է, ի տարբերություն հակառակորդ կին գրողների, Վիոլետի գրականությունը տղամարդու գրականություն է: Պատրիարխալիզմի փայլուն դրսևորում, երբ աշխարհում ամեն ինչ բաժանվում է «թույլի և ուժեղի», «իգականի և արականի»:

Կին ռոմանտիկներին դեռ ինչ-որ ձևով կարելի է հասկանալ, նրանք «հերոսաբար» պայքարում են իրենց իրավունքների համար՝ թերի զարգացած հասարակության մեջ և պատրիարխալիզմի ռեստավրացիայի ժամանակաշրջանում, բայց ինչպես հասկանալ տղամարդ-անարխիստներին, որոնք իբր պաշտպանում են կանանց իրավահավասարության իրավունքը՝ միևնույն ժամանակ վիրավորելով նրանց: Դենի Դոնիկյանը, խոսելով գրողների միությունում «ինկվիզիցիայի» դատին ներկայացված «երեսունհինգամյա», «լայն մեջքով», «մազերը թափ տվող» բանաստեղծուհու մասին, որը հանդգնել էր բարձրաձայն արտահայտել իր զգացմունքները, վերջացնում է իր խոսքը՝ ծաղրական արտահայտություն նետելով կին գրողների հասցեին՝ «հավեր, ... որոնք բլոկ են կազմում դիմակայելու տղամարդկանց»: Նմանատիպ վերաբերմունք է ցուցադրում նաև Վահրամ Սահակյանը իր «Կողքիդ էի, որ քեզ սիրեմ» տեքստի մեջ: Դենի Դոնիկյանի նման, նա էլ է սկզբում հարձակվում, իր խոսքերով ասած, «կիսամեռ», «թթվածնի բալոնով շնչող», «հոգեվարքի մեջ գտնվող», «մեռած» գրողների վրա՝ փորձելով պաշտպանել յուրաքանչյուր մարդու ինքնատիպ ու ամբողջական լինելու իրավունքը: Այն, որ որևէ մեկը չի կարող լինել մեկ ուրիշի մի մասը: Դա հատկապես վերաբերում է կանանց, որոնք դարեր շարունակ համարվել են թերարժեք, զրկված են եղել խոսելու, իրենց զգացմունքներն արտահայտելու, որոշում կայացնելու իրավունքից: Բայց ոչ, ահա նա, ով գրելու պահին դեռ չգիտեր, որ ինքը գրող է (իսկ եթե դա այդպես է, ուրեմն իր մասին անպայման պետք է ասի «մենք՝ ողջ գրողներս»), շատ հեշտությամբ խառնում է ամեն ինչ՝ ընկնելով պատրիարխալիզմի վատթարագույն դրսևորման մեջ, որը Ուիլյամ Ռայխը անվանում է «էմոցիոնալ ժանտախտ»: Նա սկսում է անհանգստանալ, տագնապել, հայհոյել կնոջ ընդվզումը, նյարդայնանալ սիրահարվածներից, զզվել, կատաղել համբուրվող զույգերից: Այս երկարաշունչ տրտունջ-մրմունջը վերջիվերջո ավարտվում է «ընտանիքավորված» մաչոյի «խնդրում եմ, խնդրում եմ»-ներով, որոնք ոչ այնքան հիշեցնում են կնոջը վիրավորանք հասցրած տղամարդու ներողության հայց, որքան «գրական պատրիարխներից» ողորմածության և գթասրտության աղերս՝ իր անհաջող ապստամբության առիթով:

www.բնագիր.am

Ֆորում

«Բնագրի» ինտերնետային ֆորումը, հակառակ բուն գրական կյանքի, ամենաաշխույժներից է Հայաստանում: Այնքան, որ իր հանդեպ մեծ հետաքրքրություն է առաջացրել նաև ինտերնետից չօգտվող գրողների և ընթերցողների շրջանում: Այս հանգամանքից ելնելով՝ տպագրում ենք նրա թեմաներից մեկը: Բնականությունը պահպանելու համար չենք խմբագրում նույնիսկ տառասխալները:

Վիոլետ Գրիգորյան, Վահրամ Մարտիրոսյան

Սիրելի ֆորումակիցներ՝ այստեղ կարող եք գտնել «Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ» քննարկաշարի բոլոր նյութերը՝ մինչեւ քննարկաշարի վքարումը: Նյութերը հիմնականում ներկայացված են ժամանակագրական սկզբունքով, եւ միայն երբեմն, հասկանալի լինելու համար, ըստ տրամաբանական կապի:

Մարինե Պետրոսյան

Հրաչ Բայադյան
24 փետրվար 21: 49, երկուշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Քննարկման թեմա

գրական ստեղծագործության լեզվի, նյութի, ձեւի եւ այլ բնութագրիչների նկատմամբ փորձարարական (փորձարկող, խնդրականացնող) մոտեցումը բնորոշ է Բնագիր հանդեսում տեղ գտած բազմաթիվ գրությունների: Առաջարկում եմ քննության առնել այս նորարարության կամ փորձարարության տարբեր կողմերը: Կարելի է այս տեսանկյունից քննության առնել որոշակի գրություն կամ հեղինակի: Կարելի է գնահատել, մեկնաբանել ընդհանուր միտումը (եթե կա այդպիսի միտում). ի՞նչ է սա, ի՞նչ դրդապատճառներ եւ նպատակակետեր ունի, որո՞նք են դրա նպաստավոր կողմերն ու պակասությունները...

Հրաչ Բայադյան

Արփի Ոսկանյան
1 մարտ 17: 56, շաբաթ
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Բնագիր հանդեսին իսկապես բնորոշ է փորձարարական նորարական միտումը, գուցե ավելի, քան նրա էջերում տեղ գտած բազմաթիվ «գրություններին»: Այնուհանդերձ հանդեսի անհրաժեշտությունն է ստիպել խմբագիրներին հիմնել այն, այսինքն սկզբում եղել են «գրությունները», հետո՝ հանդեսը: Նորարական փորձարարական տենդը տարբեր ժամանակներում այս կամ այն չափով հատուկ է եղել երիտասարդական շարժումներին (դրանից չի խուսափել նաեւ խորհրդահայ գրականությունը): Այլ բան է, որ գրաքննության բացակայության պարագայում այն ստացել է արտահայտման ավելի լայն հնարավորություն: Ուզում եմ ասել, որ այդ միտումը պատճառաբանվում է ոչ այնքան խորհրդային արդժեքների վերանայման ու հետխորհրդային իրականության գնահատման անհրաժեշտությամբ, որքան սերնդափոխության օրինաչափությամբ:

Արփի Ոսկանյան

Հրաչ Բայադյան
2 մարտ 00: 23, կիրակի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Շնորհակալություն, Արփի, քննարկումը տեղից շարժելու համար:

Համաձայն եմ քո այն տեսակետի հետ, թե նախ եղել են «գրությունները» հետո հանդեսը, բայց իմ ձեւակերպումը ենթադրում է, որ այսօր արդեն կա Հանդեսը, որը կարծես թե ավելին է, քան եղած գրությունների հավաքածու:

www.բնագիր.am

Տպավորություն ունեմ թե այսօր կան հիմքեր այդպիսի պնդում անելու եւ ըստ այդմ՝ խոսելու հանդեսի որպես նորարարության ասպարեզի մասին: Հնարավոր է, որ սխալվում եմ:

Առաջարկելով քննարկման թեմա, ես չփորձեցի որեւէ հանգամանքով բացատրել նորարարությունը կամ փորձարարությունը: Հիշատակելով «խորհրդային արժեքները» եւ «հետխորհրդային իրականությունը»՝ դու հղում ես իմ հոդվածին (Բնագիր, թիվ 3), որտեղ ես այս թեմային մոտեցել եմ ինձ համար հետաքրքրական տեսանկյունից (որ համարում եմ բնական), որը իհարկե միակը չէ, եւ հնարավոր են այլ մոտեցումներ: Ես ոչ մի ցանկություն չունեմ խոսակցությունը տեղափոխելու այդ հոդվածի հարցադրումների շրջանակ, թեեւ վստահ եմ, որ եթե սերնդափոխությունը կարող է դառնալ գրականության փոխակերպման պատճառ, ապա առավել եւս կարող է հասարակարգի փոփոխությունը. մի՞թե Խորհրդային Միության փլուզումը նշանակում է պարզապես եւ միայն գրաքննության վերացում (թեեւ սա էլ փաստորեն շոշափելի փոփոխություն է):

Այդուհանդերձ, բաց թողնելով կամ բաց պահելով պատճառների եւ պատճառաբանության հարցը, կարելի է քննարկել նորարարության ինչ կամ ինչպիսին լինելը, եթե իհարկե չենք համարում, որ «սերնդափոխությունը» թե պատճառն է այս միտումի, թե սպառիչ բացատրությունը: Այսինքն թե՝ քննարկելու բան չկա:

Հրաչ Բայադյան

Արփի Ոսկանյան
3 մարտ 02: 33, երկուշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Նորարական միտումները բացատրելով սերնդափոխությամբ՝ ամենեւին չեմ բացառում հասարակարգի փոփոխության գործոնը, ինչը սակայն առավել կիրառելի է այսպես կոչված միջին սերնդի նկատմամբ, քան երիտասարդ: Չնայած երիտասարդ սերունդն էլ է դաստիարակվել «խորհրդային արժեքներով», սակայն «հետխորհրդային իրականության» ընկալումը նրա համար այնքան ցավագին չէ, որքան միջին սերնդի: Եթե խոսում ենք նորարարության ինչ եւ ինչպիսին լինելու մասին, կարծում եմ պետք է հաշվի առնել այդ տարբերակումը: Միջին սերնդի նորարարության մեջ դեռեւս թարմ է գրաքննության հիշողությունը, դրա խթանիչն ու շարժիչը հաճախ եւ հիմնականում խորհրդային հնին հակադրվելու ինֆանտիլիզմն է, երիտասարդ սերնդի նորարարական փորձերը այս առումով առավել հասուն են ու ազատ, սակայն եւ՝ ինքնաբավ ու ինքնանպատակ:

Ինչ վերաբերվում է Բնագրին, ես քեզ հետ համաձայն եմ, որ այն ավելին է, քան եղած գրությունների հավաքածու, այն նաեւ «գրաքննությունից ազատ տարածք» է ու նորարարության ասպարեզ, սակայն հարց է՝ կա՞ ասպարեզում այդ նորարարություն:

Արփի Ոսկանյան

Հրաչ Բայադյան
4 մարտ 20: 03, երեքշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Ահա եւ Բնագրի հյուրընկալ տարածքը բաժանվեց երկու մասի, երկու ճամբարի՝ «միջին սերունդ» եւ «երիտասարդ սերունդ»: Ըստ երեւույթին դու առաջնորդվում ես «բաժանիր որ քննարկես» սկզբունքով (քննության առարկան մասերի բաժանելով վերլուծության նպատակով, բայց նաեւ քննարկողներին բաժանելով երկու խմբի): Ընդունում եմ բաժանման օգտակար նշանակությունը, բայց կուզենայի որոշ ճշգրտումներ կամ հավելյալ մեկնաբանություններ ստանալ, ուստի քեզ եմ դիմում մի քանի հարցով: Խնդրում եմ պարզաբանես, թե ա) ինչո՞ւ ես «ինֆանտիլիզմ» անվանում միջին սերնդի նորարարական ջանքը, եթե այն ունի միանգամայն որոշակի նպատակ, արդյո՞ք քո կարծիքով այս սերնդի աշխատանքի մեջ ուրիշ, մեզ հետաքրքրող տեսանկյունից նպաստավոր կողմեր չկան, բ) ինչո՞ւ է գերադասելի կամ հասուն թվում ջահելների նորարարությունը, եթե այն «ինքնանպատակ» է, եւ արդյո՞ք սրանք ինչ-որ տեսակի արգելքներ չունեն հաղթահարելու, եւ վերջապես՝ գ) ի՞նչն է պատճառը, որ Բնագիրը չի դառնում նորարարության ասպարեզ, եթե ընդունենք, որ որոշ իմաստով դա հենց այդպես է:

Առիթ չեմ ունեցել նախագահի թեկնածուներին սատարող կազմակերպությունների ցանկում լսելու Բնագիր հանդեսի անունը, բայց թվում է թե մեր ընկերներից շատերը «գրականության հիմնահարցեր»-ի մասին զրուցում են հանրահավաքների կամ փողոցային երթերի ժամանակ: Հուսանք, որ շուտով նրանց կհանդիպենք Ֆորումի վիրթուալ ասպարեզում:

Հրաչ Բայադյան

www.բնագիր.am

Մարինե Պետրոսյան
30 մարտ 15: 50, կիրակի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Բնագրի հիմնական միտումը գրականության մեռյալությունը հաղթահարելու եւ կենդանի տեքստ ստեղծելու ձգտումն է: Հենց սրանով է հանդեսը տարբերվում Հայաստանի մնացած գրական պարբերականներից, որոնք, անխտիր բոլորը, այսօր մեռյալ են: Խնդիրը նորարարությունը չի, այլ այն իրողության գիտակցումը, որ անհնար է ձեւացնել, իբրեւ թե ոչինչ չի պատահել կամ թե գրականությունը պատահածից վեր է: Իսկ այն, ինչ պատահել է Հայաստանում, «հասարակարգի փոփոխություն» անունով լիովին չի բնորոշվում: Ի վերջո հասարակարգի փոփոխությունը ենթադրում է հին հասարակարգի փոխարինումը նորով, իսկ մեզանում ոչ մի նոր հասարակարգ էլ չկա, ոչ մի կարգ կամ համակարգ չկա, մեզանում այսօր միայն փլուզում է ու աղետ:

Մեռյալությունը հաղթահարելու հիշյալ միտումից էլ գալիս է Բնագրի հեղինակների մեծամասնության ընդգծված թեքումը դեպի ցած՝ դեպի փողոցայինը, մերկը, կոպիտը: Այս թեքումն այնքան շեշտված է ու ճչացող, որ կարող է նաեւ ճնշող տպավորություն թողնել: Բայց իր հիմքում այն առողջ հակում է, քանի որ ողղված է դեպի այնտեղ, ուր կյանքի հիմքերն են ու լեզվի հիմքերը:

Ի դեպ, հանրահավաքների մասին: Եթե Բնագիր կարդալիս ավելի հաճախ ներքեւ էի նայում, ապա դրանց ժամանակ հաճախ ստիպված էի նայել դեպի վեր: Բայց Բնագիրը մոռանալ չէր լինում: Որովհետեւ Արամ Սարգսյանը ոգեւորության գերագույն պահին միշտ անցնում էր բնագրային լեզվի, ասենք՝ «էդ ո՞ւմ ես վախցնում», ու կողքիս կանգնածների մեջ միշտ լինում էր առնվազն մի տիկին, որ էդ բառապաշարից խիստ տխրում ու իր տխրությունը բարձրաձայն արտահայտում էր: Հենց նման պահերին էր, որ նայում էի վեր՝ Մատենադարանի բարձունքին, փորձելով տեսնել, թե Մաշտոցի դեմքին ինչ արտահայտություն կա: Բայց ամեն անգամ ամբոխը տեսադաշտս փակում էր:

Մարինե Պետրոսյան

վահան իշխանյան
4 ապրիլ 18: 24, ուրբաթ
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

քիմիկոսը տարբեր նյութեր իրար է խառնում, որ ստանա որոնվող նյութը: փորձեր է անում: հասկանալի է: փորձերի արդյունքում հայտնաբերված նյութը կհանի վաճառքի: կամ չի հանի, իր գործն է: թատրոնում որեւէ ներկայացում ստեղծվում է փորձերով: առանց փորձի, մենակ դերերը բաժանելով, հանդիսատեսի առաջ դերասանները դուրս չեն գալիս: հասկանալի է, տոմս են ծախել, որ արժեքավոր խաղ ցույց տան:

բնագիրը արդեն դուրս է եկել վաճառքի, արդբրիջ կաֆեի գրախանութում դրված է: ուրեմն փորձերը արվել են մինչեւ տպվելը, մինչեւ վաճառքի հանվելը: գնորդը կվերցնի, կթերթի, կառնի, կառնի, չառնի, չառնի: ներկայացում չի, որ տոմսը առնի, գնա-նայի, ու հետո փոշմանի, տոմսը չի կարա հետ տա:

վաճառքի հանված ժողովածուի ի՞նչը կարող է փորձարարություն լինել: կարող է, եթե փորձ համարվի հայ լուրի տաթեւիկ բաղդասարյանի հաղորդումները սրտից թույլ մարդկանց վրա. տեսնես էս ստից հետո քանի՞ հոգի սրտի նոպա կունենա, իսկ մյուսից հետո, էդ նոպա ստացածներից քանի՞սը ինֆարկտ կստանա, իսկ ինֆարկտ ստացածներից քանիսը կմեռնի մյուս հաղորդումից հետո: այսպիսով փորձը փորձանք է դառնում: ի տարբերություն հայ լուրի, որը պետությունը պարտադրում է քաղաքացիներին, բնագիրը եւ, օրինակ, վարուժան այվազյանի վեպը ոչ մեկին չի պարտադրվում, երկուսն էլ գնելը կամավոր է: այսուամենայնիվ բնագրի մեջ կարելի է գտնել փորձի նման մի բան: որեւէ հեղինակի համար բնագիրը կարող է իր գրածի ազդեցությունը փորձելու դաշտ լինել: նա՝ հեղինակը, ընթերցողի անկեղծ տպավորությունը կարող է իմանալ բնագրի միջոցով: ինչու՞ անկեղծ, որովհետեւ կեղծը իմանալու համար գրածը բնագրից ավելի հարմար տեղ կարող է տպել: իհարկե, եթե հեղինակին հետաքրքրում է ընթերցողի անկեղծ տպավորությունը: իսկ եթե չի հետաքրքրու՞մ: այս նույն դատողությունները կարել է անել ցանկացած հրատարակված գրքի ու պարբերականի մասին: ամեն դեպքում դժվար որեւէ հեղինակ բնագրում նյութ տպած լինի մենակ ընթերցողի անկեղծ կարծիքը իմանալու ու չերեզ ընթերցող իրեն փորձելու համար:

մյուս կողմից էլ գուցե փորձարկողը ընթերցո՞ղն է: այսպիսով, եթե գնորդը գնել է բնագիրը, տարել տուն, բացել-կարդացել ու այնուամենայնիվ համարել, որ սխալվել է, որ նման հիմարությունը չարժեր առնել, այդ պահին նրան օգնության կհասնի կոկա-կոլայի խցանը ու կասի՝ կրկին փորձիր:

վահան իշխանյան

www.բնագիր.am

Վիոլետ Գրիգորյան
6 ապրիլ 16: 15, կիրակի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

գրում եմ այս հարցի տակ, քանի որ չկարողացա ողջ զրույցն ընդգրկող էջ գտնել, բայց անդրադառնում եմ նաեւ մյուսների խոսքին:

«Բնագիրն» այսօր պարզապես միակ կենդանի, աշխույժ, ազատ գրական տարածքն է, բայց ընդգրկված ստեղծագործությունները նորարարական չեն ոչ ձեւի, ոչ լեզվի ու բովանդակության առումով: Հանդեսն, իհարկե, գրությունների պարզ-պատահական հավաքածու չէ, բայց չեմ կարծում, որ սեռական օրգանների հիշատակումը շատ գործերում ընդհանրությունների մասին է խոսում, ինչպես որ պարզունակ, մակերեսային մոտեցումով

պիտակում, ընտանեկան գրադարանից դուրս են նետում Արտակն ու յուր աշխատակիցները: Ընդհանուր միտումները հայտնաբերելու համար, կարծում եմ, անհրաժեշտ է սկզբում առանձին միտումները ճանաչել:

Բայց հիմա ուզում եմ անդրադառնալ «Բնագիրը» պատճառաբանելու նախորդ փորձերին: Հասարակարգի փոփոխությունը իրականության փոփոխություն է, եւ առնվազն տարօրինակ կլիներ, որ նոր իրականությունը, թեկո՛ւզ աղետ ու փլուզում, մանավա՛նդ աղետ ու փլուզում, դեր չունենար այս գրականության վրա: Բայց անհեթեթ է սերնդափոխությամբ բացատրել «Բնագիրը», այն դեպքում, երբ նրա՝ մոտ քսանհինգ հեղինակներից միայն չորս-հինգն են երեսունից ցածր տարիքի: Էլ չեմ խոսում յոթանասունն անց Աղասի Այվազյանի եւ մի քանի հիսունամյաների (անունները չեմ տալիս)մասին:

Եվ, առհասարակ, այդ ի՞նչ նոր սերունդ է, որ այդպես առողջ, կենսահաստատ քայլերով եկել ու դժգոհում է նախորդ «ինֆանտիլ» սերնդից:Ինչպե՞ս ճանաչենք այդ սերնդին, եթե նա ոչ մի կերպ չի երեւում: Եթե Արփին նկատի ունի իրեն ու մի երկու ջահելի, կարող էր չթաքնվել ինչ-որ լողոգած, կոմերիտմիության կողմից լավ բանեցրած «նոր սերնդի» մեջ, այլ պարզապես բացատրեր, որ ինքը ցավագին չի ընդունում խորհրդային անցյալի անցումը:

Իսկ այդ խորհրդայինը հսկայական մի կայսրություն էր, որի փլուզումից հետո հայտնված «նոր սերունդը» հայտնվել է երրորդ կարգի չնթռլո մի երկրում, գավառական, փնթի, թիթիզ, չտես միջավայրում: «Նոր սերնդին» իհարկե երկրի որպիսությունը չի հետաքրքրում, նրանք բարձր են քաղաքականությունից: Բայց, չգիտես ինչու, ընտրությունների ժամանակ նրանք սկսում են սատարել ու վերասատարել իշխանությանը, երգում, պարում ու արտասանում են նախագահի համար: Եվ ինչո՞ւ պիտի ցավագին ընդունի այս սերունդը նոր ժամանակները: Նեղ տեսահորիզոնի ու մատնաչափիկային մասշտաբների մեջ այնքան հեշտ է «աստղ» դառնալ՝ սիրուշո, պուպուշո, հայկո, լիլո, չալո, մստո, ճստո... Երկու նոտա երգես, երկու տող գրես, մի քիչ բարձր տռես, արդեն երկրով մեկ հայտնի ես, բա լավ չի՞:

Շեկոյանի «Երեւան հյուրանոց» պոեմում հեղինակի՝ Արմենի մարդկային ու գրողական շփումների շառավիղն ընդգրկում էր Զինովի Գերտին, Վիսոցկուն ու Օկուջավային: Ինքն իրեն էդ հարթություններում է տեսել ու հարաբերվել «նախորդ սերնդի» այս ներկայացուցիչը: Նշածողը գաղափար էր պարտադրում, բայց նաեւ որոշակի մակարդակ, հիմա ոչ գաղափարը կա, ոչ մակարդակը:

Էս «նոր սերնդին» տեսնելիս ինձ թվում է դեժավյու է: Կային այդպիսիք տարիներ առաջ: «եղագիտական այլախոհություն» ցուցաբերած պոետներ, որ ընդվզում էին ազգայնամոլության, գյուղագրության դեմ՝ խոստանալով համամարդկային արժեքներ ներմուծել մեր գրականություն, բայց ընդամենը խալխի փողերը ներմուծեցին բանկից ... իրենց գրպան: Էն սովետական թվերին, որ մերձբալթիկայում-բանում ազգայնականությունը այլախոհություն ու ընդդիմություն էր տիրող կարգերին, մերոնք իրենց բա՛րձր էին պահում, գեղագիտությա՛մբ էին այլախոհ:

> Հիմիկվա ընդվզումն էլ ազգայնականության դեմ չէ, գավառականությունից նեղսրտած թնկթնկոց է: Պատճառը ազգային թերարժեքության բարդույթն է: Հայերը չմո-չնթռլո խալխ են, երբ նրանց ծաղրում ես, մի տեսակ բարձրանում ես նրանցից, դառնում ես, էնա, էնա, եվրոպացի, բոյո՜վ, շիկահե՜ր, կապտաչյա՜... Բայց եթե, օրինակ, գերմանացի լինեիք, որ արդե՛ն բոյով ու շիկահեր ու կապտաչյա է, կարելի էր նույնիսկ նացիստ դառնալ: Կարեւորը, որ ի՛նքդ շատ լավն ես: Ոչ թե ազգայնականությունն է մերժվում, այլ այս փի՛ս, քը՛խ, յա՛խկ ազգը:

Վիոլետ Գրիգորյան

Հարութ Սիմոնեան
8 ապրիլ 21: 57, երեքշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարությա

ԵՍ ճիշդն ասատծ կարծում էի գրադարանները փոխված են եւ անգամ մտքովս չէր անցնում որ մեզանում ներկայ է այն սովետական լոզունքը որ «մեր մօտ սեքս չկայ»: Անգամ մտքովս չէր անցնում որ կան մարդիկ, որոնք ամաչելով են իրենց երեխաների հետ այցելում պատկերասրահներ, որտեղ ներկայ է վերածննդի արվեստը:Անգամ մտքովս չէր անցնում, որ

www.բնագիր.am

կան մարդիկ, որոնք գաղտնագրով են նայում յունա-հռոմէական քանդակագործությանը:էլ խօսքը չի գնում, քսաներորդ դարի արվեստի մասին, որտեղ սեքսուալ հեղափոխությունից հետո, էրոթիզմը եւ սեքսուալիտէն, (նաեւ բորնոկրաֆիան) որոնք դրուած են առաջնային դերում, կարող են մարդկանց մօտ շոք յառաջացնել:

Իսկ ինչ վերաբերվում է նորարարությանը, ես չէի կարծում որ «նորարարները» այն էքսպերիմենտատորներն են, որոնք չիմանալով արվեստի պատմությունը կրկնում են այնպիսի էքսպերիմենտներ եւ կապում են դրանք սերնդափոխության հետ այլ ոչ թէ արվեստի պատմության:

Կարդալուց հետո Վիոլետի վերջին գրածը, իմ մօտ հաստատվեց նաեւ մի այլ եզրակացություն, շիկահերներն ու կապուտաչեաները մեզ մօտ առաջացնում են քսենոֆոբիայի եւ քսենոֆիլյայի քոմպլեքս, չնկատելով որ քսենոֆոբիան ու քսենոֆիլյան մշակութային պրոբլեմ է,երբ որ մի մշակույթ փորձում է իր մէջ ընդգրկել մի այլ մշակույթ նմանացնելով իրեն կամ հետ մղելով իրենից, փորձելով չնմանվել նրան, որը կարծում եմ դրդապատճառն է նացիոնալիզմի:

>

>

>կը ներէք եթէ կրկնվում եմ, բաներ կան որոնք անընտհատ պէտք է կրկնել

Հարութ

ՍոնիաՍանան Քիլէճեան
8 ապրիլ, 22: 18, երեքշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

փորձեր էք խօսիլ նորարարութենէն, բայց...: Բնագիրը կրնայ ըլլալ որ ունի միտում տարբերակում բերելու այսօրուայ գրականութեան, բայց ոչ նորարարութիւն:> Ոչ սերնդափոխութիւնը եւ ոչ ալ համակարքի փոփոխութիւնը կրնան գլխաւոր ազդակներ հանդիսանալ նորարարութեան, չնայած չեմ ժխտեր անոնց կարեւորութիւնը:Իմ կարծիքով, նորարարութիւն կարելի է միայն երբ ձեռբազատուինք մեր ազգը «եախկ» դարձնող ազգայնականութենէն ու հոգեբանօրէն բախումի մէջ մտնենք, բոլորովին տարբեր միջավայրի, հակասական գաղափարներու եւ հոգեբանութեան հետ, միաժամանակ ներառնելով եւ ընդունելով զիրար հակասող ,conflict յառաջցնող ազդակները: Չկարծէք որ հայը հայուն դէմ ելլելով հոգեբանական բախում կը յառաջանայ: Բոլորն ալ, անոնք ըլլան «հայաստանցի», «ղարաբաղցի» կամ « ախբար», նոյն հաւաքական անգիտակիցը ունին:Անոնց միչեւ conflictը շատ ձեւական է ու կենցաղային:Բոլորն ալ ամօթ չըլլայ ըսելը « նոյն գագն են»>Անդրադառնալով Վիոլետի ակնարկին կապուած դերարժէքութեան բարդոյթին հետ, ըսեմ որ Սփիւռքի պարագային ալ, առնուազն Լիբանանի մէջ, հայերս կը տառապինք գերակայութեան բարդոյթէն, մերժելով «բնթի» արեւելքցիները, չանդրադառնալով որ գետնափոր ծակի մը մէջ կը խոթենք կոր մեր մտայնութիւնը, մինչ անդին «բնթի» արեւելքցիները, հակառակ իրենց համայնքային ու կրօնական հարցերուն, առաջ անցած են բախուելու թէ ամերիկեան եւ թէ եւրոպական մտածողութեան հետ, միաժամանակ պատրաստ սակայն եւ ընդունելու, եւ ընդօրինակելու եւ այլափոխելու այդ բախումէն յառաջացած մտածողութիւնը: Խօսքս չի վերաբերիր ի հարկէ ծայրայեղականներու եւ վրաններու տակ ապրողներու:

Իսկ եթէ կը մերժենք կոր բախումի մէջ մտնել ու հակառակ այդ բախումին ընդունիլ կարգ մը տարբեր աշխարհայեացքներ, պարզ այն պատճառով որ մենք կը կորսնցնենք մեր ազգային ինքնուրոյնութիւնը ապա ուրեմն սուս ու փուս, առանց նետուելու անգամ փորձարարական դաշտ, պէտք է ընդունինք մեր «Կճուկգորգի,փուշի-նուռի» ժողովրդական արուեստը: Ալ ինչ նորարարութիւն ինչ «զխնապուր»....

Սոնիա-Սանան

p.s.Արտակ Ալեքսանեանին
«Բնագիր»ը ծնողներուս տան գրադարանին բնակիչն է, երբ մայրս 50 տարեկանէն վեր է, իսկ հայրս ալ 60ի մօտ...

Մարիներ Պետրոսյան
9 ապրիլ 14: 27, չորեքշաբթի
Մտածողությունը բանան չի

Սիրելի Սոնիա-Սանան, արաբները պարզապես չեն կարող չհարաբերվել ամերիկյան եւ եվրոպական մտածողությունների հետ, որովհետեւ արաբական գործոնը էսօրվա աշխարհում ամերիկյանի եւ եվրոպականի հետ հավասարազոր

www.բնագիր.am

գործոն ա: Մտածողությունը հո բանան չի, որ ներմուծես ու հետը հարաբերվես: Ուրիշի մտածողությունը պետք ա քո երկրի իրականության հետ որեւէ տեսակի կապ ունենա, որ հետը հարաբերվես: Իսկ դրա համար պետք ա որ քո երկիրը էսօրվա աշխարհի հետ կապ ունենա: Էսօր Հայաստանը մեր աչքի առաջ վերածվում ա գավառական անկապ երկրի: Ես կարծում եմ՝ պետք չի թողնել, որ դառնա: Իսկ դա քաղաքական խնդիր ա ու ազգային խնդիր, այսինքն՝ ազգի բոլոր անդամներին վերաբերող խնդիր: Ու նաեւ՝ հայերեն գրողին վերաբերող, ու առաջին հերթին՝ հայերեն գրող ու մեծ չափումներից խոսողին վերաբերող, որովհետեւ հո չի՞ կարող պատահել, որ վերջինս չհասկանա. գավառական երկրում մեծ չափումների գրականություն ստեղծել հնարավոր չի: Իսկ եթե հասկանում ա, ուրեմն ինչո՞ւ ա ձեւ անում, թե չի հասկանում, այսինքն ինչո՞ւ ա ասում, թե ինքը քաղաքականությունից վեր ա...

Մեր «հավաքական անգիտակիցի» եւ «Չկարծէք որ հայը հայուն դէմ ելլելով հոգեբանական բախում կը յառաջանայ» խիստ վիճելի մտքի մասին էլ էի ուզում խոսել, բայց էսօր ժամանակ չկա: Երեւի մյուս անգամ:

Մարինե Պետրոսյան

ՍոնիաՍանան Քիլէճեան
12 ապրիլ 00: 47, շաբաթ
Մտածողությունը բանան չի

Սիրելի Մարինէ Պետրոսեան,

պատասխան նամակիդ մէջ, յստակ ձեւով դուն ես ըսողը, որ այսօր Հայաստանը մեր աչքին առջեւ գաւառական երկրի կը վերածուի, աւելցնելով որ «պէտք չի թողնել որ դառնայ»: Վճռականութեան մը թելադրանքը կայ տողերուդ մէջ, բայց ափսոս չհիմնաւորուած: Ինծի համար հետաքրքրական է գիտնալ թէ ինչ՞ «մակնիշ»ի զէնքեր ունիս գաւառականութեան դէմ պայքարելու, բացի «պանանի» պէս մտածողութիւն ներմուծելէն երկրի մը մէջ, ուր « կարտոշկան» եւ «կաղամբ»-ն են միայն պազարի ելած: Ինծի կրնա՞ս բացատրել ինչու՞ Եւրոմիութեան անդամ դառնալու համար «ռոերնիս» կը «ճղենք» կոր: Արդե՞օք այնտեղ քաղաքական ու տնտեսական շահերէն բացի, ուրիշ մտահոգութիւններ չկ՞ան:Կամ,չե՞ս կարծեր որ նման միութեան մը անդամ դառնալու ցանկութիւնը, պայմանաւորուած է նաեւ գաւառականութենէն ձեռբազատուելու համար, որուն համար անհրաժեշտ է «պանանահ» պէս մտածողութիւն ներմուծել:«Տէպիլ» շարքայիններ դառնալու հաւես չունինք, չէ՞...

Ուրիշ...իսկ եթէ արաբական գործօնը համահաւասար կը դասես կոր ամերիկեանին ու եւրոպականին հետ, ըսելիք չունիմ...չէ ունիմ...կրնայ ըլլալ տարողութեան իմաստով ինչ որ տեղ կը համապատասխնեն զիրար, բայց այլ առումներով իրենք իրարմէ բոլորովին տարբեր են:

Սոնիա-Սանան

Մարինե Պետրոսյան
12 ապրիլ 14: 25, շաբաթ
Ընդհատված վիճաբանության շարունակություն որպես

Շատ սիրելի Սոնիա-Սանան,

նախ ասեմ, որ էս իմ նամակը, ինչպես որ նախորդն էր, ոչ միայն պատասխանում ա քո ֆորումային նամակին, այլեւ շարունակում ա Բնագրի չորեքշաբթյա հավաքների ժամանակ մեր ունեցած խոսակցությունը (մեր = մեր բոլորի): Ուզում եմ ասել՝ միայն քեզ չի, որ ուղղված ա: Կարծեմ թե սա ֆորումի ժանրին չի հակասում: Եթե նախորդ չորեքշաբթի իմ ձայնի ֆիզիկական առանձնահատկությունները խանգարում էին, որ ասածս ճիշտ ընկալվի, հույս ունեմ ֆորումի համեմատաբար չեզոք տարածքը ինձ թույլ կտա ասելիքս ձեւակերպել:

ավառականությունը վիճակ ա: Էդ վիճակի ամենից բնորոշ հատկանիշներից ա էն, որ գաղափարները անձնակա-նացվում են, բանավեճերը՝ թայֆայականացվում: Ուրեմն, եթե չես ուզում որ քո երկիրը էլ ավելի գավառականանա, գոնե ինքդ քո կողմից՝ գաղափարները մի նեղացրու-անձնականացրու եւ բանավեճերը մի սատկացրու-թայֆայականացրու: - Կարծեմ հասկացար որ էս քեզ չեմ ասում՝ «դու»- : Օրինակ, եթե Հրաչյա Սարուխանը կամ Աղասի Այվազյանը իշխանություններին միշտ պաշտպանում են, պարտադիր չի եզրակացնել, որ նրանք ծախված են կամ սրիկա: Աղասի Այվազյանի իշխանամիտության հիմքում ամբողջական աշխարհայացք կա ու գաղափար: Ընդ որում Աղասու ազգայնականությունն ու ցեղապաշտությունը բնավ էլ հիմար ու պարզունակ չեն: Ու եթե վեճ ունես ազգայնականության հետ՝ դու Աղասու հետ բանավիճի - էս ոնց որ արդեն նաեւ քեզ եմ ասում՝ «դու» - ու էն ժամանակ հեչ համաձայն չեմ, թե բախումը անպայման «շատ ձեւական ու կենցաղային» կլինի:

www.բնագիր.am

Նախորդ նամակումս խոստացել էի առարկել քո այն մտքին, թե՝ «Չկարծէք որ հայը հայուն դէմ ելլելով հոգեբանական բախում կը յառաջանայ»: Շշմելու էր, բայց իրականությունը ինձանից շուտ առարկեց. կարծեմ տեսար, որ մեր «զտարյուն հայ» սեղանի շուրջ չորեքշաբթի մի երեկո հոգեբանական բախում լավ էլ առաջացավ: Ասենք չէ, շշմելու բան չկար, էս երկրում ինչն ա շատ՝ հոգեբանական բախումը: Ու որպեսզի հոգեբանական բախումները ավելի քիչ լինեն, պետք ա մարդկանց մտքերն իրար բախվեն, ոչ թե անձանց անորոշ դեպրեսիվ-էքսպրեսիվ վիճակները: Վերեւում եւ ընդհանրապես էդ էի ասում:

Մարինե Պետրոսյան

վահան իշխանյան
14 ապրիլ 00: 13, երկուշաբթի
Ընդհատված վիճաբանության շարունակություն որպես

մարինե, հասկանալի է, որ դու որպես մտավորական, պիտի գավառականությանը դեմ լինես ու համարես, որ վատ բան է: չգիտեմ, թե վատ բաների ցանկդ ինչքան է ձգվում, բյաց էդ երկարությունից կտուժի գավառականության բնութագրումը: դու ասում ես՝ գավառականությունը գաղափարների անձնականացումն է ու բանավեճերի թայֆայականացումը: կարելի է ենթադրել, որ դու թայֆայականությունը չես սիրում, գուցե տուժել ես, փորձել ես գրողների միությունում բանավեճ բացել, պարզվել է բանավեճը վերածվել է թայֆայական շահերի: բայց ինչքան էլ տուժես, մեզ մի վստահեցրու, որ թայֆայականությունը գավառականություն է: թայֆայականություն կհանդիպես ցանկացած մետրոպոլիայում: թայֆայականությունը մարդկային հատկություն է, բնորոշ բոլոր խմբերին: իրեք հոգի, որ հավաքվեն թայֆա կառաջանա: իշխանություններին պաշտպանելը նույնպես մարդկային է, ու աղասի այվազյանն էլ մարդ է, սիրում է, որ պրեզիդենտը իր ձեռքը սեղմում է, որ իրեն վարպետ են ասում ու մրցանակ տալիս: քիչ չի 5000 դոլար մրցանակը: մարդկային է նաեւ իշխանությանը սատարելուն գաղափարական հիմնավորում տալը, մեկը բացատրում է ազգի շահով, մյուսը՝ կայունության անհրաժեշտությամբ: սատարելու իշխանություն լինի, հիմնավորումը կգտնվի: աղասի այվազյանը, ինչպես ինքն ա սիրում ասել, «բիոլոգիայով» չի տարբերվում պրեզիդենտին սատարողներից, որոնք էլ իրենց փայ օգուտն են ուզում պոկել էս կյանքից:

ասում ես՝ Աղասի Այվազյանի իշխանամիտության հիմքում ամբողջական աշխարհայացք կա ու գաղափար: էդ ո՞ր գաղափարն է, որ հիանում է, թե ոնց են գազոնների վրա էրկաթի կոնստրուկցիաներ սարքու՞մ, կարո՞ղ ա մեծ գրողը ֆուտուրիստ ա դառել՝ չենք իմացել: եթե ֆուտուրիստ ա դառել, ուրեմն հաստատ գավառականը դա է: բայց, ինչպես դու ես ասում, նա պարզունակ չի, խորն ա, ու որ հիանում ա, թե ոնց են երեւանի կենտրոնը քանդում, մի էրկու մնացած պատմական շենքը քանդում, տեղը հյուսիսային պողոտա սարքում, կանաչ խոտը ծածկում բետոնով, իմ կարծիքով, գավառականությունից չի, այլ համամարդկային խասյաթ՝ իշխանության գործերը գովաբանելու, որ իշխանության հետ հին է:

շատ ավելի մարդկային է սիրած մարդու մի արարք, որ քո սրտով չէ, բացատրես նրա գաղափարներով ու քեզ համար արդարացնես: սիրիր աղասի այվազյանին ինչքան ուզում ես, հանուն էդ սիրո քեզ խաբիր, որ նրա իշխանամիտությունը գաղափարական է, բայց որ փորձես հանուն քո սիրո մեզ էլ խաբել, մեկ-մեկ կարող է անհաջողության մատնվես:

վահան իշխանյան

Մարինե Պետրոսյան
14 ապրիլ 14: 55, երկուշաբթի
Պուճուր փայերի երկիր Հայաստանս

Վահան, ասում ես՝ ես Աղասի Այվազյանին սիրում եմ, դրա համար ուզում եմ պաշտպանեմ: Բա մինչեւ հիմա չես իմացե՞լ, որ ես Աղասուն չեմ սիրում: Մեղմ ասած: Իհարկե նկատի չունեմ՝ որպես գրող: Ես իրա «Հայություն» թերթում աշխատել եմ, ոնց որ ասում են՝ ցուրտ ու մութի տարիներին, բոլորով մի սենյակում էինք նստում, ու մեր միջեւ անընդհատ բանավեճեր էին, մեր՝ այսինքն իմ ու աղասու, որովհետեւ մյուսները խստագույն հարգանքով լսում էին աղասու անկեղծ մտորումները առ այն, որ մեզ գամսախուրդիա ա պետք, որ մեզ հիտլեր ա պետք: Ես աղասու հետ էն տեսակ ընդհարում եմ ունեցել, որ իմ հետագա աշխատանքը թերթում դարձավ անհնար, դիմում գրեցի դուրս էկա, թեեւ համարյա բան չէի անում ու ինձ լավ վճարում էին: Դրանից հետո մենք իրար հետ չենք շփվել, բայց ես Աղասու հրապարակավ արտահայտած մտքերին միշտ հետեւել եմ ու մտքումս շարունակել եմ բանավեճը: ...Ինչի՞: Որովհետեւ էդ բանավեճը իմ մտքին սնունդ ա տվել (երեւի նամակումդ էնքան էլ անհիմն չէիր չարախնդում, որ ես մտավորական եմ): Միշտ հետաքրքիր ա աշխարհայացք ունեցող մարդու հետ բանավիճելը: Իսկ աղասին աշխարհայացք ունի, ու էդ աշխարհայացքը, այո, ամբողջական ա: (շտապեմ ասել, որ աշխարհայացքի ամբողջական լինելով դրա ներքին հակասությունները չեն բացառվում, էդ

www.բնագիր.am

պարզունակ հայացքն ա, որ միագիծ ա լինում): Աղասու աշխարհայացքը ցեղակենտրոն ա, ոչ թե մարդակենտրոն: Դրա համար էլ նրա համար ցեղը (եւ էդ ցեղի շարունակականությունն ապահովող պետությունը) ավելի բարձր արժեք ա, քան մարդը: Երբ որ Աղասին գրական թերթում ասում ա՝ «Իհարկե, ընդդիմության շարքերում բողոք ունեցողներից շատերը ճիշտ են ու ճշմարիտ իրենց փոքր օղակի մեջ, սակայն փորձեք մեծացնել, ընդլայնել այդ օղակը, եւ նրանց ճշմարտությունը կսուզվի, կփոշիանա Երկրի հսկայածավալ օղակի Մեծ ճշմարտության մեջ», դու կասես՝ իրա ստացած $5000-ի տակ գաղափարական հիմնավորում ա սարքում, ես ասում եմ՝ աղասին անկեղծ ա: ես էդ մտքերը՝ ուրիշ բառերով, իրանից վաղուց եմ լսել, 92-ին էդ նույն ձեւի ինքը հիմնավորում էր թե՝ մեզ հիտլեր ա պետք: Կարող ա ասես՝ էլի մրցանակի համար էր: Քո իրավունքն ա՝ ինչ ասես, բայց մի քիչ անհեթեթ ա հնչում:

Էսքան բան: Չէ, մի բան էլ պատմեմ հուշերիցս, քիչ էր մնում մոռանայի. երեւանը քանդել-սարքելը աղասու հնագույն երազանքն ա՝ վրացիների ինադու. դե հնությամբ թիֆլիսի հետ չենք մրցի, գոնե երկաթե կոնստրուկցիաներով մրցենք: Բայց ամենակարեւորը նույնիսկ էդ էլ չի. պատկերացրու, նամակդ կարդացի ու մտածեցի՝ էդ գազոնի համար ախր իմ սիրտն էլ առանձնապես չի ցավում, երկաթե կոնստրուկցիաներն էլ, այ քեզ ամոթ բան, իմ դուրը գալիս են, ու ֆուտուրիստ էլ հաստատ չեմ, որ գավառականությունը լիներ պատճառը, ուրեմն... կարող ա՞ ինձ էլ են $5000 տալու: Թե գիտես՝ ասա ուրախանամ:

Մարինե

Հ - վերջում տեսար որ էլի դու ճիշտ դուրս էկար: մի պուճուր փայ էլ ես պոկեմ էս կյանքից:

Հրաչ Բայադյան
14 ապրիլ 19: 17, երկուշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Նախ կուզենայի քննարկման մասին ընդհանուր բնույթի երկու դիտարկում անել: Առաջին՝ հարկ է լինել ուշադիր եւ հարգալից խմբի ուրիշ անդամների պնդումների նկատմամբ: Եթե կան վերապահումներ կամ անհամաձայնություն, ապա դրանք, իմ կարծիքով, կարելի է ներկայացնել հանդուրժողական տոնով: Երկրորդ՝ ուրիշների մտքերը հերքող (եւ հատկապես կտրուկ ձեւով հերքող) պնդումները կարիք ունեն որոշակի հիմնավորման: Մի օրինակ: Ահա իմ ձեւակերպումը. «գրական ստեղծագործության լեզվի, նյութի, ձեւի եւ այլ բնութագրիչների նկատմամբ փորձարարական (փորձարկող, խնդրականացնող) մոտեցումը բնորոշ է Բնագիր հանդեսում տեղ գտած բազմաթիվ գրությունների»: Ահա Վիոլետ Գրիգորյանի արձագանքը, որ նման է անհասկացող երեխայի բերանը փակող մեծահասակի ժեսթի՝ առանց բացատրության. ««Բնագիրն» այսօր պարզապես միակ կենդանի, աշխույժ, ազատ գրական տարածքն է, բայց ընդգրկված ստեղծագործությունները նորարարական չեն ոչ ձեւի, ոչ լեզվի ու բովադակության առումով»: Այս պնդումը, որ որեւէ կերպ չի հիմնավորվում, ինձ համար համոզիչ է նույնքան, որքան, օրինակ, այս մեկը. «Բնագրում ոչ մի կենդանի, աշխույժ կամ ազատ բան իրականում չկա, պարզապես այստեղ տպագրվող հեղինակներին բնորոշ է փորձարարությունն ու նորարարությունը» կամ սրա նման մի ուրիշ նախադասություն: Վիոլետը ոչ միայն չի բացատրվում փորձարարության կամ նորարարության բացակայությունը, այլեւ չի պարզաբանվում, թե այդ ինչ է նշանակում «կենդանի, աշխույժ եւ ազատ գրական տարածք»: Ճիշտ այդպես, լավ կլիներ, եթե Մարինե Պետրոսյանը բացատրեր, թե ինչպես է Բնագրում հաղթահարվում գրականության մեռյալությունը կամ ինչ է նշանակում «կենդանի տեքստ»:

Այս նկատառումները բխում են արդյունավետ քննարկման եւ բարեհաճ միջավայրի մասին իմ պատկերացումներից:

Փաստորեն, այս պահին Ֆորումում քննարկվում է երեք թեմա. «փորձարարության» թեման, որ իմ առաջարկածն է, եւ «ոչ ցենզուրային արտահայտությունների» (Վիոլետ Գրիգորյան) ու «ես ստում եմ...» (Մարինե Պետրոսյան) թեմաները:

Յուրաքանչյուր առանձին թեմայի վերաբերող կամ ավելի ընդհանուր խոսակցություն դեռ նոր է սկսվում, ամփոփումներ անելու հնարավորություն գրեթե չկա: Կխոսեմ առավելապես իմ առաջարկած թեմայի առնչությամբ:

Եթե մի կողմ թողնեմ Արփի Ոսկանյանի «դասալքության» պատճառով կիսատ մնացած սկզբնական քննարկումը, ապա հաջորդած արձագանքները կարելի է բնորոշել այսպես. ա) անտեսող (Մարինե Պետրոսյան և Խնդիրը նորարարությունը չի, այլ այն իրողության գիտակցումը, որ անհնար է ձեւացնել, իբրեւ թե ոչինչ չի պատահել կամ թե գրականությունը պատահածից վեր է) եւ չբացատրող, թե այնուամենայնիվ, նորարարությունը խնդիր է թե ոչ, բ) հեգնող եւ առնվազն Բնագրի առնչությամբ փորձարարության գաղափարը մերժող (վահան իշխանյան և վաճառքի հանված ժողովածուի ի՞նչը կարող է փորձարարություն լինել), գ) Բնագրի մեջ նորարարության ներկայությունը բացառող (Վիոլետ Գրիգորյան և «Բնագիրն» այսօր պարզապես միակ կենդանի, աշխույժ, ազատ գրական տարածքն է, բայց ընդգրկված ստեղծագործությունները նորարարական չեն ոչ ձեւի, ոչ լեզվի ու բովադակության առումով), դ) որոշ առումով փորձարարության ներկայությունն ընդունող, բայց ընդհանուր առմամբ՝ մերժող (Սոնիա-Սանան և փորձեր էք խոսիլ

www.բնագիր.am

նորարարութենէն, բայց... : Բնագիրը կրնայ ըլլալ որ ունի միտում տարբերակում բերելու այսօրուայ գրականութեան, բայց ոչ նորարարութիւն):

Առաջարկելով «փորձարարության» թեման, ես մի քանի նպատակ եմ հետապնդել: Առաջին՝ շատ չհեռանալ ֆորումի անվամբ («Ժամանակակից գրականության հիմնահարցեր») որոշադրվող շրջանակից: Երկրորդ՝ խոսել այն բաների մասին, որ իմ տպավորությամբ առավել բնութագրական են Բնագրի համար: Միեւնույն ժամանակ ցանկացել եմ խուսափել այն քննարկումների ծանոթ հունից, որոնց ներկա եմ եղել (Բրյուսովի անվան համալսարանում, օրինակ) կամ որոնք ծավալվել եմ մամուլում:

Եվ եթե դժվար է իմ առաջարկած թեման «հիմնահարց» համարել, ապա այդուհանդերձ ինձ թվում էր, թե այն կարող է հետաքրքրական բանավեճի նյութ դառնալ: Ընդ որում, փորձարարություն կամ նորարարություն ասելով, ես հասկանում եմ ոչ թե «աշխարհում առաջին անգամ», «անկախ Հայաստանի պատմության մեջ աննախադեպ», «տարածաշրջանում միակը» կամ նման մի ուրիշ բան, այլ այն, ինչ իմ կարծիքով կարելի է գտնել, ասենք, Բնագրի երրորդ համարում, Արփի Ոսկանյանի կամ Վահրամ Մարտիրոսյանի գրություններում: Ընդ որում, փորձարարություն բառով ես փորձում եմ բնորոշել ոչ թե հեղինակին, այլ որոշակի գրություններ: Ասենք, ծանոթ լինելով Արփիի՝ ռական թերթում տպագրված պատմվածքներին եւ իմանալով, թե որքան լավ է նա տիրապետում պատմվածքի ավանդական ձեւին, Բնագրի երրորդ համարի գրությունը առանց վարանելու անվանում եմ փորձարարական:

Ինչ վերաբերում է «փորձարարություն» տերմինին: Գրականության մեջ այն օգտագործվում է, օրինակ, այնպիսի դեպքերում, երբ խոսքը «գրականության հաստատված կառույցները քանդելու» կամ «տեքստի կայունությունը խզելու» (Ջ. Դ. Բոլթեր) փորձերի մասին է, երբ քննարկվում են, ասենք, Լուրենս Սթերնի վեպը կամ դադաիստները, Խուլիո Կորտասարի բազմաթիվ ստեղծագործություններ (ինպես «Դասարանախաղը»), Ժակ Դերիդայի Glas-ը եւ շատ այլ բաներ՝ մինչեւ հիփերտեքստ եւ interactive fiction...

Սոնիա-Սանանը համարում է՝ նորարարության համար անհրաժեշտ է, որ «հոգեբանօրէն բախումի մէջ մտնենք, բոլորովին տարբեր միջավայրի, հակասական գաղափարներու եւ հոգեբանութեան հետ, միաժամանակ ներառնելով եւ ընդունելով զիրար հակասող ,conflict յառաջցնող ազդակները»: Ինձ թվում է, թե սա շատ հեռու չէ նրանից, ինչ ես իմ հոդվածում (Բնագիր 3) դիտարկում եմ որպես ինքնության եւ Ուրիշի (տարբերի, այլի) հարաբերություն: Բայց համաձայն չեմ, որ չկան ներքին տարբերություններ (ասենք, արեւմտահայկականի եւ արեւելահայկականի միջեւ, «հայաստանցու» եւ «ախպարի» միջեւ), որոնց ճանաչումը լիներ էական: Համոզված եմ, որ արտաքին տարբերության նկատմամբ զգայուն եւ ներառնող դառնալու համար հարկ է ըստ ամենայնի ճանաչել եւ գնահատել ներքին տարբերությունները:

Հրաչ Բայադյան

Մարինե Պետրոսյան
15 ապրիլ 01: 59, երեքշաբթի
Թեւածումների անակնկալ վախճանը

Այ քեզ անսպասելի շրջադարձ: Այնինչ թվում էր՝ ֆորումը վաղուց լքել է ոչ միայն Արփի Ոսկանյանը, այլեւ բանախմբի խմբավարը: Եվ խոսակցությունն էլ վաղուց դուրս էր եկել փորձարարության թեմայի շրջանակներից եւ ազատ թեւածում էր այս ու այն կողմ: Իմ տպավորությամբ՝ շատ էլ հետաքրքիր թեւածում էր: Հիմա ի՞նչ՝ վերադարձ ի շրջանս յո՞ւր: Լավ, ինչ կա որ, վերադառնանք, շեղող թեմաներն էլ կտեղափոխենք որեւէ այլ տեղ՝ ֆորումի հյուրընկալ տարածքում:

Բայց եթե խնդրո առարկա փորձարարությունն ու նորարարությունը գտնելու ամենից հավանական տեղը Արփի Ոսկանյանի եւ Վահրամ Մարտիրոսյանի գրություններն են, խոսակցությունը ցանկալի թեմայի շրջանակներում պահելու ամենից արդյունավետ եղանակը թերեւս այն կլիներ, որ խմբավարը դիմեր հիշյալ հեղինակներին. մեկին՝ որ վերադառնար դասալքությունից, մյուսին՝ որ խախտեր իր լռությունը:

Այլապես, եթե ես խոսեմ տրված թեմայով, նորից նույն բանն եմ ասելու, այսինքն թե՝ որ խնդիրը նորարարությունը չի, այլ գրականության մեռյալությունը հաղթահարելու եւ կենդանի տեքստ ստեղծելու ձգտումը: Ես ճիշտն ասած դժվարանում եմ ձեւակերպել, թե ինչ ասել է կենդանի տեքստ: Ուղղակի գիտեմ՝ տեսել եմ՝ որ լինում է դրա կենդանին ու դրա մեռյալը: Ես նույնիսկ դժվարանում եմ ձեւակերպել, թե ինչով են դրանք իրարից տարբերվում: Ասենք՝ Հովհաննես Գրիգորյանի երեկ գրված բանաստեղծություններն ու այսօր գրված բանաստեղծությունները: Ոնց որ թե՝ ոչ մի բանով: Այնինչ երեկվանները կենդանի էին: Այնօր եւ այնտեղ: Այո՝ այն օրը եւ այնտեղ: Իսկ ուրիշ չափում ես չունեմ: Ափսո՞ս:

Մարինե Պետրոսյան

www.բնագիր.am

Հրաչ Բայադյան
16 ապրիլ 18: 17, չորեքշաբթի
Թեւածումների անակնկալ վախճանը

Ֆորումը շատ կարճ պատմություն ունի, եւ «վաղուց»ը այնքան էլ տեղին չի թվում, իսկ խոսակցությունը կարող է հեռանալ, ապա վերադառնալ նույն թեմային, եթե մասնակիցները ցանկանան: Թեմայի քննարկումը կարող է եւ ընդհատվել: Ես միայն ցանկացա ամփոփել այն, ինչ արդեն ասվել էր այդ թեմայի առնչությամբ: Ճիշտն ասած, խմբավարի իրավունքներն ու պարտականությունները խիստ ձեւով սահմանված չեն, իսկ ես կարծում եմ, որ որոշ պարտականություններից զատ, մնացած բաներում նա ազատ է վարվելու ըստ հայեցողության, մասնակցելու կամ չմասնակցելու որեւէ քննարկման: Ամեն պարագայի իմ միջամտության նպատակը բնավ էլ սկիզբ առած խոսակցությանը խանգարելը չէր:

Իհարկե լավ կլիներ, եթե քննարկումների մասնակցեին ոչ միայն Արփին եւ Վահրամը, այլեւ շատ ուրիշներ: Բայց իմ տրամադրության տակ չկան միջոցներ որեւէ մեկին «բերման ենթարկելու», հատկապես երբ հասկանալի է, որ խանգարող հանգամանքները շատ են, նաեւ տեխնոլոգիական: Իսկ Վահրամ Մարտիրոսյանը նույնիսկ բանախմբի անդամ էլ չէ (հավանաբար նա նույնպես դեմ չէ «ազատ թեւածելուն»):

Հրաչ Բայադյան

Արփի Ոսկանյան
17 ապրիլ 16: 43, հինգշաբթի
Բնագիրը իբրեւ...

(պատասխան Հրաչ Բայադյանի ապրիլի 14-ի նամակին)

Սիրելի Հրաչ, վերաժառնալով դասալքությունից ու վերադարձնելով քննարկումները նախկին հունը, ուշացումով (տեխնիկական պատճառներով), սակայն հուսով եմ՝ ոչ ուշացած, պատասխանում եմ քո առաջադրած հարցերին.

ա)Միջին սերնդի նորարարական ջանքը (արտահայտությունը գտնված է) համարել եմ ինֆանտիլիզմի արդյունք, որովհետեւ այն հիմնականում (այստեղ չեմ կարող դիմակայել Նազարեթ Կարոյանի բառապաշարից օգտվելու գայթակղությանը) «հակահեղինակային ժեսթ» է խորհրդայիայ գրականության դեմ, էլ չեմ խոսում այն ահռելի դերի մասին, որ ունի նույն այդ շրջանին վերաբերող կլիշեների օգտագործումը այդ սերնդի գրականության մեջ, ընդ որում երիտասարդ սերունդը հաճախ պարզապես ի վիճակի չէ ընկալել դրանք իբրեւ այդպիսիք: Դա չի նշանակում, որ երիտասարդների գործերը զերծ են նույն այդ շրջանին վերաբերվող կլիշեներից, բայց դրանք օգտագործվում են երբեմն անգիտակցաբար ու, կարեւորը, ուրիշ մեկնաբանությամբ, ինչը միջին սերնդի ներկայացուցիչներին շփոթեցնում է, այդ պատճառով, ասենք, իմ «Սյուրռոմանտիկական լուսին հայրենասիրական թեմայով»ը միջին սերնդի իմ ընկերները ընկալեցին բոլորովին այլ կերպ, իմ մեջ կասկածներ հարուցելով ցանկացածիս ու կարեցածիս անհամապատասխանության մասին, մինչդեռ իմ սերնդակիցների ընկալումը զարմանալիորեն համընկավ արածիս հետ: Սակայն ինֆանտիլ բառը օգտագործել եմ միջին սերնդի ու նրա ստեղծագործության հանդեպ ծայրագույն սիրով ու քնքշանքով՝ ամենեւին ի նկատի չունենալով, թե նրանց ստեղծագործության մեջ չկան քննության համար հետաքրքրական կողմեր, այլ ճիշտ հակառակը:

բ)Հասուն բառը օգտագործել եմ ՝ չգտնելով ինֆանտիլին ավելի հարմար հականիշ, սխալ եմ արել, ներող եղեք, բայց ի նկատի չեմ ունեցել ասելիքի կամ փորձի կամ իմացության, կամ որեւէ այլ հասունություն, թեպետչի էլ բացառվում, որ քսան տարեկանը կարող է ավելի հասուն բան գրել, քան հիսուն տարեկանը: Պարզապես միջին սերունդը խորհրդայինի հանդեպ ունի ամբիվալենտ վերաբեմունք՝ մի կողմից ժխտողական, մյուս կողմից՝ իդեալականացնող, նրա «նորարարական ջանքը» ուղղված է խորհրդային «հինը» տապալելուն ու այդ իմաստով՝ նաև պահպանելուն: Երիտասարդ սերնդին խորհրդայինը քիչ է զբաղեցնում, իմ դիտարկումներով համենայնդեպս, այն, ինչ անում եմ ես, ուղղված է այսօրվան, իմ սերնդակիցներին նաեւ, իմ հարևաններին՝ հասարակությանը, որի հետ անհաշտ եմ: Իրականությունը ինձ համար «հետխորհրդային» չէ: Չես հավատա, բայց էսօր տասը տարեկան երեխաները չգիտեն՝ Լենին պապին ով է: Գիտեմ՝ դա ընդամենը խորհրդանիշ է, եւ դու բոլորովին ուրիշ բան ի նկատի ունես խորհրդայինի պրոբլեմը արծարծելիս: Կուզենայի, որ մի քիչ այդ մասին խոսես:

գ) «Կա՞ արդյոք «Բնագրում» նորարարություն» հարցս հռետորական չէր, ոչ էլ նշանակում էր, թե չկա, ինչպես շտապեցիր եզրակացնել դու, եւ ինչպես արագ հաստատեց Վիոլետը: Կոնկրետ հարց էր, որ ենթադրում էր հիմնավոր պատասխան, որից դու ճարպկորեն խուսափեցիր: Սակայն վախ ունեմ, որ «Բնագիրը» իր ողջ «կենդանությամբ ու աշխուժությամբ» իսկապես չի դառնալու նորարարության ասպարեզ, մասնավորապես այն պատճառով, որ ավելի շատ գպական քաղաքականություն է, քան գրականություն:

Արփի Ոսկանյան

www.բնագիր.am

Հրաչ Բայադյան
17 ապրիլ 20: 30, հինգշաբթի
Բնագիրը իբրեւ...

Սիրելի Արփի,

Ուրախ եմ, որ վերադարձար քննարկման ասպարեզ: Նախ ուզում եմ մի պարզաբանում անել: Ինչպես հեշտ է տեսնել, քննարկման թեմայի իմ առաջարկում «նորարարություն» եւ «փորձարարություն» բառերը օգտագործվում են գրեթե որպես հոմանիշներ, բայց նկատելով, որ քննարկման մասնակիցների կողմից նորարարությունը ընկալվում է շատ ավելի արմատական իմաստով, այնուհետեւ շարունակեցի խոսել միայն «փորձարարության» մասին: Իմ առաջադրած թեման հուշում է, որ ես Բնագիրը համարում եմ փորձարարության եւ նորարարության տեղ (չեմ վերադառնում արդեն մեր երկխոսության մեջ պարզաբանված մանրամասներին), ուստի քեզ վերադարձնելով քո հարցը վերձեւակերպված տեսքով՝ «ի՞նչն է պատճառը, որ Բնագիրը չի դառնում նորարարության ասպարեզ», ես ոչ թե խուսափել եմ (ճարպկորեն կամ ոչ) կոնկրետ հարցին պատասխանելուց, այլ փորձել եմ քեզանից ճշգրտումներ ստանալ: Փորձարարության եւ նորարարության հիմնական աղբյուրը տեսնելով երիտասարդների մեջ, ես նաեւ կասկած եմ հայտնել իմ հոդվածում, որ նրանց ստեղծագործական (նաեւ նորարարական) սկզբնական եռանդը կարող է շուտով սպառվել՝ թողնելով նրանց, քո բառերով ասած, աննպատակ նորարարության գործին լծված: Նման հեռանկարի պատճառներից մեկը ես համարել եմ հենց այն, որ նրանք չեն ուզում հասկանալ, որ ետխորհրդային են (որ կարծում եմ պարտավոր են հասկանալ ի տարբերություն տասնամյա երեխաների, որոնք, փառք Աստծո, չգիտեն Լենին պապիկի մասին): Թվում է դու ինձ ես վերադարձնում իմ ենթադրությունը երիտասարդների մասին՝ շրջելով միջին սերնդի վրա. միջին սերունդն էլ, փաստորեն, չափից ավելի է կաշկանդված ետխորհրդային լինելու հանգամանքով: Ես ինքս տարիքով այդ սրնդից եմ եւ ինձ համար էլ ավելի լավ հասկանելի են կամ թվում է թե հասկանալի են այդ սերնդի նպատակները: Ես միանգամայն համոզված եմ, որ այս սերունդը կարող է ունենալ խորհրդային կաղապարները խնդրակակնացնելու, կազմաքանդելու, հաղթահարելու խնդիր, համարում եմ այդ խնդիրը կարեւոր, բայց շատ էական մի հավելումով. վճռական է, թե ինչ դիրքերից եւ ինչ հավակնություններով են այդ կաղապարները հարցականի տակ առնվում, որոնք են այդ արարքի հղման կետերը, ուր կամ ինչի է դիմում հեղինակը: Սրանից մասնավորապես հետեւում է եւ այն, թե արդյոք հաջողություն կունենա այդ ձգտումը, թե նորարարությունը կլինի ավելի երեւութական՝ թողնելով հեղինակին նույն կաղապարների շրջանակում (երկրորդ դեպքում գուցե եւ կարելի է այդ փորձը բնութագրել ինֆանտիլ բառով՝ քո կողմից, խնդրեմ, կարող ես ավելացնել «սերն ու քնքշանքը»):

Անմիջապես արձագանքելով՝ առայժմ «խուսափում եմ» քո առաջադրած լուծումը քննարկելուց, ըստ որի Բնագիրը չի դառնալու նորարարության ասպարեզ, քանի որ «ավելի շատ գրական քաղաքականություն է, քան գրականություն»: Այս առնչությամբ միայն կարող եմ ասել, որ խիստ չափազանցված եմ համարում քննարկման մասնակիցներ որակումները «Բնագիրը մնակ կենդանի..., իսկ մնացած ամեն բան՝ մեռյալ» թեմայով: Ես կարծում եմ, որ Բնագիրը դեռ պետք է հաստատի իր այդ համբավը: Կկարողանա՞...

Հրաչ Բայադյան

Մարինե Պետրոսյան
17 ապրիլ 22: 43, հինգշաբթի
Երեք հարց Արփի Ոսկանյանին

Սիրելի Արփի,

թույլ տուր քեզ երեք հարց տալ.

ա.կարո՞ղ ես օրինակներով կոնկրետացնել քո պնդումը խորհրդային կլիշեներով ողողված եւ խորհրդահայ իրականության դեմ ժեստիկուլյացիաներ անող՝ միջին սերնդի գրականության մասին

բ. ի՞նչ է նշանակում ինֆանտիլիզմ: Մեր սերնդի բառարաններում այն նշանակում էր՝ հոգեկան թերզարգացման տեսակ, երբ մարդը հասուն տարիքում դրսեւորում է երեխային բնորոշ վարք: Եթե ձեր սերնդի համար ուրիշ բան է նշանակում՝ կարող ես մյուս հարցերը չկարդալ:

գ. Մի պահ փորձենք ընդունել, թե միջին սերնդի գրողները իսկապես օրուգիշեր զբաղված են անցյալի դեմ կռիվ տալով: Անցյալի դեմ կռիվ տալը արդյո՞ք երեխային բնորոշ վարքի դրսեւորում է:

դ. Ծայրագույն սիրով ու քնքշանքով ոչ այնքան քնքուշ որակումներ տալը արդյոք ո՞ւմ բնորոշ վարքի դրսեւորում է:

Մարինե Պետրոսյան

www.բնագիր.am

Մարինե Պետրոսյանի այս նամակին՝ Արփի Ոսկանյանի պատասխանը, ինչպես նաեւ պատասխանի պատասխանը՝ տես՝ ամենավերջում

Արփի Ոսկանյան
17 ապրիլ 22: 12, հինգշաբթի
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

(պատասխան Վիոլետ Գրիգորյանի ապրիլի 6-ի նամակին)

Չպատասխանել չեմ կարող, որովհետեւ ինչպես միշտ, խփել ես նշանակետին: Առաջինը՝ ԲՆԱԳԻՐԸ չեմ բացատրում սերնդափոխությամբ, երկրորդը՝ ազգը չի մերժվում, ոչ էլ նույնիսկ ազգայնականությունը (ինչպես ասում ես՝ չգիտեմ էլ կոնկրետ ինչ ի նկատի ունենալով), այլ ազգամոլությունը: Վերջերս սրճարանում Մարինեն Հարութին բացատրում էր, որ հայրենասիրությունը ամոթալի բան չէ, ես էլ եմ այդ կարծիքի, եթե հայրենասիրությունը արտահայտվում է պատմամշակութային արժեքների(այդքան չարկչրկված), օրենքի ու պետության, ինչո՞ւ չէ՝ նաեւ հայրենակիցների հանդեպ հոգատար ու հարգալից վերաբերմունքով, բայց կա հայրենասիրության մի ուրիշ տեսակ՝ շիրազյանսեւակյանը, իբր դիսիդենտականը, որ իսկապես ամոթ է՝ ի նկատի ունեմայսօր, պետություն ունեցցող մարդու համար: Դեռ բոլորովին վերջերս հայրենասիրության միակ հնարավոր ձեւը երեւի թե դա էր, կարծում եմ՝ մոտավորապես դա ի նկատի ունի Հրաչ Բայադյանը ԲՆԱԳԻՐՅի իր հոդվածում՝ ասելով, թե ազգազգայինը խորհրդային շրջանի ծնունդ է: Իմ ընկերները հիմնականում միջին սերնդի ներկայացուցիչներ են, ինձ ավելի հարազատ է այդ սերնդի ռոմանտիկ ինֆանտիլիզմը, քան իմ սերնդի սնոբիզմը, համատեղված օտարամոլությունն ու «ազգայնականությունը», կարիերիզմը, պրագմատիզմը եւ այլն, սակայն վերջինս՝ իմ սերունդը, պետության տեր է՝ թող որ գավառական, չնդռլո ու երրորդ կարգի, բայց այնուամենայնիվ պետության, որը ժառանգել է, նվեր է ստացել: Մինչդեռ միջին սերունդը, որ փաստորեն ստեղծել է այդ պետությունը՝ քրտինքով ու արյամբ, իրեն շարունակում է տեսնել խորհրդային կայսրության ու մշակույթի հարթություններում՝ միաժամանակ եւ հակադրվելով դրան, եւ վերհիշելով այն նոստալգիկ երանությամբ: Սակայն նոր սերունդ ասելով ես ի նկատի ունեի բացառապես գրական սերունդը(որ ես եմ ու էդ մի քանի ջահելը), որովհետեւ խոսում էի գրականությունից, իսկ ավելի ճիշտ՝ նորարարությունից ու փորձարարությունից, որը դու ԲՆԱԳՐԻ էջերին հակված ես չտեսնել: Սակայն եթե «Բնագրում» ընդգրկված գործերը նորարարական չեն ոչ մի առումով (ըստ քեզ), եթե դրանք չեն ընտրվում սեռական օրգանների մասին հիշատակության սկզբունքով, եթե հեղինակների տարիքային դիապազոնը տատանվում է Աղասի Այվազյանից մինչեւ Հարութ Կբեյան, ովքեր տպագրվում են նաեւ գրական այլ պարբերականներում, ապա ո՞րն է Բնագրի տարբերությունը դրանցից՝ մյուսներից (եթե բացառենք պարբերականության անորոշությունը), եւ ի՞նչ սկզբունքով են ընտրվում տպագրվելիք գործերը՝ միգուցե հեղինակի քաղաքական հայացքների ու այլախոհությա՞ն: Ես չեմ հասկանում՝ ինչ այլախոհության մասին ես խոսում, եւ ընդհանրապես ի՞նչ այլախոհության մասին կարող է լինել խոսքը իշխող գաղափարախոսության բացակայության եւ խոսքի էս տեսակ ազատության պարագայում: Լֆիգ ՍամոՕաղիկ Ռուբո «հակամարտության» կարգի աթոռակռիվը քաղաքականություն ես անվանում ու երիտասարդներին մեղադրում, թե բարձր են քաղաքականությունից ու, կարեւորը, այլախոհ չեն: Պարույր Հայրիկյանը այլախոհության պատճառով զոհեց իր երիտասարդությունը, առողջությունը, դուք ձեր այլախոհության դիմաց շատշատ՝ գրանտ շահեք կամ «քաղաքական հալածյալի» կարգավիճակով պոկվեք եվրոպաները: Անցել են էն երջանկահիշատակ ժամանակները, երբ այլախոհության համար մարդկանց հալածում էին, հիմա քո ասած մատնաչափիկային մասշտաբները վերաբերվում են նաեւ այլախոհության տեսակին ու որակին. ահռելի կայսրության գաղափարախոսությանը հակադրվելը, հայտնի նկուղներում փտելու սպառնալիքի տակ ու երկու միլիոն բնակչությամբ, երրորդ կարգի, չնթռլո երկրի նախագահին հայհոյելը՝ հենց էնպես, ձեռի հետ ու անպատիժ, հեչ նույն բանը չի: Բայց դա էլ մի կողմ, «երկրի որպիսությունը» գոնե բարելավվում է՞ էդ այլախոհությունից:

Արփի

Վահան Իշխանյան
18 ապրիլ 03: 57, ուրբաթ
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Արփի, եթե դու նախագահի աշխատակազմում չես աշխատում, ուրեմն լուսնի վրա ես: գրում ես՝ «Անցել են էն երջանկահիշատակ ժամանակները, երբ այլախոհության համար մարդկանց հալածում էին»: Երեւի տեղյակ չես, որ վերջին մի 2 ամսվա ընթացքում մոտ 300 հոգի մարդ են բռնել: որ իշխանության քաղաքական հակառակորդներին տանը մենթերը չեն գտնում՝ հղի կնոջը կամ անչափահաս որդուն պատանդ են տանում: իսկ երջանկահիշատակ ժամանակները, որ

www.բնագիր.am

նկատի ունես՝ խորհրդային տարիները, երբ այլախոհության համար մարդկանց հալածում էին, այդ ժամանակները այդպիսին չեն եղել բազմաթիվ մարդկանց համար, նաեւ այն միջին սերնդի, որի հետ ընկերություն ես անում: Այդ մարդկանց, այսինքն, հայ մտավորականներին, ոչ այն ժամանակ էին բռնում, ոչ հիմա, ոչ էլ վաղը կբռնեն:

օրենքի եւ պետության նկատմամբ, եթե դու կարծում ես, պիտի հոգատար եւ հարգալից լինել, ապա այդպիսին կարող են լինել մարդիկ, որոնք այդ պետությունից օգտվում են: ինչքան շատ մարդ է պետությունից օգտվում, էնքան շատ են պետությունը հարգողները: ցավոք, հայաստանում պետությունից օգտվում են քչերը, եւ նրանք էլ հարգում են: չօգտվողների մեջ գուցե կան հարգողներ, բայց հիմնական մասը կուզենար պատճառ ունենալ հարգելու: իսկ որպեսզի հարգեն, պիտի հավասարապես օգտվեն եւ մյուս օգտվողներին էլ օրենքի առաջ հավասարեցնեն իրենց: օրենքն էլ, որ դու հարգում ես, մեկ ուրիշը կարող է չհարգել: օրենքը մարդու համար է, եթե խանգարում է մարդու ազատությանը՝ պետք է վերացնել, ինչպես վերացվեցին խորհրդային շատ օրենքներ, եւ պետք է վերացվեն, օրինակ, այն օրենքները, որոնցով մարդկանց ցույցի գնալու համար բանտ են գցում:

եթե անդրադառնամ բնագրին, ապա այն գրական հանդեսներից միակն է, որ պետությունից չի օգտվում, մյուս բոլորը օգտվում են եւ հարգում: բնագրի՝ թերեւս միակ եւ ոչ անկարեւոր տարբերությունը մյուս գրական օրգաններից: այս տարբերությունն էլ ավելի ազատ եւ առանց գրաքննության է դարձնում բնագիրը:

իսկ ո՞րն է սեւակյան-շիրազյան հայրենասիրության ձեւը, որ ամոթ ես համարում, եւ ինչով է տարբերվում քո նախընտրելի հայրենասիրությունից՝ հասկանալի չէ: նրանք էլ էին օրենքը եւ պետությունը հարգում եւ երեւի դեմ չէին հոգատար եւ հարգալից լինել հայրենակիցների հանդեպ ու գրում էին բանաստեղծություններ պատմամշակութային արժեքների մասին: գուցե նրանք այլ պետության էին հարգում, ոչ քո նախընտրածը: հայ մտավորականը հարգում է բոլոր այն պետությունները, որի տիրապետության տակ ապրում է:

դու քաղաքականություն չես համարում լֆիկ սամոյի ու ծաղիկ ռուբոյի հակամարտությունը: իսկ ի՞նչն ես քաղաքականություն համարում: եթե քո հարգած պետության տերերը նրանք են, ու նրանցից է նաեւ կախված քեզ հարգելի հայրենակիցներիդ ճակատագիրը ու պատմամշակութային արժեքների ապագան, ապա ինչ է, եթե ոչ քաղաքականություն: եթե նրանց հակամարտությունից մարդիկ են սպանվում, ուրեմն քաղաքականություն չի՞, իսկ եթե անունը ծաղիկ ռուբոյի փոխարեն թոնի բլեր է, ու սրա ու հուսեյնի հակամարտությունից են սպանվում՝ քաղաքականություն է: մասշտաբների տարբերությունից քաղաքականության իմաստը չի փոխվում: դավիթաշենի բնակչի համար իշխանությունը ծաղիկ ռուբոն է ու սերժ սարգսյանը, նա չի զգում թոնի բլերի գոյությունը:

եթե քաղաքականությունը ավելի բարձր ես համարում, քան ծաղիկ ռուբոն ու լֆիկ սամոն, ուրեմն պիտի ներքուստ ցանկանաս նրանց հանել քաղաքականությունից եւ ոչ թե համարես, որ նրանք քաղաքականության մեջ չեն: բայց երեւի, ըստ քեզ, նրանք մեր հայրենակիցներն են, եւ նրանց նկատմամբ պետք է հոգատար լինել, իսկ որ օրենքներն էլ հարգես՝ նրանք ընդմիշտ կմնան քաղաքականության մեջ:

վահան իշխանյան

ՍոնիաՍանան Քիլէճեան
20 ապրիլ 02: 31, կիրակի
այլախոհութեան հետ կապուած

...Սիրելի Արփի, չես կրնար այլախոհութիւնը անցած երջանկայիշատակ ժամանակներու միայն վերագրել; եթէ երիտասարդութիւն կայ,չի կրնար ըլլալ որ այլախոհութիւն չըլլայ, անշուշտ այստեղ երիտասարդ բառը կը գործածեմ բառին իսկական եւ լաւագոյն իմաստով:

> > > ու իմ կարծիքովս այս պարագային, նկատի ունիմ Հայաստանի ներկայ քաղաքական իրավիճակը, իսկական այլախոհութիւնը ոչ թէ oppositionի հետ ըլլալն է, այլ ըլլալը ոչ անոր հետ ոչ ալ նախագահի համակրողներու հետ;երկու կողմերն ալ նոյն «տանձին» համար տարբեր դիմակներով բայց նոյն ձեւով կը կռուին կոր, սա կը նշանակէ որ տեղ կայ տակաւին «տանձին» տարբեր ձեւով հասնելու, կամ ընդհանրապէս այդ «տանձը» չուտելու տարբերակ...

շատ քաղաքական եղաւ՞...լաւ տեղաւորենք զայն գրականութեան մէջ ու Բնագրի...ես կ'ընդունիմ որ Բնագիրը ազատ բեմ է, ու ճիշդ այդ պատճառով ալ, այսինքն իր ունեցած ազատութեան պատճառով, կարելի է բազմակողմանի առումներով այլախոհութիւնդ, անշուշտ եթէ ունիս, «խաղարկութեան» դնես...բայց հարցը գիտես ու՞ր է ... որքանո՞վ այլախոհ ես դուն ինքդ, կամ ես, կամ Բնագրի միւս անդամները...

չէի սպասեր մանաւանդ քեզմէ, որ դուն այլախոհութիւնը ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ վերագրէիր, կարծեմ դուն էիր յայտարարողը որ կուսաթաղանթիդ ձեռքը կրակը չես ինկած, սա յայտարարութիւնդ այլախոհութիւնդ միթէ չէր ծանուցէ՞, կամ արդեօք չանցնի՞ր անկէ անդին...

Սոնիա Սանան

www.բնագիր.am

Վիոլետ Գրիգորյան
18 ապրիլ 02: 07, ուրբաթ
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Նախքան նամակիս բուն իմաստին անցնելը՝ կողմնակի դիտարկումներ: Այ ժողովուրդ, գրեք ձեր համապատասխան թեմայի տակ, երբեմն անհասկանալի է՝ ինչի մասին եք խոսում: Կարող եք շարքով գրել՝ առանց նախորդներին ջնջելու, պարզապես նշելով, թե ում եք արձագանքում, վերջում էլ գրեք ձեր անուն ազգանունը: Ենթադրում եմ՝ էդպես ավելի հասկանալի կլինի, բայց վստահ չեմ, գուցե ֆորումի կառուցվածքային հնարավորություններն այսքանն են:

Հիմա՝ ըստ էության: Որ էս նոր նամակները կարդացի, մտածեցի գուցե պետք չէ՞ր խառնվել Հրաչի եւ Արփիի՝ միմյանց հանդեպ ռեւերանսներով զրույցներին, պետք չէր միջամտելով խախտել այդ ինտելեկտուալ բանավեճի իդիլլիան: Չէ՞ որ մեկը մյուսով նորարարությունն է «ապացուցում», մյուսը մեկով՝ «միջին սերնդի ինֆանտիլիզմը»: Ինձ այս մտքին հանգեցրեց Հրաչի՝ հարգալից հանդուրժողականության կոչը, որ մի քիչ ուշացած է, եթե իհարկե այն առհասարա՞կ վերաբերելու էր նաեւ Արփիին ու նրա պիտակներին:

Ինձ զարմացրեց իմ խոսքի Հրաչյան մեկնությունը՝ երեխայի բերանը փակող մեծահասակի ձեռքի խստաշունչ պատկերով: Սա նման է եզի տակ հորթ ման գալու: Իր առաջին խոսքում «Բնագրի» վերաբերյալ հո կարծիք չէր հայտնել (որին անհիմն առարկել, բերանը փակել եմ), հարցադրումներ է արել՝«ի՞նչ է սա, ի՞նչ դրդապատճառներ ունի, ի՞նչ ընդհանուր միտումներ», եւ նույնիսկ ինքն է փակագծերում թույլ տվել կասկածել՝ «եթե իհարկե կան նման միտումներ»: Իսկ երբ կարծիք էր հայտնել՝ շեշտելով հասարակարգի փոփոխության դերը գրականության մեջ, ես ավելի շատ իր հետ էի համաձայն, քան Արփիի՝ «սերնդափոխության» վարկածի:

Հարկ չեմ համարել հիմնավորել կարծիքս «Բնագրի» ոչ-նորարարական բնույթի մասին, որովհետեւ առհասարակ ոչ իբրեւ համախմբագիր, ոչ իբրեւ հեղինակ եւ ոչ էլ իբրեւ ընթերցող նորարարության ակնկալիք չեմ ունեցել: Եվ անհասկանալի է նաեւ Արփիի վախը, որ, ամա՛ն-ամա՛ն, վայ թե հանկարծ նորարարական չլինի հանդեսս այս: Իրենք-իրենց հանդեսը նորարարական պիտակում, հետո էլ վախենում են, թե պիտակը չկպավ: Դրա համար է Մարինեն գրել, որ խնդիրը նորարարությունը չէ, այլ«կենդանի տեքստը»: Ես էլ հանդեսը համարել եմ կենդանի, աշխույժ, ազատ գրական տարածք: Ի՞նչն է անհասկանալի այս բնորոշումներից. ազատ է, որովհետեւ չեն գրաքննվում գաղափարներն ու ճաշակը, գումարած՝ չխուզած, չդզած տեքստի նախադեպ ստեղծելով՝ ընդլայնվում են պատկերացումները կարելիի մասին, մեկի ազատությունը մի հարցում կարող է ջարդել մյուսի ներքին արգելքները՝ այլ հարցերում: Ի՞նչ է նշանակում՝ կենդանի տեքստ. տեքստը մեռած է, եթե այն չեն կարդում(Բնագրի վրա խոշոր-խոշոր գրված է՝ ընթերցողի համար), եւ կենդանի է՝ եթե կարդում են: Ով իսկապես ուզում է ճանաչել երեւույթը, կիրաժարվի դեմագոգիայից՝ թե՝ բա ամեն զիբիլ կարող ա կարդա՛ն, բայց եսիմոր գլուխգործոցը չկարդա՛ն, կամ՝ ով է այդ չափանիշ-ընթերցողը: լուխգործոցը, եթե չեն կարդում, մեռած է, բայց նա կարող է վերակենդանանալ՝ հենց որ ԸՆԹԵՐՑՈՂԸ դիպչի նրան:

Իսկ թե ինչ նկատի ունի Հրաչը նորարարություն ասելով՝ մինչեւ չբացատրեր, մտքովս էլ չէր անցնի – ոչ թե «աշխարհում առաջին անգամ», ոչ թե «տարածաշրջանում միակը», «անկախ Հայաստանի պատմության մեջ աննախադեպ», այլ այն «ինչ կարելի է գտնել Բնագրի երրորդ համարում, Արփիի կամ Վահրամի գրություններում» (՞՞՞՞՞!!!!!): Դե իհարկե էս պնդումը մեր պնդումների պես հիմնավորման կարիք չունի, էդ էր պակաս: Ըստ այս տեսակետի՝ անցյալ դարասկզբի ֆորմալիստական «խաղարկումների» մերօրյա յուրաքանչյուր դրսեւորում, այդ սկզբունքներով արված՝ ֆորմաների կիրարկման ամեն մի առանձին նմուշ պետք է նորարարական համարել: Ես կարծում եմ՝ հեղինակները դեմ կլինեին բազմաթիվ «նախադեպեր» ունեցող գավառական նորարարների այս դերին: Նրանք կնախընտրեին անել «տարածաշրջանում միակ» կամ գոնե «անկախ Հայաստանի պատմության մեջ աննախադեպ» բան, կամ էլ՝ իրենց խնդիրը նորարարությունը չեն համարում:

Այսօրվա հիպերտեքստն ու ինտերակտիվ գրություններն էլ վերապահումով կարելի է նորարարական համարել, քանի որ նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով մասսայականացվում է այն, ինչ մտածվել-պատկերացվել- իրագործվել է նախկինում: Հիպերտեքստի նախատիպ-նմուշ է հենց Հրաչի բերած օրինակը՝ Կորտասարի «Դասարանախաղը», Պավիչի հիպերտեքստային վեպերը նախապես միայն տպագիր էին, նոր տեխնոլոգիաները օգնեցին, որ նա իր վեպերը վիրտուալ հիպերտեքստերով հրապարակի, իսկ ինտերակտիվ տեքստը կանխապատկերացրել է Բորխեսը, երբ նկարագրում է, թե ինչպես որեւէ երկի ընթերցում ներառում- ընդգրկում է նախորդ ընթերցում-ընկալումները, Շեքսպիրի «Համլետը» կարդալիս կարդում ես նաեւ շատ ուրիշ ընթերցողների համլետյան ընթերցումը... Նոր տեխնոլոգիաները ոչ այնքան հայտնաբերում են, որքան հեշտացնում:

Հուսով եմ՝ էսօրվա խոսքիս մեջ անհարգալից հնչերանգ չի նկատվի, որովհետեւ որեւէ մեկին անհարգելու պստիկ ցանկություն էլ ա չունեմ, ուղղակի փորձում եմ բանավիճային՝ մի քիչ սուր, մի քիչ սադրող ինտոնացիա պահպանել:

Հ.. Դարձյալ Արփիի զմայլանքը՝ իրեն ճիշտ հասկացող ետխորհրդայի՞ն, ետլենինպապիկայի՞ն նոփ-նոր սերնդի նկատմամբ: Էն որ պապաների փողերով գրաֆիտ արվեստ են անում քաղաքապետարանի արտոնած տեղերի պատերը, նմանակում արեւմուտքի երիտասարդության արտաքինը՝ խորքում լինելով նրանց հակապատկերը... Օրինակ,

www.բնագիր.am

արեւմտյան ջահելների հագուստն իրենց ազատությունն ու անկախությունն է բնութագրում, սրանք նույն հագուստն հագնելով կախված են մնում պապաների գրպաններից ու դասախոսների գնահատականներից: Ու իրենց ողջ էությամբ, հայացքներով ու մտածողությամբ միշտ մնում են արտոնվածի սահմաններում: Այս ա-լա ռոք, ա-լա պանկերին է, իհարկե, Արփին համարում իր սերնդակիցը, ոչ թե սեւ կոժի կուրտկաներով, քուրուախպեր ոտուգլուխ Ալֆրեդի սենյակում քնողներին:

Վիոլետ Գրիգորյան

Հրաչ Բայադյան
18 ապրիլ 11: 16, ուրբաթ
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Ընթերցումի եւ մեկնաբանության ազատությունը կարող ենք ունենալ ամեն դեպքում, սա արդեն ոչ մի հանդեսի մենաշնորհ չէ: Եւ եթե ես Բնագրում տեսնում եմ փորձարարություն եւ ոչ թե կենդանություն եւ ազատություն, ապա դրա, ինչպես նաեւ այդ մասին խոսելու, բանավիճելու իրավունքը ունեմ (եթե զրուցակից գտնվի): Թող դա կոչվի պիտակ կպցնել:

Ինչ վերաբերում է Վիոլետի «սադրող ինտոնացիային»: Ամեն բան լավ կլիներ, եթե այդ «ինտոնացիան» չսնվեր անճշտությամբ եւ չհարուցեր թյուրիմացություններ:

Ինչո՞ւ ինձ վերագրել «միջին սերնդի ինֆանտիլիզմը», եթե այն պարզորոշ կերպով վերաբերում է ոչ թե տարիքին կամ ուրիշ բանի, այլ գրական փորձարարությանը, Վիոլետի գերադասած բառով՝ նորարարությանը: Եթե Վիոլետին հայտնի չէ, ապա պիտի ասեմ, որ ո՛չ Բնագրի ազատ տարածքում, ո՛չ այլուր գրական փորձեր չեմ տպագրել, ուստի ինֆանտիլիզմի թեման վերադարձնում եմ բանավեճի արենա, այն ինձ չի վերաբերում:

Նույնը «նորարարության» առնչությամբ: Ես սկզբից եւեթ բավական հստակ ձեւակերպել եմ, թե ինչ եմ հասկանում փորձարարություն, նորարարություն ասելով. «փորձարկող, խնդրականացնող մոտեցում», կեցվածք: Այնուհետեւ նորից ընդգծել եմ, որ փորձարարությունը ինձ համար չի նշանակում ինչ-որ աշխարհաստեղծ (նոր) արարչություն եւ բերել եմ որոշ օրինակներ: Արժե՞ ուրեմն նորից խաղարկել «նորարարության» հարցը՝ վերստին ինձ վերագրելով մի «նորարարություն», որից ես հստակորեն հրաժարվել եմ:

Հրաչ Բայադյան

Վիոլետ Գրիգորյան
19 ապրիլ 22: 49, շաբաթ
Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ

Չգիտեմ ինչի է Հրաչն ամեն ինչ իր վրա վերցնում, համարում իրեն ուղղված, դա ստիպում է զգուշանալ, մտածում ես՝ ինչ ու ոնց ասես: Չեմ ուզում մանր-մունր բացատրություններով անձնականացնել տեսական զրույցը, բայց Հրաչի նշած թյուրիմացությանը, թե ում է վերաբերում Արփիի մեյդան գցած «ինֆանտիլ միջին սերնուդը»՝ պիտի անդրադառնամ: Իհարկե վերջին անգամ:Եվ պիտակ ասելիս էլ նման ձեւակերպումները նկատի ունեի, որ Արփին առատորեն բաշխում է աջուձախ, տարբեր սերունդներին, մարդկանց ու երեւույթներին՝ լի ու բոլ օգտվելով խորհրդային կլիշեներից, իհարկե իր ասած երիտասարդների պես՝ անգիտակցաբար:

Հրաչի կոչը, որ քննարկումներում հարգալից ու հանդուրժող լինենք միմյանց նկատմաբ, կարծում եմ, առաջին հերթին պիտի վերաբերեր ինֆանտիլ արտահայտությանը: Սակայն նրա տողերի տակի վրդովմունքից պարզվում է, որ դեմ է ոչ թե ինֆանտիլ բառին, այլ դրա՝ ֆորումի մասնակիցներից մեկի՝ իմ ընկալմանը: Բայց չէ՞ որ իր գրածի պես՝ «ընթերցումի եւ մեկնաբանության ազատություն կարող ենք ունենալ»: Եվ հետո, էս ամենից զատ, ֆորումի իմ ողջ տեքստերից, ինչ է, չի՞ երեւում իմ կողմնորոշումը ոչ միայն «ինֆանտիլ»-ի, այլեւ նույնիսկ «սերունդ» բառի հանդեպ:

Պարզապես տրամաբանական եմ համարել, որ ետխորհրդային իրականության գիտակցման անհրաժեշտությունը նշողի՛ն էր ուղղված լինելու «նոր սերնդի» «արտախորհրդային հասունության» դիմադարձումը:

Մեկ էլ զարմացա, որ Հրաչը դեռ զրուցակցի է սպասում: Բա էսքանով, էսքան ժամանակ ի՞նչ ենք անում, չէ՞ որ ամենաշատը իր առաջարկած թեմային ենք անդրադառնում: Ուղղակի նման թեմայով զրույցն ավելի արդյունավետ ու առարկայական է լինում, երբ, իր ու իմ առաջարկածի պես, կոնկրետ գործ կամ հեղինակ է քննարկվում: Մյուս կողմից էլ, քանի որ «Բնագրի» նյութերը հատիկ-հատիկ քննարկել ենք չորեքշաբթի օրերի երես-բերես հանդիպումներին, ֆորումում խոսքն ուրիշ կողմ թեքվեց: Շուտով լույս կտեսնի Բնագիր 4-ը, որն ամբողջությամբ Կարեն Ղարսլյանն է (ինտերնետում արդեն տեղադրված է), քիչ հետո էլ կհրապարակվի Բնագրի 5 –րդ համարը: Այս երկու նոր համարները քննարկման

www.բնագիր.am

կոնկրետ ու առատ նյութեր կտրամադրեն նաեւ ֆորումին: Կրկնում եմ, ընդհանուր միտումներն հայտնաբերելու համար նախ պետք է ճանաչել առանձին միտումները:

Վիոլետ

Արփի Ոսկանյան
18 ապրիլ 16: 34, ուրբաթ
Երեք հարց Արփի Ոսկանյանին

(պատասխան Մարինե Պետրոսյանի ապրիլի 17-ի նամակին)

Սիրելի Մարինե,
հարցերդ իհարկե երեքը չեն, բայց կաշխատեմ երեք պատասխան տալ.

ա) Եթե խոսում եմ կլիշեների օգտագործման դերի մասին, ուրեմն այդ օգտագործումը դիտավորյալ է եւ ունի որոշակի գեղարվեստական նպատակներ: «Ողողված» բառը տեղին է կլիշեների չգիտակցված օգտագործման դեպքում, կա այդպիսի կլիշեներով ողողված «գրականություն»՝ եւ միջին, եւ ավագ, եւ երիտասարդ սերնդի, ինչպես հայերեն, այնպես էլ համոզված եմ այլ լեզուներով, որովհետեւ գրամոլությունը, միջակությունը, ապաշնորհությունը ազգություն ու տարիք չեն հարցնում: Որպեսզի իրար լավ հասկանանք, կբացատրեմ դա «կենդանի» ու «մեռած» տեքստերի քո արած հակադրության վրա. մեռած տեքստը ոչ միայն ողողված է, այլեւ կառուցված է կլիշեների օգնությամբ, կենդանի տեքստում կլիշեները օգտագործվում են դիտավորյալ, նպատակային, որոշակի մեկնաբանությամբ, ինչի լավագույն օրինակ կարող են ծառայել Վիոլետի ու Շեկոյանի ստեղծագործությունները, նման բան դեռ ավելի վաղ արել է Հովհաննես Գրիգորյանը, եւ շարունակում է անել, ավելի հատվածաբար դա նկատելի է նաեւ իմ սերնդակիցների գործերում, այդ թվում եւ իմ, բայց օրինակներ մտաբերելու ընթացքում նկատեցի, որ դրանք ավելի շատ պոեզիայից են, քան արձակից, հնարավոր է՝ պոեզիայի ու արձակի խնդիրների տարբերությունից է, հնարավոր է ուրիշ բանից, այդ մասին դեռ կմտածեմ:

բ, գ) Իսկ հիմա փորձեմ փակել ինֆանտիլիզմի հարցը: Հաստատագրված արժեքներին հակադրվելու, դրանք վերանայելու, արժեզրկելու ձգտումն ու կամքը բնորոշ է անցումային փուլին եւ գալիս է ինքնահաստատվելու անհրաժեշտությունից: Պատահական չի, որ գրականության ու արվեստի պատմության մեջ նորարարները հիմնականում եղել են երիտասարդները, սա ի նկատի ունեի նորարարության երեւույթը սերնդափոխությամբ բացատրելիս, եւ միայն սա: Հեղափոխությունների ժամանակ էլ հիմնական վառոդը եղել են ուսանողներպատանիները (դրա համար էլ Վիոլետը դժգոհում է, որ նոր սերունդը նախագահին է սատարում՝ հեղափոխության հոտ չի գալիս): Երբ հասուն մարդն է ցուցաբերում անցումային փուլի ախտանիշներ, ուրիշ ո՞նց բնորոշես նրան: Կարծեմ Չերչիլն է ասել՝ եթե երիտասնարդ ես ու հեղափոխական չես, ուրեմն սիրտ չունես, եթե տարեց ես ու պահպանողական չես, ուրեմն խելք չունես: Սուր է ասված, բայց ոչ այնքան ճիշտ, որովհետեւ արվեստագետն օրինակ ինքնին ինֆանտիլ է (այդ մասին գրել եմ նաեւ «ռական թերթի» այն հոդվածում, որը քննադատել է Հրաչը), գրելը, նկարելը, քանդակելը, իրականը երեւակայականով փոխարինելը, կյանքկյանք խաղալը (այստեղ կարեւոր է նաեւ պատասխանատվության հարցը) այն դեպքում, երբ շուրջդ ռումբեր են պայթում, մարդիկ են մեռնում, հազարումի բան է տեղի ունենում՝ ընդ որում հավատալով, որ խաղը փոխելու է ինչոր բան, փոխելու է, բա ինֆանտիլիզմ չի՞: Իսկ խորհրդայինին հակադրվելը նշանակում է հակադրվել ոչ թե անցյալին, այլ արժեքային համակարգին, որը վթարային վիճակում, բայց շարունակում է շահագործվել մինչ օրս՝ Խորհրդային Միության փլուզումից ահագին անց, ու դեռ երեւի երկար կշահագործվի (այստեղ Հրաչը ինձ համարյա համոզեց), ու քիչ է մնում հավատամ, որ նոր ու միջին սերունդները պայքարում են միեւնույն բանի դեմ, նույն արժեքային համակարգում միեւնույն փոփոխությունները մտցնելու համար: Մնացածը, Մարինե, տես նախորդ նամակում:

դ)Ինֆանտիլ բառով փաստորեն հաճոյախոսություն եմ արել միջին սերնդին, որի շատ ներկայացուցիչների իսկապես էլ սիրում եմ, մնում է՝ դուք իրար սիրեք կամ գոնե հանդուրժեք միմյանց գոյությունը, որովհետեւ գրականությունը պետք է պաշտպանել պատահական մարդկանցից, գրամոլներից, ապաշնորհներից, անգրագետ գրականագետներից, ոչ թե հաջողության հասած, իրենց ոճը, ձեռագիրը, լեզուն ու ասելիքը բերած գրողներից՝ առաջ բրդելով, տարփողելով «երկու տող գրած, երկու հատ տռած» լավագույն դեպքում սկսնակներին: Դա արդեն նույնիսկ գրական քաղաքականություն չի, ինչպես չափազանց նուրբ արտահայտվել եմ վերեւում, դա արդեն գրական «թայֆայականություն» է, որ չգիտեմ ինչքանով է գավառականության դրսեւորում, բայց որ գրականության հետ կապ չունի՝ հաստատ է: Վերջապես՝գրականությունը թիմերը չեն ստեղծում, այլ անհատները:

Արփի Ոսկանյան

www.բնագիր.am

Մարինե Պետրոսյան
19 ապրիլ 19: 50, շաբաթ
Արփիին

Արփի ջան,

Ճիշտ ես՝ հարցերս երեքը չէին, իմ սխալից հույս ունեմ տուժողներ չեն լինի, այնինչ անզգույշ քնքշությամբ արենա նետված քո մի բառից տեսա՞ր ինչ էղավ: Ճիշտ ես՝ արի էդ բառը էլ չարտասանենք, որովհետեւ արդեն զոհեր կան...

Դու վերեւում ասում էիր՝ «վախ ունեմ, որ «Բնագիրը» իր ողջ «կենդանությամբ ու աշխուժությամբ» իսկապես չի դառնալու նորարարության ասպարեզ, մասնավորապես այն պատճառով, որ ավելի շատ գրական քաղաքականություն է, քան գրականություն»: Իսկ վերջին նամակումդ թայֆայականության մեղադրանք ես ներկայացնում Բնագրին, որ իբրեւ թե զբաղված է սկսնակներին «առաջ բրդելով» եւ գրականությունը «հաջողության հասած, իրենց ոճը, ձեռագիրը, լեզուն ու ասելիքը բերած գրողներից» ... պաշտպանելով: Խիստ յուրօրինակ եզրակացություն է, միայն թե՝ սխալ: Փորձեմ բացատրել, թե ինչու է սխալ:

Այո, Բնագիրը գրական քաղաքականություն վարում է: Գրական հանդեսը գրական քաղաքականություն չվարել չի կարող: Վերցրու ցանկացած գրական պարբերական. եթե քեզ թվում է, թե այն քաղաքականություն չի վարում, ուրեմն նրա քաղաքականությունը ստատուս քվոյի պահպանումն է: Ի դեպ, նույնը կարելի է ասել նաեւ ոչ գրական, բուն՝ քաղաքականության մասին: Քաղաքականությանը չմասնակցել հնարավոր չի, կարելի է միայն գիտակցված մասնակցությունը փոխարինել ակամա մասնակցությամբ: Ինչն էլ, վախենամ, դու արել ես: Եթե դու քվեարկության չես գնում, Մատենադարանը շրջանցում ես, անջատել ես քո հեռուստացույցը եւ թերթ էլ չես կարդում, դա նշանակում է՝ դու պաշտպանում ես Քոչարյանի վարչակարգը... ծաղիկ ռուբոյին ու լֆիկ սամոյին էլ հետը: Բայց էս մասին ես դժվար թե Վահանից լավ ասեմ (հույս ունեմ քեզ ուղղված իր նամակը կարդացել ես), վերադառնամ գրական քաղաքականությանը:

Բնագրի գրական քաղաքականությունը հրաշալի բնութագրեց Վիոլետը. Բնագիրը «ազատ է, որովհետեւ չեն գրաքննվում գաղափարներն ու ճաշակը, գումարած՝ չխուզած, չդգած տեքստի նախադեպ ստեղծելով՝ ընդլայնվում են պատկերացումները կարելիի մասին, մեկի ազատությունը մի հարցում կարող է ջարդել մյուսի ներքին արգելքները՝ այլ հարցերում»: Ուզում եմ, որ ուշադրություն դարձնես նախադասության վերջին մասի վրա՝ մեկի ազատությունը մի հարցում կարող է ջարդել մյուսի ներքին արգելքները՝ այլ հարցերում: Ահա սա է քեզ (եւ ինձ) առաջարկում Բնագիրը՝ ազատության հնարավորություն: Քո նամակներից այն տպավորությունը կարելի է ստանալ, թե դու .. ոնց ասեմ, այնքան էլ ուրախ չես այդ հնարավորության համար:

Այնինչ թվում էր, պետք է ուրախ լինեիր: Գուցե մտածում ես, որ առաջարկվածը մի մեծ բան չի՞, որ դու առանց էդ էլ ամեն տեղ տպվո՞ւմ էիր: Ես էլ էի ամեն տեղ տպվում, բայց առաջարկվածը սկզբունքորեն նոր տարածք է: Բնագրի տարածքը այնքան է յուրահատուկ, ու ես այնքան էի սովոր նախկին «չեզոք» (իսկ իրականում՝ մեռյալ) տարածքներին, որ ինձ սկզբում վատ էի զգում՝ թվում էր, մյուս տեքստերը այնքան են ագրեսիվ--աղմկոտ, որ իմ տեքստերը ճնշվում են (Բնագրի վերջին համարի շնորհանդեսին ես այս մասին խոսել եմ): Հետո հասկացա, որ դա փորձություն է, ու եթե իմ տեքստերը կենսունակ են, պետք ա որ էդ փորձությունից շահած դուրս գան...

Ի՞նչն է քեզ թույլ տալիս եզրակացնելու, որ Բնագիրը զբաղված է սկսնակներին արհեստականորեն, ոնց որ դու ես ասում՝ առաջ բրթելով: Գուցե ա՞յն, որ այստեղ չկա մնացած պարբերականներից քեզ քաջ ծանոթ հիերարխիան՝ երբ հեղինակներին դասավորում են ըստ ավագության ու «գրական ուսադիրների»՝ հստակորեն ցույց տալով նրանց «իրենց տեղը գրականության մեջ»՝ սերժա՞նտ են, լեյտենա՞նտ են դառել, թե արդեն գեներալ են՝ «հաջողության հասած, իրենց ոճը, ձեռագիրը, լեզուն ու ասելիքը բերած»: Թայֆայականության մեջ մեղադրելով Բնագրին, դու ըստ երեւույթին ուզում ես ասել, որ այն զբաղված է գրական ուսադիրների վերաբաշխումով: Մի անհանգստացիր, Արփի, ոչ ոք չի ուզում ինչ-որ մեկի ուսերից աստղերը պոկել, որ կպցնի քո ուսերին: Բնագրում հիերարխիան հանված է՝ սկզբունքորեն: Տարածքներ կան, ուր մտնելիս պետք է հանել կոշիկները: Տարածքներ էլ կան, ուր պետք է հանել պագոնները: Մնացած առումներով՝ մուտքն ազատ է:

Մարինե Պետրոսյան

ՎԹԱՐ!!!

Այսինքն, տեխնիկական թյուրիմացությունների պատճառով Ֆորումի բոլոր նյութերնինտերնետից անհետացան... բայց հետո մասնակիցների հախուռն ջանքերով վերականգնվեցին:

www.բնագիր.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արփի Ոսկանյան
Այստեղ ապրել են 3

Կարինե Գասպարյան
Բանաստեղծություններ 10

Վահան Իշխանյան
այցեքարտ 13

Գևորգ Թումանյան
Բանաստեղծություններ 17

Արմեն ֆօն Գեւորգյան
Դեպք 20
Ձվարճալի դեպք 20
Ինչ մարդ է Սիմոն Սիմոնյանը 20
Սուբյեկտիվ մոտեցում 20

Անահիտ Ադամյան
Բանաստեղծություններ 22

Լևոն Ջավախյան
Ուզում եմ ասեմ՝ խիղճս արթնանա 24

Մարինե Պետրոսյան
Բանաստեղծություններ 26

Միեր Բեյլերյան
Անծանոթը 29
Ատամնացավ 30

Վիոլետ Գրիգորյան
«Նեգրի համբույր» 31

Սամվել Յավրյան
Բանաստեղծություններ 34

Վարդան Ջալոյան
Մտավորականությունը, զանգվածային մշակույթը և սերը 37

Սոնիա-Սանան
Բանաստեղծություններ 41

Կարեն Մխիթարյան
Բոսորագույն մղձավանջներ 45

Անահիտ Հայրապետյան
Բանաստեղծություններ 47

Արման Գրիգորյան
Ռոմանտիզմի անօգտակարությունը 49

Ֆորում *51*